Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# Լուսարար

21-22(414-415)
06.07.2015
Հրատարարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ❁ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ❁ Lusarar

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԼՂՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2014-2015 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի առանձին ստորաբաժանում հանդիսացող կրթության պետական տեսչությունը 2014-2015 ուստարվա ընթացքում ինչպես միշտ, հավատարիմ մնալով իր սկզբունքներին ու վերցրած կուրսին,պարբերաբար, պլանաչափ ու նպատակային աշխատանքներ է իրականացրել «Քաղծառայության մասին» ԼՂՀ օրենքով և քաղծառայողի պաշտոնի անձնագրով սահմանված իրավունքների ու պարտականությունների շրջանակներում, «Կրթության պետական տեսչության մասին» ԼՂՀ օրենքով և տեսչության կանոնադրությամբ ամրագրված՝ տեսչության խնդիրների, նպատակների ու գործառույթների կյանքի կոչման ուղղությամբ:

Սույն հաշվետվությունն ընդգրկում է 2014 թ. հուլիսից մինչև 2015 թ. հունիս ամիսը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Նախորդ ուստարվա հաշվետվությունը կազմվել ու հրատարակվել էր «Լուսարար» պաշտոնաթերթի 2014 թ. հուլիսի 26-ի հ. 21-22-ում: Պետք է ասել, որ հերթական հաշվետու ժամանակահատվածը կատարված աշխատանքների ծավալով ու բազմաբնույթությամբ ոչնչով չի զիջում նախորդներին: Դեռ ավելին՝ 2014 թ. հուլիսի 1-ին քաղծառայողների աշխատավարձերի շոշափելի բարձրացումը դրական խթան հանդիսացավ բոլոր պետական տեսուչների համար «Քաղծառայության մասին» ԼՂՀ օրենքով և քաղծառայողի պաշտոնի անձնագրով սահմանված պարտականությունների կատարման նկատմամբ պատասխանատվության էլ ավելի բարձրացում դրսևորելու, վերադասից ստացված հանձնարարականները անխափան կյանքի կոչելու գործընթացում:

Համոզված կարելի է ասել, որ տեսչության բոլոր անդամները քաջ գիտակցում են իրենց վստահված գործի կարևորությունը, այն է՝ ամեն կերպ նպաստել մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության պատվաբեր գործին, և ջանում են իրենց կարողությունների շրջանակներում անել ամեն հնարավորը՝ ազնիվ անուն ձեռք բերելու, մանկավարժական հանրույթների, իրենց գործընկերների համակրանքին ու հարգանքին արժանանալու համար:

Կրթության պետական տեսչության հաջողությունները ինչ-որ տեղ պայմանավորված են նաև աշխատանքների գիտականորեն ճիշտ ու նպատակային պլանավորմամբ:

Ինչպես միշտ, հաշվետու ժամանակահատվածում տեսչությունը առաջնորդվել է ԼՂՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված գործունեության հստակ ծրագրով՝ կազմված ինչպես տարեկան կտրվածքով, այնպես էլ յուրաքանչյուր ամսվա համար, ինչը ավելի նպատակասլաց է դարձնում մեր աշխատանքը:

Հաշվետու ժամանակահատվածում առանց բացառության իրականացվել են ոչ միայն պլանով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսչական ստուգումները, այլ նաև կյանքի կոչվել մի շարք լրացուցիչ, հատուկ հանձնարարականներ՝ տրված ԼՂՀ ԿԳ նախարարի կողմից:

Տեսչության կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերլուծությունը ընթերցողի դատին կներկայացվի նախորդ հաշվետվության ձևաչափով՝ 3 բաժիններով:

I բաժին. ԿՊ տեսչության պետի ամփոփ տեղեկատվությունը 2014-2015 ուստարում կատարված աշխատանքների մասին և դրանց վերլուծությունը:

II բաժին. 2014-2015 ուստարում ԼՂՀ հանրակրթական դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ամփոփ տեղեկատվությունը՝ հավելվածով, աղյուսակի ձևով:

III բաժին. Ըստ առարկաների պետական տեսուչների կողմից կատարված աշխատանքների վերլուծությունը:

Հաշվետու ժամանակահատվածում տեսչության կազմը համալրվել է մաթեմատիկայի փորձառու մասնագետով. 2014 թ. սեպտեմբերի 1-ից աշխատանքի է ընդունվել ավելի քան 45 տարվա մանկավարժական աշխատանքի փորձով Յուրի Խաչատրյանը՝ քաղծառայողի ժամկետային աշխատանքային պայմանագրով, մինչև մրցույթի անցկացումը: Ե՛վ վերջինս, և՛ նրանից առաջ աշխատանքի ընդունված քաղծառայողներ քիմիայի մասնագետ Վերա Հայրյանը և շախմատի գծով պետական տեսուչ Բեյբուդ Մելքումյանը կարճ ժամանակահատվածում արդարացրել են մեր կանխատեսումները, ինչի մասին խոսք է եղել նախորդ հաշվետվության մեջ:

Տեսչությունը ակտիվորեն մասնակցել է նախարարության կողմից կազմակերպվող հանրապետական բոլոր միջոցառումներին: Խոսքը վերաբերում է «Արիության դաս», «Անկախության դաս», «Տարվա լավագույն տնօրեն», «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթներին, Մայիսյան եռատոնին ու Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված շարադրությունների մրցույթներին և այլ միջոցառումների ու մրցումների անցկացման աշխատանքներին:

Տեսչությունը սերտորեն համագործակցել է նախարարության բոլոր ստորաբաժանումների հետ, առանձնապես ԿԳ՝ վարչության, «Գնահատման ու թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի, ԼՂՀ շրջվարչակազմերի ու Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժինների, ինչպես նաև մանկավարժական հանրույթների հետ:

Տեսչությունը ողջ կազմով, բացի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված պարտականություններից կատարման ուղղությամբ տարվող աշխատանքներից, իրականացրել է նաև այլ բնույթի մեթոդամանկավարժական ու հասարակական գործունեություն:

Պետական տեսուչները կազմել են ԼՂՀ դպրոցականների 2015թ. առարկայական օլիմպիադայի շրջանային փուլի առաջադրանքները, մասնակցել են հանրապետական փուլի աշխատանքների, ԳԹԿ-ի կողմից կազմակերպված ու անցկացված փորձնական քննությունների համար թեստային առաջադրանքների ստուգմանը, պետական ավարտական ու միասնական քննությունների անցկացմանը:

Ժամանակին կազմվել ու նախարարի հաստատմանն են ներկայացվել ԿՊ տեսչության 2015թ. աշխատանքային ծրագրի ու դրա հետ կապված տրանսպորտային ծախսերի մասին հաշվարկների նախագծերը:Արդեն ավարտին են հասցվել կրթության պետական տեսչության բարեփոխումների 2016-2018թթ. միջնաժամկետ ծրագրերի ու համապատասխան տրանսպորտային ծախսերի հաշվարկների կազմման աշխատանքները ու ներկայացվել ֆինանսատնտեսական բաժնին:

Պետական տեսուչներ Աննա Պետրոսյանն ու Կարինե Փաթյանը հաջողությամբ պաշտպանել են գիտական թեզ և արժանացել առաջինը՝ մանկավարժական,երկրորդը՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Ա.Պետրոսյանը մասնակցել է ՀՀ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում կայացած հանրապետական գիտաժողովին. հանդես է եկել «Սակավակազմ դպրոցի հիմնախնդիրները ԼՂՀ-ում» հրատապ թեմայով և արժանացել հավանության:

2014թ. նոյեմբերի 17-21-ը անցկացվել են արդեն ավանդույթ դարձած «Ռուսական խոսքի օրերը Արցախում», որի կազմակերպիչն ու համակարգողն էր պետական տեսուչ, ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ Ռուբեն Օսիպովը:

Պետական տեսուչները սիրով են կատարում վերադասի կողմից տրված ցանկացած հանձնարարական:

Այսպես՝ նախարարի հանձնարարականով տեսչության կողմից Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարանների ավարտական կուրսերի համար 9 առարկաներից կազմվել են քննական թեստեր, տեսչապետն ու ավագ պետական տեսուչները՝ որպես տարածքային հանձնաժողովների նախագահներ, մասնակցել են ուսուցիչների ատեստավորման հերթական փուլի աշխատանքներին:

Մի շարք հասարակական պարտականություններ են դրված տեսչության պետի վրա՝ լիցենզավորման ու հավատագրման, ուսուցիչների տարակարգի շնորհման, ատեստավորման տարածքային և հանրապետական հանձնաժողովների անդամ, ԱրՊՀ և Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի խորհրդի անդամ, «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահ:

Բացի վերը նշված տարաբնույթ աշխատանքներից, հաշվետու ժամանակահատվածում տեսչության հիմնական նպատակը, ինչպես միշտ, «Կրթության պետական տեսչության մասին» օրենքով ու տեսչության կանոնադրությամբ ամրագրված գործառույթներն են, այն է՝ հանրակրթական դպրոցներում, նախադպրոցական հիմնարկներում և արհեստագործական ուսումնարաններում ստուգումների իրականացումը:

Որպես կանոն՝ ստուգումների արդյունքների վերաբերյալ տեսչական հանձնախմբերի կողմից կազմվել են համապատասխան տեղեկանքներ՝ կոնկրետ հանձնարարականներով և առաջարկություններով, ստուգումն ավարտելուց անմիջապես հետո քննարկվել մանկխորհի նիստում: Տեղեկանքների մեկական օրինակը մեքենագրված վիճակում ուղարկվում է համապատասխան կրթության բաժին ու կրթական հաստատություն՝ որպես գործողությունների ծրագիր առաջնորդվելու համար: Անհրաժեշտության դեպքում ստուգումներին մասնակից էինք անում նաև ճանաչված ուսուցիչների հանրակրթական դպրոցներից կամ կրթության բաժիններից, իսկ քննարկումներին իրենց մասնակցությունն են բերել շրջվարչակազմի կրթության ու քաղաքային բաժինների, նախարարության պատասխանատու ընկերներ, մի շարք դեպքերում՝ վարչակազմերի ղեկավարներն ու կրթության և գիտության նախարարը: Վերջինս մասնակցել է Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ, Աշոտ Ղուլյանի անվան հ. 2 և Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցների մանկխորհինների աշխատանքներին: Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ և Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցների ստուգումների արդյունքները լուսաբանվել են «Լուսարար» պաշտոնաթերթի էջերում:

Ստուգումները զուգակցվել են մեթոդամանկավարժական ու մասնագիտական օգնության ցուցաբերմամբ:

Ստորև բերվում են 2014-2015 ուստարում համալիր ու թեմատիկ տեսչավորման ենթարկված կրթական հաստատությունների ցուցակները՝ ըստ վարչատարածքային միավորների.

### *ք. Ստեփանակերտ*

1. «Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի՝ 1, թեմատիկ՝ 2 անգամ/,
2. «Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի՝ 1, թեմատիկ՝ 2 անգամ/,
3. «Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 2 անգամ/,
4. «Ալ. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 2 անգամ/,
5. «Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 2 անգամ/,
6. «Հ. Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 2 անգամ/,
7. «Հ. 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 2 անգամ/,
8. «Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 3 անգամ/,
9. «Հ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոց»ՊՈԱԿ /թեմատիկ՝ 2 անգամ/,
10. «Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 3 անգամ/,
11. «Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 2 անգամ/,
12. «Հ. 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /թեմատիկ՝ 2 անգամ/,
13. ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ մասնագիտացված դպրոցի մասնաճյուղ /թեմատիկ՝ 2 անգամ/,
14. Արհեստագործական ուսումնարան /թեմատիկ՝ 2 անգամ/,
15. «Հ. 1 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ /համակողմանի/:

### *Ասկերանի շրջան*

1. «Ավետարանոցի Իվան Աթայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
2. «Սղնախի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
3. «Խրամորթի «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Վ. Ավանեսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի,/
4. «Հարավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
5. «Աստղաշենի Ժ. Անդրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/:

### *Մարտունու շրջան*

1. «Ծովատեղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
2. «Խերխանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
3. «Բերդաշենի Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
4. «Աշանի Անիթա Հովսեփյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
5. «Նորշենի Լ. Հուրունցի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
6. «Մարտունու Վ. Խաչատրյանի անվան արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ /համակողմանի/,
7. «Ճարտարի հ. 1 մանկապարտեզ» ՊՈԱԿ /համակողմանի/,
8. «Ճարտարի հ. 2 մանկապարտեզ» ՊՈԱԿ /համակողմանի/:

### *Մարտակերտի շրջան*

1. «Քոլատակի միջնակարգ դպրոց և Թբլղվի մասնաճյուղ» ՊՈԱԿ /համակողմանի/,
2. «Մաղավուզի Միեր Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
3. «Մոխրաթաղի Գ. Պողոսյանի անվան անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
4. «Ճանկաթաղի միջնակարգ դպրոց և Ն. Դանիելյանի անվան Վարդաձորի մասնաճյուղ» ՊՈԱԿ /համակողմանի/,
5. «Դրմբոնի Վ. Ջալալյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
6. «Պողոսագոմերի Յու. Առստամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
7. «Հաթերքի Բարմեն Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
8. «Չափարի Ա. Սաղյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/:

### *Հադրութի շրջան*

1. «Տողի Վ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
2. «Ազոխի մանկապարտեզ» /համակողմանի/:

### *Քաշաթաղի շրջան*

1. «Բերձորի Վ. Զատիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
2. «Բերձորի մանկապարտեզ» ՊՈԱԿ /համակողմանի/,
3. «Միջնավանի Գ. Ստարովոյտովայի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
4. «Վանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/:

### *Շուշիի շրջան*

1. «Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
2. «Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
3. «Շուշիի ՄՊՍԿ» ՊՈԱԿ /համակողմանի/:

### *Շահումյանի շրջան*

1. «Քնարավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/,
2. Նոր Խարխափուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ /համակողմանի/:

☞2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԼՂՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2014-2015 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ

1 ☜ Այսպիսով` 2014-2015 ուստարում ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության կողմից համակողմանի տեսչավորման են ենթարկվել 37 կրթական հաստատություններ: Այդ թվում` հանրակրթական դպրոցներ` 31, մանկապարտեզներ` 4, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն` 1, արհեստագործական ուսումնարան` 1: Դրանցից 29-ը /միջնակարգ դպրոց` 21, մասնաճյուղ` 3, արհեստագործական ուսումնարան` 1, մանկապարտեզ` 4/ տեսչավորվել են 2015 թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում:

Արդեն 3-րդ տարին է, ինչ տեսչության կողմից համակողմանի ստուգումների և մեթոդական օգնության ցուցաբերմանը զուգահեռ որակական գնահատականներ են տրվում ստուգման ենթարկված կրթական հաստատությունների ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր, այս կամ այն ուսումնական առարկայի դասավանդման, ինչպես նաև ուսուցանման և ուսումնառության դրվածքներին` ելնելով կրթական ու առարկայական չափորոշիչների պահանջներից: Ի՞նչ է ցույց տալիս ստուգումների արդյունքների վերլուծությունը:

Ամենից առաջ այն, որ ընդհանուր առմամբ նախադպրոցական կրթության ոլորտում բարեփոխումների գործընթացը շատ ավելի արագ է ընթանում, քան հանրակրթության ու նախամասնագիտական կրթության ոլորտում, ինչը մտահոգիչ է:

Չնայած նախարարության կողմից ձեռնարկված բոլոր նախաձեռնություններին ու քայլերին` այնուհանդերձ ուսուցանման և ուսումնառության վիճակը ընդհանուր առմամբ կամ չի գոհացնում կամ էլ մասնակիորեն է բավարարում:

Այսպես` ստուգված դպրոցներից համեմատաբար բարվոք վիճակ կամ նախորդ ստուգումների համեմատությամբ առաջընթաց է արձանագրվել Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ /տնօրեն` Լ. Գևորգյան/, Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական /տնօրեն` Լ. Ասրյան/, Մարտունու շրջանի Բերդաշենի Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ /տնօրեն` Ա. Զարգարյան/, Մարտակերտի շրջանի Հաթերքի Բարմեն Գրիգորյանի անվան միջնակարգ /տնօրեն` Ն. Անտոնյան/, Ասկերանի շրջանի Աստղաշենի Ժան Անդրյանի անվան միջնակարգ /տնօրեն` Ս. Գրիգորյան/, Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական /տնօրեն` Լ. Հարությունյան/, Քաշաթաղի շրջանի Միջնավանի Գ. Ստարովոյտովայի անվան միջնակարգ /տնօրեն` Մ. Սարգսյան/ դպրոցներում:

Մարտունու արհեստագործական ուսումնարանի /տնօրեն` Ռ. Բաբայան/ աշխատանքների ընդհանուր դրվածքը չի գնահատվել տնօրենի նորանշանակ լինելու պատճառով:

Ցածր կամ անբավարար գնահատականի է արժանացել Մարտունու շրջանի Խերխանի /տնօրեն` Վ. Առստամյան/ և Շահումյանի շրջանի Քնարավանի /տնօրեն` Ա. Գևորգյան/ հիմնական դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը:

Մնացած բոլոր ստուգված դպրոցների աշխատանքը գնահատվել է բավարար կամ վերապահումով բավարար:

Հասկանալի է, որ բոլոր գնահատականներն էլ հարաբերական են. հնարավոր չէ ճշգրիտ գնահատականներ տալ մի հաստատության, որը բազմաշերտ է և ունի գործունեության տարբեր ուղղություններ:

Մեր վերլուծությունները ցույց են տվել, որ ուսման որակի ցածր լինելը դպրոցներում պայմանավորված է մի շարք գործոններով: Դրանցից են, օրինակ` սովորողների կողմից ուսումնական առարկաների մեծ մասի նկատմամբ դրսևորած ոչ պատշաճ վերաբերմունքը: Ասել է թե` նրանք սիրով սովորում են 2-3 առարկա, ոչ միայն սովորում, այլև լրացուցիչ պարապում են կրկնուսույցների մոտ` հետապնդելով միայն մի նպատակ` դպրոցն ավարտելուց հետո ընդունվել և ուսումը շարունակել բուհում` մոռացության տալով այն ճշմարտությունը, որ բազմակողմանի զարգացած, կրթված ու դաստիարակված, հասարակությանը պիտանի մարդ դառնալու համար անչափ կարևոր են հանրակրթական ծրագրերով նախատեսված բոլոր առարկաների հիմունքներին կրթական առարկայական չափորոշիչների նվազագույն պահանջներին համապատասխան տիրապետելը: Մյուս կարևոր գործոնը ուսուցիչների մի շոշափելի մասի մոտ մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության մակարդակի ցածր լինելն է: Նման ուսուցիչները չեն կարող աշակերտների մեջ հետաքրքրություն սերմանել դեպի իրենց կողմից ուսուցանվող առարկան: Փորձեմ բերել մի քանի թվեր, փաստեր, օրինակներ, որոնք ասվածի ուղղակի ապացույցն են:

Ցավալի է, բայց իրողություն, որ դպրոց X առարկա հաշվարկով ուստարվա ընթացքում իրականացված 322 թեմատիկ /առարկայական/ ստուգումներից միայն 4-ի /որը կազմում է ընդամենը 1,2 %/ դրվածքն է պետական տեսուչների կողմից գնահատվել «լավ» Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցում ռուսաց լեզու, Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցում հայոց լեզու և գրականություն, Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցում շախմատ և Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում ֆիզկուլտուրա առարկաները:

«Անբավարար» կամ «ցածր» են գնահատվել հայոց լեզվի և գրականության դասավանդման դրվածքը Խերխանի հիմնական դպրոցում /տնօրեն` Վ. Առստամյան/ և Մարտունու արհեստագործական ուսումնարանում /տնօրեն` Ռ. Բաբայան/, մաթեմատիկայի դասավանդման դրվածքը Խերխանի հիմնական դպրոցում, ֆիզիկայի դասավանդման դրվածքը Խրամորթի միջնակարգ դպրոցում /տնօրեն` Ա. Գաբրիելյան/, օտար լեզվի դասավանդման դրվածքը Ասկերանի շրջանի Աստղաշենի միջնակարգ դպրոցում /տնօրեն` Ս. Գրիգորյան/, Մարտակերտի շրջանի Չափարի միջնակարգ դպրոցում /տնօրեն` Ի. Հայրապետյան/, Մարտունու արհեստագործական ուսումնարանում, քիմիայի դասավանդման դրվածքը Ասկերանի շրջանի Սղնախի միջնակարգ դպրոցում /տնօրեն` Գ. Հովսեփյան/, քիմիայի և կենսաբանության դասավանդման դրվածքը Հարավի, Խրամորթի, Մաղավուզի, Վանի, Պողոսագոմերի, Դրմբոնի, Նորշենի միջնակարգ դպրոցներում, ինֆորմատիկայի դասավանդման դրվածքը Ասկերանի շրջանի Ավետարանոցի միջնակարգ, Մարտունու շրջանի Օվատեղի, Խերխանի հիմնական, Շահումյանի շրջանի Քնարավանի հիմնական, Մարտակերտի շրջանի Քոլատակի միջնակարգ դպրոցներում, Ճանկաթաղի միջնակարգ դպրոցի Վարդաձորի մասնաճյուղում: Վարդաձորի մասնաճյուղում ընդհանրապես բոլոր առարկաների դրվածքը ցածր է:

Այսպիսով` 28 առարկայի դրվածքը, որը կազմում է 8,6%, գնահատվել է ցածր կամ անբավարար, իսկ մնացած 290-ը կամ մոտ 90 %` բավարար:

Հանրակրթական դպրոցներում տիրող իրական վիճակի մասին պատկերացում կազմելու համար մեր կողմից կատարվել է մեկ այլ դիտարկում: Որակական գնահատականներ են տրվել նաև դասավանդող ուսուցիչներին` կատարված դասալսումների հիման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ երկու տասնյակ պետական տեսուչների և մասնագետների կողմից ստուգվել է 710 ուսուցիչ` հանրապետության ուսուցչական բանակի մոտ 24 %: Նրանց մոտ լսվել է 3330 դասաժամ, ինչը համարժեք է 20 տնօրենի կամ 14 տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից լսվելիք տարեկան ժամաքանակին: Բնական է` բոլոր լսված ժամերը քննարկվել են ու վերլուծվել ուսուցիչների հետ, տրվել անհրաժեշտ ցուցումներ ու հանձնարարականներ:

Ստուգված 710 մանկավարժներից միայն 101-ի կամ 14,2 %-ի աշխատանքը` նրանց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության աստիճանը պետական տեսուչների կողմից որակվել է որպես «լավ», 6 հոգու կամ 0,85 %-ի աշխատանքը գնահատվել է «անբավարար», 56 հոգու կամ 8 %-ի աշխատանքը չի գնահատվել` սկսնակ կամ ժամանակավոր փոխարինողներ լինելու պատճառով, մնացած 547 ուսուցչի աշխատանքը, որը կազմում է ընդհանուրի 77 %, գնահատվել է «բավարար», որոնց մի մասը, կարելի է ասել, «ձգված» գնահատականներ են:

«Լավ» և «անբավարար» գնահատված ուսուցիչների մասին մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ առարկայական վերլուծություններից /տես հաշվետվության 3-րդ բաժինը/:

Թվերը խոսում են այն մասին, որ դեռևս կան ոչ քիչ թվով դպրոցներ, որոնք կարիք ունեն որակյալ, փորձառու մասնագետների: Վերջին տարիների մեր ուսումնասիրությունները վկայում են, որ կայացած մասնագետների պակասը օրեցօր ավելի է զգացնել տալիս, առանձնապես` մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, երաժշտություն, տեխնոլոգիա, կերպարվեստ առարկաների գծով:

Դա առայժմ նկատելի է գյուղական դպրոցներում: Ստեփանակերտում, շրջկենտրոնների և մի շարք խոշոր դպրոցներում դեռ մասնագետների պակաս չի զգացվում, բայց հնարավոր է` այդ խնդիրը ծառանա նաև վերը նշված դպրոցներում: Դպրոցների տնօրենությունները ստիպված են լինում ուսուցիչների թափուր տեղի համար մրցույթ հայտարարել, իսկ վերջինս չկայանալու դեպքում աշխատանքի ընդունել ոչ մասնագետների կամ թոշակառու ուսուցիչների, ինչը և հանգեցնում է անարդյունավետ աշխատանքի:

Կա մեկ այլ հանգամանք ևս, որը լուրջ խորհելու տեղիք պիտի տա ոչ միայն կրթական համակարգի բոլոր պատասխանատուներին, այլ նաև հասարակության լայն շերտերին, այդ թվում նաև` պետական կառույցներին, բոլոր այն իշխանավորներին, որոնց համար թանկ է մեր վաղվա սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացը:

Առկա խնդրային իրավիճակից դուրս գալու հիմնական դժվարությունն այն է, որ մանկավարժական բուհեր ընդունվում են համեմատաբար թույլ գիտելիքներով շրջանավարտներ: Այս խնդրի լուծման ճանապարհը, ըստ իս, առաջին հերթին ուսուցիչների սոցիալական վիճակի կտրուկ բարելավումն է և սովորողների շրջանում տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ուժեղացումը:

Ինչպես նախորդ տարիներին, այս ուսումնականում նույնպես ԿՊ տեսչության կողմից լուրջ աշխատանքներ են տարվել քաղաքացիների ընդունելության կազմակերպման, նրանց կողմից բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տալու, ինչպես նաև տեսչության հասցեով ստացված գրավոր դիմումները ընթացքավորելու ուղղությամբ:

Գրավոր դիմումների վիճակագրությունը ըստ վարչատարածքների այսպիսին է`

- Քաշաթաղի շրջանից` 5 /Բերձորից` 4, Վարդուտից` 1/,
- Մարտակերտի շրջանից` 4 /Մեծ Շենից` 3, Առաջաձորից` 1/,
- Ասկերանի շրջանից` 2 /Այգեստանից` 1, Ավետարանոցից` 1/,
- Մարտունու շրջանից` 1 /Ճարտարի Ազատամարտիկների անվան հ. 1 դպրոցից/,
- Շահումյանի շրջանից` 1 /Նոր Ղարաչինարից/:

Ստեփանակերտ քաղաքից, Հադրութի և Շուշիի շրջաններից ոչ մի գրավոր դիմում չի ստացվել:

Այսպիսով` գրավոր դիմումների քանակը կազմել է 13, որը 2-ով պակաս է նախորդ ուստարվա դիմումների քանակից: Փաստը խոսում է այն մասին, որ շարունակվում է գրավոր դիմումների քանակի նվազման, ըստ իս, դրական միտումը: Դիմումներից 4-ը հասցեագրված են եղել ԼՂՀ Նախագահին, 1-ը` ԼՂՀ վարչապետին, մնացած 8-ը` ԼՂՀ ԿԳ նախարարին:

Բոլոր դիմումները պահանջվող ժամկետներում ընթացքավորվել են, դիմումների հեղինակներին տրվել սպառիչ ու հիմնավորված պատասխաններ:

Դիմումները ունեին տարբեր բովանդակություն` աշխատանքով ապահովման, տնօրենների կողմից իրականացվող ոչ ճիշտ քաղաքականության կամ վերաբերմունքի, դպրոցական ցանցում փոփոխություն կատարելու վերաբերյալ, աշխատանքում վերականգնվելու խնդրանքով և այլն:

Դիմում-բողոքների թվի տարեցտարի նվազումը խոսում է մանկավարժական հանրույթներում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման մասին, ինչը վկայում են տեսչական հանձնախմբերի եզրակացությունները:

Տեսչությունը, անչափ կարևորելով մանկավարժական աշխատողների տարիֆավորման ցուցակների` որպես կարևորագույն ֆինանսական միջոցների ճիշտ կազմումը, ամեն տարեսկզբի ստուգում է բոլոր հանրակրթական դպրոցների և արհեստագործական ուսումնարանների, ինչպես նաև Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի տարիֆավորման ցուցակները, ինչը, ինչպես ցույց է տալիս փորձը, նվազագույնի է հասցնում ֆինանսական միջոցների անտեղի վատնումը: Հաշվետու ժամանակահատվածում միայն մեկ խախտում է վեր հանվել Մարտունու շրջանի Նորշենի միջնակարգ դպրոցում /տնօրեն` Ս. Աբրահամյան/: Պարզվել է, որ դպրոցը ֆիզիկայի-քիմիայի բավարար կահավորվածությամբ կաբինետ չունի, բայց պահում է լրիվ հաստիքով լաբորանտ: Խախտումը արձանագրելու պահից` 2015 թ. ապրիլի 1-ից, լաբորանտի հաստիքը կրճատվել է:

Պարբերաբար իրականացնելով արտաքին տարաբնույթ տեսչական ստուգումներ` մենք անչափ կարևորում ենք տնօրենությունների կողմից իրականացվող ներքին ստուգումների դերը, ինչի վրա սևեռում ենք դպրոցների ղեկավարների ուշադրությունը: Առանց ներքին ստուգումների, լինի համակողմանի թե թեմատիկ, հնարավոր չէ իրականացնել լիարժեք ներդպրոցական վերահսկողություն: Գաղտնիք չէ, որ ներդպրոցական վերահսկողությունը անհնար է պատկերացնել առանց պարբերաբար, պլանաչափ իրականացվող դասալսումների: Վերջին հանգամանքը խիստ կարևորվում է նաև ուսուցչի ատեստավորման կարգի պահանջների ճիշտ կատարումը ապահովելու գործում:

Ահա թե ինչու վերջին տարիներին տեսչությունը պարբերաբար ստուգում է դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների քանակն ու գրառումների որակը և հրատարակում նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթում` որպես հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքների բաղկացուցիչ մաս:

Ուսումնական տարվա ավարտից հետո մեր կողմից ստուգվել են հանրապետությունում գործող 216 հանրակրթական դպրոցների 501 ղեկավարների /նախորդ տարվա 490-ի փոխարեն/ կողմից լսված դասերի քանակն ու որակը /տես աղյուսակը/:

Վերլուծելով աղյուսակը և այն համեմատելով նախորդ ուստարիների ցուցակների հետ` դժվար չէ նկատել, որ դրական տեղաշարժերն ակնհայտ են, բայց քիչ չեն նաև այն ղեկավարները, որոնք լուրջ չեն վերաբերվում այդ կարևոր աշխատանքին: Բացթողումների մասին մանրամասն ասվում է կրթության բաժինների պատասխանատուներին, որոնք պարտավոր են այդ մասին հաղորդել դպրոցների ղեկավարներին:

Հիմնական բացթողումների թվին կարելի է դասել նախարարի կողմից իջեցված պլանի թերակատարումը, դասալսումների անպլանայնությունը, գրառումները ոչ գրագետ, անփույթ, ոչ ընթեռնելի ձեռագրով գրելը, հիմնական բաժինների` դասալսման նպատակի, դիտողությունների, առաջարկությունների և եզրակացությունների չլրացումը և այլն: Այդ փաստերը վկայում են, որ ձևականությունների բացառման ուղղությամբ լուրջ մոտեցում չի ցուցաբերվել:

Չնայած նախորդ հաշվետվության մեջ կոչ ենք արել բոլոր դպրոցների ղեկավարներին` աշխատել ոչ թե դասալսումների պահանջվող քանակը ապահովելու և վերադաս մարմիններին ցույց տալու համար, այլ խղճի մտոք` ի շահ մեր երեխաների կրթության ու դաստիարակության սուրբ գործի, այնուհանդերձ, ստուգումը ցույց է տվել, որ դեռևս կան պաշտոնյաներ, որոնք լուրջ չեն վերաբերվում իրենց պաշտոնեական պարտականությունների կատարմանը, իսկ մի մասը ընդհանրապես չի ներկայացրել դասալսումները`բերելով տարբեր չհիմնավորված պատճառաբանություններ:

Նրանցից են` Մարտակերտի շրջանի Չլդրանի միջնակարգ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Սամվել Ղուկասյանը, Քաշաթաղի շրջանի Գանձայի միջնակարգ դպրոցի տնօրեն Հովհաննես Հովհաննիսյանը, Կերենի միջնակարգ դպրոցի տնօրեն Վալեր Թումանյանը, Բերձորի Վ. Զատիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցի սկսնակ տնօրեն Համբարձում Արզանյանը: Վերջինս ոչ միայն չի ներկայացրել, այլ նաև կտրուկ հրաժարվել է նման պահանջը կատարելուց` հայտարարելով, որ ոչ ոք իրավունք չունի ստուգելու իր դասալսումների գրառումների տետրը: Ակամայից հարց է առաջանում. մի՞թե նման մարդկանց կարելի է վստահել մոտ 200 հոգուց բաղկացած մանկավարժական և աշակերտական հանրույթների ճակատագիրը: Մեր` որպես տեսչապետի, վերաբերմունքը նման անպատասխանատու մարդկանց նկատմամբ միանգամայն պարզ է.նման մարդիկ պետք է պատժվեն խստագույն ձևով, ընդուպ մինչև` զբաղեցրած պաշտոնից ազատումը:

Մանրամասն ուսումնասիրելով աղյուսակը` դժվար չէ տեսնել, որ որոշ ղեկավարներ պարզապես մատների արանքով են կատարել իրենց իսկ գործը: Նրանց թվում են` Մարտունու շրջանի Ջիվանիի հիմնական դպրոցի ուսգծով տնօրենի տեղակալ Սլավիկ Գրիգորյանը, Հադրութի շրջանի Ուխտաձորի միջնակարգ դպրոցի ուսգծով տնօրենի տեղակալ Ասյա Ամիրջանյանը, Հակակվի հիմնական դպրոցի ուսգծով տնօրենի տեղակալ Նարինե Խաչյանը, նրան փոխարինող Սպարտակ Գրիգորյանը, Մարտակերտի շրջանի Կուսապատի միջնակարգ դպրոցի տնօրենի տեղակալ Լալա Խաչատրյանը, Նոր Այգեստանի միջնակարգ դպրոցի ՄԿԱԳ տնօրենի տեղակալ Արմինե Նազարյանը, Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտի միջնակարգ դպրոցի տնօրեն Վալերի Ռաթևոսյանը, Ծոբաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն Հարութ Մկրտչյանը և ուրիշներ:

Մնացած շրջանների և Ստեփանակերտի դպրոցների ղեկավարների կողմից նման լուրջ բացթողումներ վեր չեն հանվել: Դեռ ավելին` Ասկերանի, Շահումյանի և Շուշիի շրջաններում առավել տեսանելի են դրական տեղաշարժերը:

Դասալսումների աղյուսակի առավել մանրամասն վերլուծությունը թողնվում է Ստեփանակերտի քաղաքապետարանի և շրջվարչակազմերի կրթության բաժինների պատասխանատուներին:

Հաշվետու ժամանակահատվածում ԿՊ տեսչության կողմից կատարված աշխատանքների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար «Լուսարար»-ում զետեղվել են նաև 2014-2015 ուստարում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների հիման վրա պետական տեսուչների կատարած մասնագիտական վերլուծությունները` ըստ առարկաների:

Տեսչության հերթական հաշվետվությունը ուզում եմ ավարտել հետևյալ պարբերությամբ:

Նման և այլ բնույթի ստուգումներ ու վերլուծություններ կատարելով` տեսչությունը նպատակ ունի ամեն մի ղեկավարի, պատասխանատու մարմնի գիտակցությանը հասցնել այն պարզ ճշմարտությունը, որ ամեն մի գործ, աշխատանք, առավել ևս` պարտականություն, պետք է կատարել սիրով ու նվիրումով, այլ ոչ թե հարկադրաբար կամ որպես վերադասից ստացված հանձնարարական, հակառակ պարագայում ցանկացած աշխատանք կվերածվի ինչ-որ ինքնանպատակ գործունեության:

Սպասում ենք ձեր առողջ քննադատությանն ու առաջարկություններին:

**Սոս ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**
**ԼՂՀ ԿԳ նախարարության**
**կրթության պետական տեսչության պետ,**
**ԼՂՀ վաստակավոր մանկավարժ**

ՏԵՍՉԱԿԱՆ

# ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2014-2015 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| հ հ | Ղեկավարի անունը, ազգանունը, հայրանունը | Պաշտոնը, մասնագիտությունը | Դպրոցը | Դաս. կոմպ. քան. | 2014-2015 ուստարում լսած | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ժամերի քանակը | Դասա-լսում. որակը | Պահի կատ-ն %-ը |
| | **ք. Ստեփանակերտ** | | | | | | |
| 1. | Դադայան Ռոմելա Նիկոլայի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Խ.Աբովյանի անվան հ. 1 հ/դ | 45 | 175 | լավ | 103 |
| 2. | Բալայան Ժաննա Արշավիրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /ռուսաց լեզու և գրակ./ | | | 250 | լավ | 100 |
| 3. | Ավանեսյան Լենա Հենրիխի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 4. | Գաբրիելյան Անահիտ Սաքսիմի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5հաստիք,մեթոդիկա/ | | | 125 | լավ | 100 |
| 5. | Ղազարյան Լենա Հայկի | ՄԿԱԳՏՏ/ֆիզիկա/ | | | 63 | լավ | 100 |
| 6. | Մարտիրոսյան Լաուրա Աշոտի | տնօրեն /պատմություն/ | Ա.Պուլյանի անվ. հ. 2 հ/դ | 31 | 180 | լավ | 106 |
| 7. | Բեգլարյան Նունե Ռուբենի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 282 | լավ | 113 |
| 8. | Իշխանյան Կարինե Սամվելի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրականություն/ | | | 250 | լավ | 100 |
| 9. | Աբրահամյան Կարինե Վալերիկի | ՄԿԱԳՏՏ /ռուսաց լեզու/ | | | 70 | լավ | 100 |
| 10. | Հովհաննիսյան Լյուդմիլա Անդրանիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ա. Գրիբոյեդովի անվ. հ. 3 մ/դ | 21 | 170 | լավ | 100 |
| 11. | Դավթյան Վալենտինա Առուստամի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 12. | Ալեքսանյան Էլեոնորա Ալեքսանդրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 250 | լավ | 92 |
| 13. | Գրիգորյան Մարինե Միքայելի | ՄԿԱԳՏՏ /մեթոդիկա/ | | | 65 | լավ | 100 |
| 14. | Մինասյան Արլենա Արմենի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Մ. Մաշտոցի անվ. հ. 4 հ/դ | 9 | 170 | լավ | 100 |
| 15. | Թամրազյան Նելլի Միքայելի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5 հ., պատմություն/ | | | 125 | լավ | 100 |
| 16 | Ղազարյան Վանիկ Սերգեյի | տնօրեն /ֆիզիկա/ | Հ. Բալասանյանի անվ. հ. 5 հ/դ | 17 | 170 | լավ | 100 |
| 17 | Ներսիսյան Ռենա Ջհանգիրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 250 | լավ | 100 |
| 18 | Խաչատրյան Մարինե Վլադիմիրի | ՄԿԱԳՏՏ /քիմիա/ | | | 60 | լավ | 100 |
| 19 | Դանիելյան Վիլեն Միքայելի | տնօրեն /մաթեմատիկա/ | հ. 6 հ/դ | 13 | 175 | լավ | 100 |
| 20 | Ստեփանյան Սուսաննա Կառլենի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 250 | լավ | 100 |
| 21 | Աբրահամյան Նաիրա Սամվելի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա/ | | | 60 | լավ | 100 |
| 22 | Պողոսյան Անահիտ Իվանի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Ե. Չարենցի անվ. հ. 7 հ/դ | 48 | 170 | լավ | 100 |
| 23 | Շաքարյան Լյուդմիլա Ռաֆիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա/ | | | 250 | լավ | 100 |
| 24 | Մինասյան Իրինա Արմենի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 25 | Ինանց Էմմա Հովհաննեսի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5 հ., մեթոդիկա/ | | | 125 | լավ | 100 |
| 26 | Գրիգորյան Ժաննա Գրիգորիի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա/ | | | 85 | լավ | 100 |
| 27 | Գևորգյան Լյովա Սամվելի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ա. Սախարովի անվ. հ. 8 ավագ դպրոց | 23 | 140 | լավ | 82 |
| 28 | Ներսիսյան Լիանա Դրաստամատի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 252 | լավ | 100 |
| 29 | Մեսրոբյան Զարինե Հրաչիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /ֆիզիկա/ | | | 120 | լավ | 96 |
| 30 | Օսիպովա Իրինա Հրանտի | ՄԿԱԳՏՏ /ֆիզիկա/ | | | 60 | լավ | 100 |
| 31 | Անտոնյան Արթուր Բաբկենի | տնօրեն /մաթեմատիկա/ | Հ. Թումանյանի անվ. հ. 9 հ/դ | 20 | 165 | լավ | 97 |
| 32 | Համբարձումյան Նունե Բորիսի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 190 | լավ | 76 |
| 33 | Հայրապետյան Արմինե Պոբեդիկի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ./ | | | 60 | լավ | 100 |
| 34 | Դանիելյան Սերգեյ Ռուբենի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ա. Իսահակյանի անվ. հ. 10 հ/դ | 31 | 170 | լավ | 100 |
| 35 | Հակոբյան Անահիտ Անդրանիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /պատմություն/ | | | 250 | լավ | 100 |
| 36 | Հովսեփյան Զաիրա Պողոսի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 հ., հայոց լեզու և գրակ./ | | | 225 | լավ | 90 |
| 37 | Սարգսյան Անահիտ Համլետի | ՄԿԱԳՏՏ /պատմություն/ | | | 64 | լավ | 100 |
| 38 | Գրիգորյան Ահդա Ապրեսի | տնօրեն /պատմություն/ | Վ. Ջհանգիրյանի անվ. հ. 11 ավագ դպրոց | 27 | 160 | լավ | 94 |
| 39 | Վիրաբյան Մարինա Սերգեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5 հ., ռուսաց լեզու և գրակ./ | | | 129 | բավ | 100 |
| 40 | Գյացունց Գեղանուշ Ածատուրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /կենսաբանություն/ | | | 235 | լավ | 94 |
| 41 | Գրիգորյան Ծովինար Զինավուրի | ՄԿԱԳՏՏ /ֆիզիկա/ | | | 65 | լավ | 100 |
| 42 | Գաբրիելյան Էլմիրա Անդրանիկի | տնօրեն /ֆիզիկա/ | հ. 12 հ/դ | 9 | 181 | լավ | 105 |
| 43 | Բաղդասարյան Ավինա Սերգեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5հ., անգլերեն/ | | | 125 | լավ | 100 |
| 44 | Ներսիսյան Սուսաննա Գուրգենի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ֆիզմաթ | 12 | 170 | լավ | 100 |
| 45 | Արզումանյան Սուսաննա Արկադիի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 235 | բավ | 95 |
| 46 | Մկրտչյան Սուսաննա Կառլենի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրականություն/ | | | 55 | բավ | 92 |
| | **Հադրութի շրջան** | | | | | | |
| 1 | Մինասյան Արթուր Արսենի | տնօրեն /աշխարհագրություն/ | Հադրութի Մ. Սամվելյանի անվ. մ/դ | 25 | 170 | լավ | 100 |
| 2 | Դավթյան Ահդա Ալեքսեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 3 | Գասպարյան Ջեմմա Լևոնի | ուս. գծով տնօրենի տեղակալ/0,5 հ., մեթոդիկա/ | | | 125 | լավ | 100 |
| 4 | Գրիգորյան Գայանե Միքայելի | ՄԿԱԳՏՏ /ռուսաց լեզու/ | | | 76 | բավ | 100 |
| 5 | Ավետիսյան Ռուզաննա Աուզայի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Մեծ Թաղերի Խուդյակովի անվ. մ/դ | 13 | 175 | լավ | 103 |
| 6 | Լալայան Իրա Գրիշայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /աշխարհագրություն/ | | | 200 | լավ | 80 |
| 7 | Դանիելյան Սվետա Վաչիկի | ՄԿԱԳՏՏ /քիմիա և կենսաբանություն/ | | | 60 | լավ | 100 |
| 8 | Պողոսյան Իլյաս Սերգեյի | տնօրեն /ֆիզիկա/ | Ազոխի մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 9 | Պետրոսյան Նվարդ Էլդարի | ուս. գծով տնօրենի տեղակալ/մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 10 | Գևորգյան Գևորգ Արթինի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա/ | | | 60 | բավ | 100 |
| 11 | Դաիդյան Վլադիկ Պետրոսի | տնօրեն /ֆիզիկա/ | Տողի Վ. Գրիգորյանի անվ.մ/դ | 12 | 170 | բավ | 100 |
| 12 | Ստեփանյան Քաջերիկ Միքայելի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն/ | | | 250 | լավ | 100 |
| 13 | Ավետիսյան Գրիգորի Էռնեստի | ՄԿԱԳՏՏ / ՆԶՊ և ֆիզկուլտուրա/ | | | 30 | բավ | 100 |
| 14 | Ավագյան Լյուդմիլա Արտաշի | տնօրեն /քիմիա և կենսաբանություն/ | Տումու Ս. Աբրահամյանի անվ. մ/դ | 12 | 174 | լավ | 102 |
| 15 | Ստեփանյան Լյուդվիկ Գուրգենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/պատմություն/ | | | 250 | բավ | 100 |
| 16 | Սաֆյան Անուշ Կամոյի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ./ | | | 65 | բավ | 100 |
| 17 | Արզումանյան Արթուր Սամսոնի | տնօրեն /ֆիզիկա/ | Ուխտաձորի Ա. Մկրտչյանի անվ. մ/դ | 10 | 130 | բավ | 77 |
| 18 | Ամիրջանյան Ասյա Սուրենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 125 | անբավ | 100 |
| 19 | Ստեփանյան Սլավիկ Գաչայի | տնօրեն /մաթեմատիկա/ | Դրախտիկի Վ. Բաղդասարյանի անվ. մ/դ | 11 | 170 | լավ | 100 |
| 20 | Ղուլյան Սուսաննա Ալեքսեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն/ | | | 250 | լավ | 100 |
| 21 | Գևորգյան Վրեժ Հայասերի | ՄԿԱԳՏՏ /ինֆորմատիկա/ | | | 30 | բավ | 100 |
| 22 | Ասրյան Լիրա Ածատուրի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ակնաղբյուրի Վ. Ամիրջանյանի անվ. մ/դ | 9 | 170 | լավ | 100 |
| 23 | Բալայան Սուսաննա Ռոբերտի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 122 | բավ | 98 |
| 24 | Հարությունյան Գայանե Գարիկի | ՄԿԱԳՏՏ /քիմիա և կենսաբանություն, 0,5 հ./ | | | 27 | լավ | 90 |
| 25 | Խաչատրյան Միքայել Յուրիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Սարիամաձորի Ն. Սաֆյանի անվ. մ/դ | 10 | 170 | բավ | 100 |
| 26 | Գրիգորյան Սվետլանա Միքայելի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրակ., 0,5 հ./ | | | 125 | լավ | 100 |
| 27 | Արզումանյան Նազելի Յաշայի | ՄԿԱԳՏՏ /քիմիա և կենսաբ., 0,5 հ./ | | | 35 | լավ | 100 |
| 28 | Ներսիսյան Լևոն Գուրգենի | տնօրեն /մաթեմատիկա/ | Թաղոտի միջն. դպրոց | 7 | 170 | լավ | 100 |
| 29 | Ղուկասյան Էդիկ Արտաշի | ուս. գծով տնօրենի տեղակալ/պատմություն, 0,5 հաստիք/ | | | 125 | լավ | 100 |
| 30 | Ներսիսյան Բորիս Գուրգենի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա, 0,5 հ./ | | | 30 | լավ | 100 |
| 31 | Ամիրջանյան Բորիկ Գուրգենի | տնօրեն /պատմություն/ | Առաքելի Ս. Սեյրանյանի անվ. մ/դ | 8 | 137 | բավ | 81 |
| 32 | Համբարձումյան Արևիկ Սերգեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 114 | լավ | 91 |
| 33 | Գասպարյան Էլինա Անդրեյի | ՄԿԱԳՏՏ /ռուսաց լեզու, 0,5 հ./ | | | 34 | լավ | 100 |
| 34 | Սահակյան Ռիզո Սահակի | տնօրեն /դասվար, 0,5 հ./ | Ծամձորի մասնաճյուղ | 3 | 40 | բավ | 50 |
| 35 | Հայրապետյան Կայծեր Սերգեյի | տնօրեն /աշխարհագրություն/ | Ջրակուսի մ/դ | 9 | 162 | լավ | 95 |
| 36 | Բաբայան Նունե Գեորգիի | ուս. գծով տնօրենի տեղակալ/աշխարհագրություն, 0,5 հ./ | | | 121 | լավ | 97 |
| 37 | Իշխանյան Կարինե Բորիկի | ՄԿԱԳՏՏ /մեթոդիկա, 0,5 հ./ | | | 30 | բավ | 100 |
| 38 | Ստեփանյան Լավրենտ Գուրգենի | տնօրեն /մեթոդիկա/ | Սոխրենեսի մ/դ | 7 | 170 | բավ | 100 |
| 39 | Պետրոսյան Նատաշա Շաքրոյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրակ., 0,5 հ./ | | | 125 | բավ | 100 |
| 40 | Պողոսյան Ահդա Արտաշեսի | ՄԿԱԳՏՏ /մեթոդիկա, 0,5 հ./ | | | 30 | բավ | 100 |
| 41 | Սեյան Նովելա Հովսեփի | տնօրեն/հայոց լեզու և գրակ./ | Թաղասերի հ/դ | 9 | 170 | լավ | 100 |
| 42 | Ֆանունց Կարինա Սուրենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրակ., 0,5 հ./ | | | 126 | լավ | 100 |
| 43 | Անդրյան Ինգա | ՄԿԱԳՏՏ /դասվար/ | | | 30 | բավ | 100 |
| 44 | Դավթյան Կարինե Ալեքսեյի | տնօրեն /դասվար, 0.5 հ./ | Կարմրակուճի մասնաճյուղ | 2 | 80 | լավ | 47 |
| 45 | Ավանեսյան Արթուր Արտավազդի | տնօրեն /պատմություն/ | Այգեստանի հ/դ | 7 | 152 | լավ | 89 |
| 46 | Անդրյան Էլզա Ալեքսեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 125 | բավ | 100 |
| 47 | Պողոսյան Անահիտ Սամվելի | ՄԿԱԳՏՏ /մեթոդիկա, 0.5 հ./ | | | 30 | բավ | 100 |
| 48 | Հայրապետյան Վարսիկ Բորիսի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Խծաբերդի Վ. Գրիգորյանի անվ. հ/դ | 6 | 132 | բավ | 78 |
| 49 | Աբաղյան Մարինե Բորիկի | տնօրեն /մեթոդիկա/ | Հին Թաղերի հ/դ | 3 | 170 | բավ | 100 |
| 50 | Այվազյան Արարատ Ավետիսի | տնօրեն /մաթեմատիկա/ | Խանձաձորի Հ. Այվազյանի անվ. հ/դ | 6 | 100 | լավ | 60 |
| 51 | Հայրապետյան Զարինե Միքայելի | տնօրեն /մեթոդիկա, 0,5 հ./ | Հակավանի մասնաճյուղ | 3 | 70 | բավ | 40 |
| 52 | Առաքելյան Նուշիկ Խորենի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Բանաձորի հ/դ | 6 | 183 | լավ | 108 |
| 53 | Հայրյան Նունե Արմիկի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Հակակուի հ/դ | 8 | 170 | բավ | 100 |
| 54 | Խաչյան Նարինե Ալեքսանդրի<br>Բալայան Սպարտակ Գրիգորիի | ուս. գծով տնօրենի տեղակալ/քիմիա և կենսաբանություն/<br>/ռուսաց լեզու, փոխ./, 0,5 հ. | | | 105 | ցածր | 84 |
| 55 | Մկրտչյան Կարինե Թարխանի | տնօրեն /մաթեմատիկա/ | Առաջամուղի հ/դ | 10 | 165 | լավ | 97 |
| 56 | Հովհաննիսյան Իրինա Էդիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ/մաթեմատիկա, 0,5 հ./ | | | 107 | բավ | 86 |
| 57 | Բեջանյան Նելլի Դարիբի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ., 0,5 հ./ | | | 32 | լավ | 100 |
| 58 | Բաղալյան Արևիկ Լևոնի | տնօրեն /մաթեմատիկա, ֆիզիկա/ | Արևշատի հ/դ | 8 | 170 | լավ | 100 |
| 59 | Ալթունյան Լուսինե Յուրայի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 125 | լավ | 100 |
| 60 | Պողոսյան Արման Վլադիկի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Քուրաթաղի Գ. Գասպարյանի անվ. հ/դ | 11 | 170 | լավ | 100 |
| 61 | Պողոսյան Արարատ Զարմիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ/ֆիզիկա/ | | | 242 | բավ | 98 |
| 62 | Ղազարյան Մերինե Հենրիկի | տնօրեն /կենսաբանություն/ | Նորաշենի հ/դ | 4 | 170 | լավ | 100 |
| 63 | Շահյան Նվարդ Ռուբենի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Վարդաշատի հ/դ | 5 | 170 | բավ | 100 |
| 64 | Գասպարյան Մարգարիտա Յուրիի | տնօրեն /ֆիզիկա, 0,5 հ./ | Վանքի մասնաճյուղ | 2 | 80 | բավ | 100 |
| 65 | Հակոբյան Սուսաննա | տնօրեն /դասվար, 0,5 հ./ | Ծակուռու մասնաճյուղ | 2 | 80 | բավ | 100 |

## ՏԵՍՉԱԿԱՆ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Ալլահվերդյան Ռուզաննա Նելսոնի | տնօրեն | Նոր Ղարաջինարի մ/դ | 6 | 161 | լավ | 95 |
| 8 | Արզումանյան Նարինե Յուրիի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Նոր Բրաջուրի Մ-Ս Էրումյանների անվ. մ/դ | 8 | 125 | բավ | 74 |
| 9 | Սարգսյան Նելլի Գրիշայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 111 | բավ | 90 |
| 10 | Գրիգորյան Կարինե Վարիստի | ՄԿԱԳՏՏ /0.5 h., անգլերեն/ | | | 28 | բավ | 93 |
| 11 | Հարությունյան Ռուզաննա Թեմուրի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Նոր Սանաշիդի Հ. Վարդանյանի անվ. h/դ | 7 | 170 | լավ | 100 |
| 12 | Վարդանյան Աստղիկ Դավիթի | ուս. գծով տնօրենի տեղակալ 0.5 /մինչև 15.01.15 թ./ | | | 70 | լավ | 110 |
| 13 | Մարգարյան Շահեն Լյուդվիկի | տնօրեն /ֆիզիկա/ | Նոր Վերինշենի Ջալալ Զլավյանի անվ. մ/դ | 11 | 170 | բավ | 100 |
| 14 | Քրիսյան Նաիրա Մարտինի | ուս. գծով տնօրենի տեղակալ /պատմություն/ | | | 250 | բավ | 100 |
| 15 | Միրզախանյան Արմինե Համլետի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ./ | | | 60 | բավ | 100 |
| 16 | Սիմոնյան Սևադա Սպարտակի | տնօրեն /ֆիզկուլտուրա/ | Ծարի h/դ | 2 | 47 | բավ | 28 |
| 17 | Գևորգյան Անուշ Ռազմիկի | տնօրեն /դասվար/ | Քնարավանի h/դ | 5 | 131 | բավ | 77 |
| 18 | Ղուկասյան Արեգնազան Գուրգենի | տնօրեն /կենսաբանություն/ | Քարվաճառի Վ. Սարոյանի անվ. մ/դ | 12 | 170 | բավ | 100 |
| 19 | Սաղյան Գայանե Ռուբիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /աշխարհագրություն/ | | | 160 | բավ | 65 |
| 20 | Նալբանդյան Անուշ Դավիթի | ՄԿԱԳՏՏ /քիմիա/ | | | 32 | բավ | 50 |
| 21 | Սարգսյան Ժորիկ Անդրանիկի | տնօրեն /ֆիզկուլտուրա/ | Եղեգնուտի Պ. Ղևոնդյանի /Պետո/ անվ. մ/դ | 9 | 142 | բավ | 84 |
| 22 | Դանիելյան Հերմինե Ժորիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 h., քիմիա, կենսաբան./ | | | 135 | լավ | 110 |
| 23 | Մովսիսյան Սիլվա Հրաչի | ՄԿԱԳՏՏ /0.5 h., պատմություն/ | | | 50 | բավ | 100 |
| 24 | Հարությունյան Էդմոնդ Միշայի | տնօրեն /աստվածաբան/ | Հավսաթաղի h/դ | 5 | 126 | բավ | 74 |
| 25 | Պողոսյան Մելանյա Սամվելի | տնօրեն /ֆրանսերեն/ | Ջուարի Ն. Դանիելյանի անվ. մ/դ | 3 | 205 | լավ | 120 |
| 26 | Վարդանյան Ալվարդ Ռազմիկի<br>Հարությունյան Թագուհի Ռաֆիկի | հին տնօրեն /մաթեմատիկա/<br>նոր տնօրեն /անգլերեն, 1.02.2015 թ./ | Նոր Խարխափուտի h/դ | 5 | 28<br>60 | բավ | 80 |
| 27 | Կիրակոսյան Մովսես Վարդգեսի | տնօրեն /մաթեմատիկա/ | Դադիվանքի Ա. Արմենակյանի անվ. մ/դ | 5 | 175 | լավ | 103 |
| 28 | Գևորգյան Դավիթ Միքայելի | տնօրեն /պատմություն/ | Նոր Գետաշենի մ/դ | 7 | 155 | բավ | 94 |
| 29 | Գևորգյան Սուսաննա Պապիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 h., հայոց լեզու և գրակ./ | | | 125 | լավ | 100 |
| 30 | Մարտիրոսյան Մարինե Արարատի | ՄԿԱԳՏՏ /0.5 h., դասվար/ | | | 70 | բավ | 100 |
| 31 | Օսիպյան Նարինե Ռոբերտի | տնօրեն /պատմություն/ | Ականաբերդի | 12 | 170 | լավ | 100 |
| 30 | Մարտիրոսյան Մարինե Արարատի | ՄԿԱԳՏՏ /0.5 h., դասվար/ | | | 70 | բավ | 100 |
| 31 | Օսիպյան Նարինե Ռոբերտի | տնօրեն /պատմություն/ | Ականաբերդի Շ. Մեղրյանի անվ. մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 32 | Մարդոյան Սիլվա Էդիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա/ | | | 250 | լավ | 100 |
| 33 | Խաչատրյան Սուսաննա Գարիկի | ՄԿԱԳՏՏ /կենսաբանություն/ | | | 64 | բավ | 100 |
| | ***Շուշիի շրջան*** | | | | | | |
| 34 | Հովհաննիսյան Արամայիս Ալյոշայի | տնօրեն /պատմություն/ | Քարին տակի Ռ.Ղարախանյանի անվ. մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 35 | Հակոբյան Աշոտ Վանյայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա, կենսաբանություն/ | | | 204 | լավ | 82 |
| 36 | Ամիրջանյան Անահիտ Հմայակի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ./ | | | 56 | լավ | 93 |
| 37 | Աբրահամյան Էմմա Արամի | տնօրեն /մաթեմատիկա/ | Սուրացանի անվ. ավագ դպրոց | 8 | 170 | լավ | 100 |
| 38 | Ավանեսյան Համլիկ | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ., 0,5 h./ | | | 125 | լավ | 100 |
| 39 | Իսախանյան Կամելա Վոլոդյայի | ՄԿԱԳՏՏ /մեթոդիկա, 0,5 h./ | | | 30 | լավ | 100 |
| 40 | Նալբանդյան Նազիկ Ամծատուրի | տնօրեն /մաթեմատիկա/ | Խ.Աբովյանի անվ. h/դ | 18 | 170 | լավ | 100 |
| 41 | Մկրտչյան Լիդա Սուրենի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 250 | լավ | 100 |
| 42 | Պողոսյան Լիլիա Ռաժդենի | ՄԿԱԳՏՏ /ֆիզիկա/ | | | 54 | լավ | 90 |
| 43 | Պետրոսյան Արմեն Վաչիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Եղծահողի Ս.Պետրոսյանի անվ. մ/դ | 5 | 1 | լավ | 79 |
| 44 | Դավթյան Դավիթ Սերգեյի | տնօրեն /մաթեմատիկա/ | Մեծ շենի Ս.Դավթյանի անվան մ/դ | 5 | 160 | լավ | 94 |
| 45 | Բարսեղյան Կարեն Միքայելի | տնօրեն /ֆիզիկա/ | Հին շենի Ա. Մկրտչյանի անվ.h/դ | 3 | 168 | լավ | 100 |
| 46 | Նասիբյան Լուսինե Յաշայի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Լիսագորի մ/դ | 5 | 127 | լավ | 75 |
| 47 | Հովսեփյան Անժելա Կարապետի | տնօրեն /ֆիզիկա, հունվարի 1-ից/ | Քիրսավանի h/դ | 2 | 78 | լավ | 92 |
| | ***Մարտակերտի շրջան*** | | | | | | |
| 1 | Պետրոսյան Լիդիա Ջալալի | տնօրեն/մաթեմատիկա/ | Մարտակերտի h.1 | 27 | 170 | լավ | 100 |
| 2 | Աղասյան Էլլադա Ալեքսեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/ֆիզիկա/ | | | 225 | բավ | 100 |
| 3 | Հարությունյան Մալվինա Գրիշայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մեթոդիկա, 0,5 h./ | | | 125 | լավ | 100 |
| 4 | Բալասանյան Կարինե Բենիկի | ՄԿԱԳՏՏ/մաթեմատիկա/ | | | 60 | լավ | 100 |
| 5 | Իսկանդարյան Զոյա Խաչատուրի | տնօրեն /հայոց լեզու/ | Հաթերքի մ/դ | 18 | 147 | լավ | 84 |
| 6 | Բեգլարյան Գոհար Բենիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու/ | | | 250 | լավ | 100 |
| 7 | Գրիգորյան Էլեոնորա Երվանդի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու/ | | | 70 | լավ | 100 |
| 8 | Ավանեսյան Վարյա Վանյայի | տնօրեն /ֆիզիկա/ | Վանքի մ/դ | 15 | 200 | լավ | 117 |
| 9 | Բաղդասարյան Սերյան Արմենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/քիմիա/ | | | 238 | լավ | 95 |
| 10 | Մաղաքելյան Լիանա Ալեքսանդրի | ՄԿԱԳՏՏ /քիմիա և կենսաբ./ | | | 120 | լավ | 100 |
| 11 | Աբանեսյան Նելլի Սերգեյի | տնօրեն/հայոց լեզու/ | Առաջաձորի մ/դ | 12 | 166 | լավ | 98 |
| 12 | Սողոմոնյան Մխիթար Վալերիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /ֆիզիկա/ | | | 200 | լավ | 80 |
| 13 | Զաքարյան Իրա Սանվելի | ՄԿԱԳՏՏ /դասվար/ | | | 120 | լավ | 100 |
| 14 | Դավթյան Մելանյա Միքայելի | տնօրեն /հայոց լեզու/ | Ն. Հոռաթաղի մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 15 | Խաչատրյան Վարդիթեր Հրանտի | ուս. գծով տնօրենի տեղակալ/ֆիզիկա/ | | | 200 | լավ | 80 |
| 16 | Քոչարյան Վալտեր Վագիֆի | ՄԿԱԳՏՏ /ՆԶՊ և ֆիզկուլտ./ | | | 60 | լավ | 100 |
| 17 | Խաչատրյան Վալենտինա Ռուբենի | տնօրեն /դասվար, 0,5 h./ | Ծաղկաշենի մասնաճյուղ | 2 | 40 | լավ | 60 |
| 18 | Գրիգորյան Արմեն Նիկոլայի | տնօրեն /պատմություն/ | Վաղուհասի մ/դ | 12 | 159 | լավ | 94 |
| 19 | Գրիգորյան Դոնարա Երվանդի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն/ | | | 250 | լավ | 100 |
| 20 | Սարգսյան Վեներա Նիկոլայի | ՄԿԱԳՏՏ/դասվար/ | | | 60 | լավ | 100 |
| 21 | Առստամյան Նաիրա Արշավիրի | տնօրեն/հայոց լեզու/ | Վ. Հոռաթաղի մ/դ | 12 | 225 | լավ | 132 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 22 | Լալայան Սվետլանա Արմավիրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա, մինչև 10.11.2013 թ./ | | | 250 | լավ | 100 |
| 23 | Մարտիրոսյան Արուս Արտուշի | ՄԿԱԳՏՏ/հայոց լեզու/ | | | 62 | լավ | 100 |
| 24 | Մեժունց Տանյա Զավենի | տնօրեն/պատմություն/ | Թալիշի մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 25 | Հակոբյան Աննա Բորյայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /դասվար/ | | | 170 | լավ | 70 |
| 26 | Սահակյան Հերմինե Վահրամի | ՄԿԱԳՏՏ /դասվար/ | | | 40 | լավ | 60 |
| 27 | Ղուկասյան Մարգարիտա Աշոտի | տնօրեն/մաթեմատիկա/ | Մոխրաթաղի մ/դ | 7 | 170 | լավ | 100 |
| 28 | Հարությունյան Էրիկ Արարատի | ուս. գծով տնօրենի տեղակալ /պատմություն, 0,5 h./ | | | 128 | լավ | 100 |
| 29 | Հարությունյան Անժելիկա Վյաչեսլավի | ՄԿԱԳՏՏ /պատմություն/ | | | 31 | բավ | 100 |
| 30 | Հայրիյան Կամո Փարավոնի | տնօրեն /աշխարհագրություն/ | Կոճողոտի մ/դ | 11 | 170 | բավ | 100 |
| 31 | Հարությունյան Սիլվա Ֆյոդրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 229 | լավ | 92 |
| 32 | Անանյան Ռոզա Յաշայի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու/ | | | 60 | լավ | 100 |
| 33 | Լալայան Դավիթ Ալեքսանդրի | տնօրեն /պատմություն/ | Չլդրանի մ/դ | 11 | 171 | լավ | 100 |
| 34 | Ղուկասյան Սամվել Սլավիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմ., ինֆորմատիկա/ | | | չի ներկայացրել | | |
| 35 | Սահակյան Լիլիթ Աշոտի | ՄԿԱԳՏՏ/դասվար/ | | | 90 | բավ | 100 |
| 36 | Դանիելյան Էմմա Ալեքսանդրի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ճանկաթաղի մ/դ | 10 | 170 | լավ | 100 |
| 37 | Առուշանյան Վարսիկ Արամայիսի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու, 0,5 h./ | | | 125 | լավ | 100 |
| 38 | Խաչատրյան Վրեժ Արմենակի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու, 0.5 h./ | | | 29 | լավ | 100 |
| 39 | Մինասյան Արթուր Միքայելի | տնօրեն /հայոց լեզու/ | Ն. Սեյսուլանի մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 40 | Պողոսյան Մարինե Բորիսի | ուս. գծով տնօրենի տեղակալ /աշխարհագրություն/ | | | 250 | լավ | 100 |
| 41 | Միրզոյան Նունե Հենրիկի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու, 0.5 h./ | | | 60 | լավ | 100 |
| 42 | Գրիգորյան Ռոզա Սաշայի | տնօրեն /մաթեմ., ինֆորմ./ | Գետավանի մ/դ | 9 | 147 | լավ | 86 |
| 43 | Սարգսյան Գայանե Յաշայի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու, 0,5 h./ | | | 125 | լավ | 100 |
| 44 | Շիրինյան Դավիթ Հրաչիկի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու, 0.5 h./ | | | 30 | բավ | 100 |
| 45 | Ավետիսյան Ռոմելա Վազգենի | տնօրեն /աշխարհագրություն/ | Հարցմների մ/դ | 11 | 178 | լավ | 105 |
| 46 | Մովսիսյան Շողեր Կառլենի | ուս. գծով տնօրենի տեղակալ /ռուսաց լեզու/ | | | 201 | լավ | 80 |
| 47 | Գրիգորյան Գյուլնարա Վարդանի | ՄԿԱԳՏՏ /ֆիզիկա/ | | | 60 | բավ | 100 |
| 48 | Ավանեսյան Վաչագան Արմոյի | տնօրեն /քիմ., կենսաբ./ | Մաղավուզի մ/դ | 12 | 142 | լավ | 84 |
| 49 | Ավանեսյան Մալինա Պատվականի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 186 | բավ | 74 |
| 50 | Ֆանյան Անուշ Հովսեփի | ՄԿԱԳՏՏ /կենսաբանություն/ | | | 66 | բավ | 100 |
| 51 | Դանիելյան Ռուզաննա Ռոբերտի | տնօրեն/մաթեմատիկա/ | Մեծշենի մ/դ | 9 | 182 | լավ | 107 |
| 52 | Մարգարյան Մայկո Էդուարդի | ուս. գծով տնօրենի տեղակալ /աշխարհագրություն, 0,5 h./ | | | 105 | բավ | 84 |
| 53 | Պողոսյան Կարեն Օլեգի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ., 0,5 h./ | | | 30 | բավ | 100 |
| 54 | Աղասյան Վահրամ Իլյագի | տնօրեն/ֆիզիկա/ | Քոլատակի մ/դ | 9 | 169 | լավ | 100 |
| 55 | Գրիգորյան Սուսաննա Վլադիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ/դասվար, 0,5 h./ | | | 125 | լավ | 100 |
| 56 | Գաբրիելյան Սուսաննա Վաղարշակի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու, 0.5 h./ | | | 49 | լավ | 100 |
| 57 | Սարգսյան Սիլվա Խաչատուրի | տնօրեն /դասվար/ | Ջագլիկի մ/դ | 7 | 131 | բավ | 58 |
| 58 | Սարգսյան Մարիետա Ձիվանշիրի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու, 0,5 h./ | | | 119 | բավ | 95 |
| 59 | Առուշանյան Ինգա Միքայելի | ՄԿԱԳՏՏ /ռուսաց լեզու, 0.5 h./ | | | 49 | բավ | 100 |
| 60 | Ալավերդյան Միրուշ Խրիստի | տնօրեն/հայոց լեզու/ | Դրմբոնի մ/դ | 11 | 172 | լավ | 100 |
| 61 | Անտոնյան Ռիմա Լևոնի | ուս. գծով տնօրենի տեղակալ /ֆիզիկա/ | | | 256 | լավ | 100 |
| 62 | Լազարյան Նունե Արտուշի | ՄԿԱԳՏՏ /մանկ.և հոգ./ | | | 60 | լավ | 100 |
| 63 | Խաչատրյան Անյուտա Արտավազդի | տնօրեն/հայոց լեզու/ | Կուսապատի մ/դ | 9 | 149 | բավ | 88 |
| 64 | Խաչատրյան Լալա Սլավիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա, կենսաբ., 0,5 h./ | | | 125 | գանծ | 100 |
| 65 | Իսրայելյան Ռիմա Ռաֆիկի | ՄԿԱԳՏՏ/դասվար, 0.5 h./ | | | 39 | լավ | 100 |
| 66 | Սևումյան Իրինա Վլաթի | տնօրեն/հայոց լեզու/ | Չափարի մ/դ | 9 | 105 | բավ | 62 |
| 67 | Դանիելյան Նարինե Գագիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /ֆիզիկա, 0,5 h./ | | | 80 | լավ | 64 |
| 68 | Շահինյան Համլիկ Շահենի | ՄԿԱԳՏՏ /պատմ., 0.5 h./ | | | 60 | լավ | 100 |
| 69 | Աղաջանյան Գեղամ Էդուարդի | տնօրեն /հայոց լեզու/ | Մատաղիսի մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 70 | Մովսիսյան Ռուզան Սլավայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա, կենսաբ./ | | | 250 | լավ | 100 |
| 71 | Սողոմոնյան Հենրիկ Համազասպի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա/ | | | 68 | լավ | 100 |
| 72 | Առստամյան Ստելլա Ժիրայրի | տնօրեն /պատմություն/ | Պողոսագոմերի մ/դ | 7 | 171 | բավ | 100 |
| 73 | Գրիգորյան Աստղիկ Վլադիմիրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /կիրառական մաթեմ., 0,5 h./ | | | 125 | բավ | 100 |
| 74 | Ազարյան Նարինե Բաբկենի | ՄԿԱԳՏՏ /դասվար, 0,5 h./ | | | 60 | բավ | 100 |
| 75 | Ասրյան Կարինե Լազարի | տնօրեն /պատմություն/ | Կիչանի մ/դ | 11 | 170 | լավ | 100 |
| 76 | Հակոբյան Գոհար Միքայելի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա, կենսաբ., 0,5 h./ | | | 250 | բավ | 100 |
| 77 | Ղաֆարյան Վիոլետա Վալերիի | ՄԿԱԳՏՏ /աշխարհագրություն, 0,5 h./ | | | 125 | բավ | 100 |
| 78 | Գրիգորյան Լյուբա Արծվիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ն. Մարաղայի մ/դ | 10 | 165 | լավ | 97 |
| 79 | Դանիելյան Սիլվա Սլավիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ/քիմիա, կենսաբ., 0,5 h./ | | | 120 | լավ | 96 |
| 80 | Կարապետյան Աքսանա Ռոմայի | ՄԿԱԳՏՏ /պատմ., 0,5 h./ | | | 37 | լավ | 100 |
| 81 | Միրզոյան Լուսինե Բորիսի | տնօրեն/հայոց լեզու/ | Ն. Այգեստանի մ/դ | 8 | 170 | բավ | 100 |
| 82 | Հովհաննիսյան Վարդուհի Վալերիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու, 0,5 h./ | | | 125 | բավ | 100 |
| 83 | Նազարյան Արմինե Խորենի | ՄԿԱԳՏՏ /պատմություն, 0,5 h./ | | | 45 | գանծ | 100 |
| 84 | Քարդումյան Մելսիդա Սուրենի | տնօրեն/քիմիա, կենսաբ./ մինչև 25.02.2015 թ. | Մարտակերտի h.2 h/դ | 14 | 98 | լավ | 60 |
| 85 | Հարությունյան Ռուբեն Գուրգենի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 200 | լավ | 84 |
| 86 | Սարգսյան Սուսաննա Սամսոնի | ՄԿԱԳՏՏ /պատմություն/ | | | 57 | լավ | 95 |
| 87 | Սավաղյան Անժելա Ձիվանշիրի | տնօրեն/հայոց լեզու/ | Վարդաձորի h/դ | 3 | 38 | բավ | 50 |
| 88 | Մուսայելյան Կարինե Շահենի | տնօրեն/հայոց լեզու/ | Զարդախաչի h/դ | 4 | 142 | լավ | 84 |
| 89 | Սաֆարյան Արթուր Հովհաննեսի | տնօրեն /պատմություն/ | Ծմակահողի h/դ | 6 | 153 | լավ | 90 |
| 90 | Ավագյան Արեգ Արշավիրի | տնօրեն /հայոց լեզու/ | Շահմասուրի h/դ | 6 | 170 | լավ | 100 |
| 91 | Թևոսյան Սուսաննա Մելսիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ն. Կարմիրավանի h/դ | 5 | 135 | բավ | 88 |
| 92 | Պապիկյան Աշոտ Լավրենտի | տնօրեն/աշխարհագրություն/ | Աղաբեկալանջի h/դ | 3 | 101 | լավ | 60 |
| 93 | Սարգսյան Արման Իլյայի | տնօրեն /պատմություն/ | Ն. Հայկաջուրի h/դ | | | | |
| 94 | Ավանեսյան Ելենա Դիմիտրիի | տնօրեն /ռուսաց լեզու/ | Գառնաքարի h/դ | 5 | 161 | լավ | 95 |
| 95 | Հարությունյան Նաիրա Զավենի | տնօրեն /մեթոդիկա, 0,5 h./ | Թբլղուի մ/ճ | 2 | 20 | բավ | 40 |
| 96 | Ավանեսյան Սասուն Սյոմայի | տնօրեն /0,5 h./ | Տոնաշենի մ/ճ | 2 | 31 | լավ | 50 |

*Ծանոթություն: 60 և ավելի դասալսում կատարած ՄԿԱԳ տնօրենների տեղակալների դասալսումների կատարման տոկոսը համարվել է 100%:*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 2014-2015 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ՏԱՐՐԱԿԱՆ

2014-2015 ուստարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում տեսչական ստուգումներ ենք իրականացրել 26 դպրոցում, որոնց գերակա մասը` համակազմ դասարաններով: Դասալսումներ ենք անցկացրել 114 ուսուցիչների մոտ /499 դասաժամ/, որոնց մեծ մասն ունի բարձրագույն մասնագիտական կրթություն: Կան նաև մասնագիտությամբ բանասերներ և մաթեմատիկայի ուսուցիչներ, որոնք արդեն 5 տարուց ավելի դասվարի փորձ ունեն:

Պարզվեց, որ դասվարները բոլոր առարկաներից ունեն տնօրենության կողմից հաստատված, գործող ծրագրերին համապատասխան թեմատիկ պլանավորումներ, մայրենիից` մայրենիի բոլոր բաղադրատարրերով` ինքնուրույն ընթերցանություն, խոսք և հաղորդակցություն, գրավոր աշխատանքներ: Որոշ ուսուցիչներ կազմել էին նաև նոր գնահատմանը առնչվող ժամանակացույցը` բանավոր հարցում, թեմատիկ գրավոր, գործնական, կիսամյակային ամփոփիչ աշխատանք: Ձեռք են բերել օժանդակ ձեռնարկներ: Նախարարությունը ևս բավականին ուսումնաօժանդակ ձեռնարկներ, դիդակտիկ նյութեր և պաստառներ է տրամադրել կրտսեր դպրոցին. ցավոք, ոչ բոլոր դասվարներն են դրանք նպատակային և արդյունավետ օգտագործում դասագործընթացում: Բոլոր դասվարներն էլ կազմում են օրվա դասերի պլան-սեղմագրեր, որոնք, մանավանդ համակազմ դասարանների համար, նպատակային և արդյունավետ չեն. նման դասարաններում աշխատող դասվարները պլան-սեղմագրերը պետք է կազմեն ոչ թե առանձին-առանձին դասարանների համար, այլ մեկ դասաժամի` 45 րոպեի համար. մի դասարանում ուսուցիչը պետք է ինքնուրույն աշխատանք կազմակերպի, մյուսում աշխատի աշակերտների հետ:

Թեմատիկ պլանավորումների նպատակային և ծրագրային պահանջներին համապատասխան կազմման առումով արժևորվում են Ստեփանակերտի հ. 2 հիմնական, Ասկերանի շրջանի Ավետարանոցի միջնակարգ, Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ, Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցների դասվարների կազմած պլանավորումները:

Տեսչավորված դպրոցների դասվարները դասարաններում ստեղծել են դասարանական և պետականության անկյուններ: Գրեթե բոլոր դպրոցներում թեմատիկ և առարկայական անկյունները նախ` համակարգված չեն, երկրորդ` համալրման անհրաժեշտություն ունեն: Ճիշտ ստեղծված թեմատիկ անկյունները հնարավորություն կտան ուսուցչին նպատակային իրականացնելու մանավանդ մայրենիի թեմատիկ բանավոր հարցումները:

Սովորաբար կրտսեր օղակի դասվարներն ավելի պարտաճանաչ ու ջանասիրաբար են աշխատում ուսումնական գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար: Սակայն դասալսումներից և տրված գրավորներից պարզվեց, որ որոշ դպրոցներում առաջին իսկ դասարանից սկսած` նրանք աշխատում են միայն երեխաներին տառաճանաչ դարձնելու, նրանց` պարզագույն թվաբանական գործողություններ կատարելու կարողությունները զարգացնելու ուղղությամբ: Դասվարները, ինչպես նաև տարրական դպրոցը վերահսկող օղակը պետք է ուսումնական տարվա սկզբից հանգամանորեն ուսումնասիրեն գնահատման և կրթական առարկայական չափորոշիչները` դասագործընթացում իրենց կիրառման բոլոր հիմնադրույթներով /աշխատանք անծանոթ նյութի վրա, հասկանալով կարդալ, ինքնուրույն գրավոր աշխատանք, 1-ին դասարանից սկսած` կարգային անցումներով բանավոր գումարում և հանում, արտաաղյուսակային բանավոր բազմապատկում և բաժանում, կապակցված խոսք, ճիշտ հաղորդակցում և շատ այլ նպատակային հարցեր/: Արդեն հստակեցվել է դասամատյաններում քիչ գնահատականներ լինելու հարցը: Բոլորս պետք է հստակ իմանանք, որ դասամատյանում նշանակված գնահատականները աշակերտների գիտելիքների ամփոփիչ գնահատականներն են, իսկ ամփոփիչ հարցումները կատարվում են գոնե երկու շաբաթը մեկ անգամ: Ամենօրյա` ուսուցանող գնահատականները, ըստ կարգի, նշվում են բանավոր` բառային բնութագրումներով: Օրինաչափություն է դարձել մի երևույթ. այն դպրոցը, որը ճիշտ է առաջնորդվում գնահատման գաղափարաբանության դրույթներով, որակական մեծ առաջադիմություն է ապահովում, անշուշտ:

Դասագործընթացում հետաքրքիր ու արդյունավետ աշխատանքների, աշակերտակենտրոն, չափորոշչահեն ուսուցման դրույթների կիրառմամբ, մանկավարժական սկզբունքների ապահովմամբ աչքի ընկան դասվարներ Վիոլետա Բաբայանը, Նաիլա Գաբրիելյանը, Նարինե Բաբայանը, Կարինե Մելքումյանը, Զոյա Խաչատրյանը, Անժելա Մելքումյանը, Անահիտ Մելքումայնը, Քանաքարա Աբրահամյանը /Ստեփանակերտի հ. 2 հիմն. դպրոց/, Գոհար Սարգսյանը /Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմն. դպրոց/, Նաիրա Հովսեփյանը, Մարիետա Սողոմոնյանը, Աննա Ստեփանյանը /Բերդաշենի միջն. դպրոց/, Դոնարա Առստամյանը, Ալվարդ Հայրապետյանը /Ավետարանոցի միջն. դպրոց/, Իրա Բալայանը /Ծովատեղի միջն. դպրոց/, Վալենտինա Խաչատրյանը /Ծաղկաշենի տարր. դպրոց/, Ռոմելա Բաբայանը /Տողի միջն. դպրոց/, Էլմիրա Ասատրյանը /Վանի միջն. դպրոց/: Նրանք զարգացնում են աշակերտների հնչյունային լսողությունը, որն աշակերտի գրավոր և բանավոր խոսքի առանցքն է: Դասերին օգտագործում են խորհրդանշական զննականության տարրեր, գծապատկերներ, տեղին են կիրառում վանկակազմական և բառակազմական աշխատանքները, հետաքրքիր են դարձնում բոլոր դասերը: Կարևորում են աշակերտների բանավոր հաղորդակցմանը, գրավոր խոսքի զարգացմանը, քերականական նախագիտելիքների ձևավորմանը, մաթեմատիկական մտածողության զարգացմանը միտված աշխատանքները: Ճիշտ են կառուցում դասերը, ուսումնասիրել են կրթական առարկայական չափորոշիչները, աշխատում են իրականացնել չափորոշչային միջինը: Մեծ տեղ են տալիս աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը, նրանց մոտ մարդկային բարձր որակների մշակմանը: Դասագործընթացում օգտագործում են տարբեր բնույթի աշխարհաճանաչողական տեղեկություններ, որոնք և հմտորեն կարողանում են աշակերտների ընկալունակությանը հասցնել:

Վերոնշյալ ուսուցիչները զարգացնում են աշակերտների տարածական մտածողությունը, խոսքը: Նրանց դասարաններում ավելի բարձր որակական ցուցանիշներ են արձանագրվել, պարզապես կից աղյուսակում մենք ներկայացրել ենք յուրաքանչյուր դպրոցի ընդհանրացված ցուցանիշները: Նրանց վարած դասերը օրինակելի են, աշխատանքը խրախուսելի է և արժանի է դրվատանքի: Վերոնշյալ ուսուցիչների աշխատանքը գնահատվել է «լավ»:

Հարկ է նշել Բերդաշենի դպրոցի դասավարների արդյունավետ աշխատանքը: Սուսաննա Լալայանը, Սուսաննա Մովսիսյանը, Անժելա Ալլահվերդյանը չնայած «լավ» չեն գնահատվել, դասերը վարում են ժամանակակից մեթոդների կիրառմամբ, աշակերտակենտրոն ուսուցման դրույթների կիրառմամբ:

Բավարար հիմքերի վրա է դասավանդման դրվածքը տեսչավորված բոլոր դպրոցներում: Սակայն կան առանձին դասարաններ, որոնց որակական առաջադիմությունը, ինչը շատ կարևոր է տարրական դասարաններում, ցածր է:

Սերնդափոխության պատճառով դասվարների շարքը համալրվել է սկսնակ դասվարներով: Որոշ սկսնակ դասվարներ /մինչև 5 տարվա աշխատանքի փորձ/ դասերին կիրառում են բազմազան հնարներ, օգտագործում ինքնաշեն դիտողական և դիդակտիկ նյութեր, նոր նյութին առնչվող հետաքրքիր տեղեկություններ հաղորդում աշակերտներին: Սակայն սկսնակ դասվարներից շատերի մոտ պետք է կազմակերպել փորձի փոխանակման դասեր:

Բանավոր դասերի կազմակերպման ընթացքը, գրավորների արդյունքները նրանց մոտ այդքան էլ գոհացուցիչ չէին: Դա պայմանավորված է և՛ մանկավարժական փորձի բացակայությամբ, և՛ ոչ չափորոշչահեն ուսուցման կազմակերպմամբ:

Պետք է նշել, որ աշակերտների մի ստվար մասը, հատկապես գյուղական դպրոցներում, միջակ և ավելի ցածր կարողությունների տեր է: Նշված դպրոցներում աշակերտները դասագրքերի պակաս ունեն, հատկապես նոր ու հին դասագրքերի մեծ տարբերություն կա: Աշակերտների մեծ մասը չի տիրապետում պետական կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների նվազագույնին:

Փորձը ցույց է տվել, որ 6 տարեկան դպրոցականը սեփական ուժերով պետք է գիտելիքներ ձեռք բերի, իսկ երբ ուսուցիչը փորձում է միայն հաղորդել այդ գիտելիքը, ինչպես անում էր 7 տարեկաններով համալրված դասարաններում, նա չի կարող համակարգել աշակերտի ունեցած ձեռքբերումները, բնականաբար, թույլ կլինի նրանց գիտելիքների իմացական, մանավանդ որակական մակարդակը:

Ուսումնական գործընթացում բացասական երևույթներից խուսափելու նպատակով մեր կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, ցուցաբերել ենք մասնագիտական և մեթոդական օգնություն, կազմակերպել ենք ցուցադրական դասեր, մանավանդ` ուղղորդված և ընտրովի ընթերցանության մեթոդների, բանավոր հարցման ձևերի կիրառմամբ, համակազմ դասարանների համար նպատակային պլան-սեղմագրերի նմուշօրինակների տրամադրմամբ և այլն:

*Հանձնարարվել է.*

*առարկայական մասնախմբի նախագահներին`*

- մասնախմբերի աշխատանքները դարձնել նպատակային և արդյունավետ,
- որպես ինքնակրթության թեմաներ` դասվարները կարող են մշակել կրթական առարկայական չափորոշիչները, հանրակրթության մասին օրենքը, մանկավարժական այլ թեմաներ,
- աշխատել ըստ կանոնակարգի` բոլոր ենթակետերի ներառմամբ,
- կարևորություն տալ փոխադարձ դասալսումներին, դրանց մանրամասն և ճիշտ վերլուծություններին.

*դասվարներին`*

- յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին հանգամանորեն ուսումնասիրել կրթական առարկայական և գնահատման չափորոշիչները, մանրամասն տեղեկանալ գործող դասագրքերի, մեթոդական ուղեցույցների, լրացուցիչ ձեռնարկների նյութերին. չունենալու դեպքում ձեռք բերել և առաջնորդվել պահանջվող դրույթներով,
- դասագործընթացը կառուցել անձնակողմնորոշիչ ուսուցման դրույթների հիման վրա` ուսուցչակենտրոն ուսուցումը փոխարինելով աշակերտակենտրոն ուսուցմամբ,
- դասանպատակներում հստակեցնել դասի ուսուցանող, զարգացնող և դաստիարակող գործառույթները, կիրառել դիտողական պարագաներ, մեծ տեղ տալ աշակերտների վերացական մտածողության զարգացմանը,
- պլան-սեղմագրերում նշել աշակերտակենտրոն ուսուցման դրույթներից բխող այն միջոցներն ու հնարները, որոնք կնպաստեն առաջին հերթին` դրանց իրականացմանը և 6 տարեկաններից ուսուցումն սկսելու դժվարությունների հաղթահարմանը,
- մայրենիի դասերին հաճախակի կիրառել ուղղորդված և ընտրովի ընթերցանության մեթոդներ, աշակերտների մեջ զարգացնել անծանոթ բնագիրը վարժ, սահուն, արտահայտիչ, հասկանալով և արագ կարդալու, բնագրից հենակետային բառերն ընտրելու, բնագրի պլանը կազմելու, կապակցված և ճիշտ խոսելու, հաղորդակցվելու, ինքնուրույն աշխատելու կարողություններ,
- մաթեմատիկայից կարևորություն տալ կարգային անցումով բանավոր հաշվումներ, արտաաղյուսակային բազմապատկում կատարելուն, առաջադրանքի պահանջը և խնդիրներն ինքնուրույն կարդալուն, հասկանալուն և լուծելուն,
- դասերը ուսուցանել խաղ-ուսուցում- խաղ սկզբունքով, իսկ բոլոր դիդակտիկ խաղերն էլ պետք է լինեն ուսուցչի ստեղծագործության արդյունքը և վերաբերեն բուն թեմային, այլապես կծանրաբեռնեն երեխաներին / հարցի վերաբերյալ տրվել են ցուցադրական դասի դրվագներ/,
- դասերը դարձնել դիտողական, կիրառել դասին ուսուցանված գիտելիքները համակարգող, մարզողական վարժություններով հագեցված քարտեր, դասագործընթացում հաճախակի կիրառել ԿԳ նախարարության կողմից ստացված պաստառները, մանավանդ 3-րդ և 4-րդ դասարաններում` «Բնագիր», «Տեքստ» վերնագրերով. դա կնպաստի աշակերտների` տեքստի կամ բնագրի հիմնական միտքը, ենթատեքստը, նպատակները, բախումները և այլ կարևոր գործոնների իմացությանը, որոնց շնորհիվ կհամակարգվեն նրանց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները,
- ուշադրության կենտրոնում պահել վայելուչ գրելու պահանջը,
- գրավոր աշխատանքներում ապահովել տեխնիկական բոլոր պահանջները թե՛ մայրենիից, թե՛ մաթեմատիկայից,
- դասամատյանները վարել գնահատման նոր գաղափարաբանության դրույթներից ելնելով,
- տարրական դասարաններում կարևորություն տալ որակական առաջադիմության բարձրացմանը /«7», «8»,«9», «10»/,
- միջոցներ ձեռնարկել, որ կրտսեր դպրոցականը նոր ուսուցանված դասը դասարանում սովորած գնա տուն ,
- ստեղծել թեմատիկ անկյուններ` մանավանդ թեմատիկ բանավոր հարցումը մատչելի և նպատակային դարձնելու համար,
- ձևական մոտեցում չցուցաբերել առաջին դասարանցիների ուսումնական ձեռքբերումների գնահատման հանդեպ,
- դասերը կազմակերպել ինտերակտիվ մեթոդներով` ճիշտ ուղու վրա դնելով աշակերտների սոցիալական հմտությունների զարգացման խնդրի իրականացումը,
- դասագործընթացը հագեցնել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների դրույթների կիրառմամբ:

*2014-2015 ուստարում տեսչավորված դպրոցների 2-4-րդ դասարաններում մայրենիից և մաթեմատիկայից տրված գրավոր աշխատանքների արդյունքները*

| | Մայրենի | | Մաթեմատիկա | |
|---|---|---|---|---|
| Դպրոցի անվանումը | ընդհ. առաջ. տոկոսներով | որակ.առաջ. տոկոսներով | ընդհ. առաջ. տոկոսներով | որակ.առաջ. տոկոսներով |
| Ստեփանակերտի հ.2 | 80 | 56 | 84 | 56 |
| Ասկերանի շրջան | | | | |
| Սղնախ | 36 | 9 | 36 | 0 |
| Ավետարանոց | 71 | 31 | 71 | 22 |
| Խրամորթ | 63 | 19 | 53 | 33 |
| Ասողաշեն | | | | |
| Հարավ | 79 | 21 | 69 | 38 |
| Շուշիի շրջան | | | | |
| Շուշի Խ. Աբովյանի անվան | 63 | 35 | 64 | 35 |
| Մարտունու շրջան | | | | |
| Ծովատեղ | 65 | 25 | 55 | 25 |
| Աշան | 50 | 23 | 53 | 23 |
| Բերդաշեն | 67 | 33 | 78 | 33 |
| Նորշեն | 80 | 70 | 50 | 40 |
| Հադրութի շրջան | | | | |
| Տող | 61 | 38 | 75 | 45 |
| Մարտակերտի շրջան | | | | |
| Քոլատակ | 60 | 20 | 40 | 40 |
| Սաղավուզ | 40 | 12 | 32 | 21 |
| Ճանկաթաղ | 50 | 20 | 50 | 20 |
| Վարդաձոր | | | | |
| Դրմբոն | 50 | 25 | 35 | 10 |
| Պողոսագոմեր | 86 | 43 | 50 | 29 |
| Հաթերք | 62 | 35 | 60 | 28 |
| Ձափար | 86 | 71 | 100 | 100 |
| Ծաղկաշեն | 80 | 20 | 100 | 0 |
| Քաշաթաղի շրջան | | | | |
| Բերձորի | 58 | 28 | 53 | 20 |
| Միջնավան | 45 | 15 | 45 | 10 |
| Վան | 67 | 67 | 67 | 67 |
| Շահումյանի շրջան | | | | |
| Նոր Խարխափուտ | 75 | 0 | 75 | 0 |
| Քնարավան | 57 | 14 | 85 | 14 |

**Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ ՏԵՍՈՒՉՆԵՐ**

☞8

## ՏԵՍՉԱԿԱՆ

7☜

### ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2014-2015 ուստարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում 31 ուսումնական հաստատություններում /անվանումները՝ կից աղյուսակում/ իրականացրել ենք հայոց լեզվի և գրականության դասավանդման դրվածքի ստուգումը: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում, անշուշտ, կան իրենց գործին տիրապետող հմուտ մանկավարժներ, ովքեր ծառայեցնում են մայրենիի դասերը ոչ միայն անաղարտ լեզու սովորեցնելուն, այլև սովորողների հայեցի դաստիարակությանը, նրանց բարոյական որակների ձևավորմանը: Տեսչավորման ընթացքում մեր կողմից ընդհանուր առմամբ կատարվել է 640 ժամ դասալսում 118 ուսուցչի մոտ. նրանցից 86-ի աշխատանքը գնահատվել է «բավարար». «անբավարար» է գնահատվել Քրիստինե Սարգսյանի /Հարավի մ.դ./ և Մարինե Գաբրիելյանի /Վարդաձորի մասնաճյուղ/ աշխատանքը.չեն գնահատվել 4 սկսնակ կամ փոխարինող ուսուցիչներ, «լավ» է գնահատվել ներքոհիշյալ 26 ուսուցիչների աշխատանքը. Գոհար Հովհաննիսյան /Մաղավուզի մ.դ./, Նվարդ Բաղրյան /Ավետարանոցի մ.դ,/, Լյուդմիլա Յարամիշյան, Թերեզա Ղարախանյան, Էսմա Գասպարյան, Արմինե Մովսիսյան, Ռուզաննա Աբրահամյան, Իրինա Մամունց, Լիանա Ներսիսյան, Լիանա Սառաջյան /Ստեփանակերտի հ. 8 ավագ դպ./, Օլյա Իշխանյան, Հասմիկ Ավանեսյան /Շուշիի Մուրացանի անվ. ավագ դպրոց/, Էլմիրա Գաբրիելյան /Բերդաշենի մ.դ./, Սվետլանա Մկրտչյան /Աստղաշենի մ.դ./, Լիլիանա Գաբրիելյան, Կարինե Իշխանյան /Ստեփանակերտի հ. 2 հիմն. դ./, Արմինե Ավանեսյան, Լիանետա Իշխանյան, Արմենուհի Պողոսյան /Աշանի մ.դ./, Գայանե Պողոսյան /Վանի մ. դ./, Զոյա Իսկանդարյան, Գոհար Բեկլարյան, Էլեոնորա Գրիգորյան, Նարինե Միրզոյան, Արմիդա Իսկանդարյան, Սուսաննա Աբրահամյան /Հաթերքի մ.դ./: Հաջողված ու արդյունավետ դասեր լսեցինք նաև Գոհար Աբրահամյանի /Ծովատեղի հ.դ./, Անուշ Առաքելյանի /Խրամորթի մ.դ./, Հասմիկ Հակոբյանի /Բերձորի հ.2 մ.դ./, Լուսինե Ավանեսյանի, Նունե Առստամյանի /Բերդաշենի մ.դ./, Նաիրա Թումանյանի, Անահիտ Խաչյանի /Ստեփանակերտի հ. 2 հիմն. դ./, Զոյա Ջավադյանի /Տողի մ.դ./, Նադյա Մկրտումյանի, Քրիստինե Հայրապետյանի /Շուշիի հումանիտար քոլեջ/, Սենորա Սողոմոնյանի, Միրա Սարգսյանի /Հարավի մ.դ./, Իրինա Գրիգորյանի /Մարտունու արհեստ. ուսումն./, /Վարդիթեր Հակոբյանի, Լիդա Մկրտչյանի, Սուսաննա Ստեփանյանի/Շուշիի Աբով. անվ. հ.դ./ դասարաններում, ուսուցիչներ, ովքեր կարողանում են նաև ընթերցասիրություն սերմանել սաների մեջ: Տեսչավորման արդյունքներով առարկայի դասավանդման դրվածքը «անբավարար» է գնահատվել Մարտունու շրջանի Խերխանի հիմն. դպրոցում, ցածր՝ Վարդաձորի մասնաճյուղում և Մարտունու արհեստագործական ուսումնարանում, մյուս դպրոցներում՝ «բավարար», իսկ Հաթերքի միջն. դպրոցում՝ «լավ»:

Հարկ է նշել Բերձորի հ. 2 դպրոցի ուսուցիչներ Ժիրայր Հակոբյանի և Արաքսյա Այվազյանի բազմամյա փորձը, գործուն մասնակցությունը տարաբնույթ միջոցառումներին, որոնք մեծապես նպաստել են շրջանում մշակույթի և արվեստի տարածմանն ու զարգացմանը, սովորողների հայեցի դաստիարակությանը:

Ուրախալի է երիտասարդ շնորհալի ուսուցիչների առկայությունը դպրոցներում. նրանց թվում են՝ Գայանե Վարդանյան /Աստղաշենի մ.դ./, Արմինե Հովսեփյան /Ճանկաթաղի մ.դ./, Անահիտ Պետրոսյան /Ստեփանակերտի հ. 8 ավագ դ./, Նարինե Խաչատրյան/ Շուշիի հ.դ./, Գոհար Հարությունյան/Նորշենի մ.դ./, Մանուշ Ալավերդյան/ Մարտունու արհեստ. ուսումն./, Սյուզաննա Արզումանյան /Սղնախի մ.դ./, Յուլյա Ավանեսյան/Մոխրաթաղի մ.դ./:

Մի շարք դպրոցներում /Ավետարանոցի մ.դ., Ստեփանակերտի հ.2, հ.8, Շուշիի Մուրացանի անվ. ավագ/ ուսուցիչները հաջողությամբ անցկացնում են համակարգչային դասեր, սակայն ոչ բոլոր դպրոցներում են լիարժեք օգտագործվում համակարգչային կաբինետների հնարավորությունները:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ուսուցիչների արդյունավոր աշխատանքը խոչընդոտում են մի շարք դպրոցներում /Ծովատեղի, Քոլատակի, Ն.Խարխափուտի, Ճանկաթաղի, Սղնախի, Մարտունու արհեստ. ուսումնարանի, Նորշենի, Պողոսագոմերի, Վանի/ շենքային անբավարար պայմանները, ինչպես նաև դասարանների մեծ խտությունը հատկապես քաղաքի դպրոցներում, ինչը թույլ չի տալիս անհատական աշխատանք կատարել աշակերտների հետ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները, հայոց լեզվի դասաժամերի կրճատումը /երեխան ամեն օր պետք է ուսումնասիրի իր մայրենի լեզուն/, դասագրքերի խրթին լեզուն, գրականության դասագրքերում ընդգրկված երկարաշունչ գործերի ուսուցման աննպատակահարմարությունը: Փորձառու ուսուցիչներն առաջարկում են դրանք փոխարինել 1-2 էջանոց, բայց բովանդակային մեծ խորք ունեցող գործերով, որոնցով այնքան հարուստ է մեր գրականությունը: Գյուղական դպրոցների ուսուցիչների ցանկությունն է ունենալ ավագ դպրոցի հումանիտար հոսքի գոնե մեկ դասագիրք՝ ուսումնասիրելու և այն աշակերտների լրացուցիչ պարապմունքների համար, ովքեր ուզում են ուսումը շարունակել հումանիտար ուղղությամբ: Ուսուցիչների իրավացի դժգոհության տեղիք է տալիս 7-9-րդ դասարանների գրականության դասագրքերի և ծրագրերի անհամապատասխանությունը:

Շատ են ներառական կրթության մեջ ընդգրկված երեխաները Ստեփանակերտի հ. 2, Շուշիի Խ. Աբովյանի անվ. հիմն. դպրոցներում, որոնց հետ հատուկ համակարգված աշխատանք է պահանջվում:

Ավագ կամ հոսքային դպրոցներում մայրենիի փորձառու ուսուցիչների ջանքերը դասարանների մի մասում նկատելի արդյունք չեն տալիս, քանի որ այս դասարաններում ընդգրկվել են երեխաներ, ովքեր ո՛չ ցանկություն, ո՛չ ունակություն ունեն առարկան խորացված ուսումնասիրելու և այստեղ հայտնվել են՝ չիմանալով՝ ուր գնալ:

Շատ դպրոցներում աշակերտները մասամբ են ապահովված դասագրքերով: Ոչ բոլոր աշակերտներն են խնամքով պահում դասագրքերը՝ կորցնում են կամ քրքրում, և քանի որ դրանք չեն վերականգնվում, տարեցտարի ավելի զգալի է դառնում դասագրքերի պակասը: Գուցե համապատասխան կարգ մշակվի, որով դրամական տուգանք կսահմանվի յուրաքանչյուր կորցրած դասագրքի համար: Դա, անշուշտ, կզգաստացնի աշակերտներին, որ հնարավորինս խնամքով պահեն դասագրքերը:

Աղքատիկ է գրադարանային ֆոնդը շատ դպրոցներում: Սակավ է ծրագրային գրականությունը հատկապես Մարտակերտի շրջանի դպրոցներում: Վիճակը ինչ-որ չափով փրկում են գրականության քրեստոմատիաները, որոնք հնարավորություն են ընձեռում գոնե հատվածաբար ծանոթանալու ուսումնասիրվող ծրագրային նյութին: Ընթերցող աշակերտի, ինչպես և ուսուցիչների համար լավ նվերներ են վերջին երկու տարում նախարարությունից առաքվող «Իմ գրադարանը» մատենաշարի գրքերը, որոնց քանակը տարեցտարի ավելանում է: Հարուստ գրադարաններ ունեն Ստեփանակերտի h.2, h.8 դպրոցները:

Սովորողների մի ստվար մաս կրտսեր դպրոցից միջին դպրոց է անցնում՝ առանց տիրապետելու ընթերցանության տեխնիկային: Պարզ է, որ նման աշակերտը չի յուրացնի նաև մյուս առարկաները: Ուսուցիչներին անհրաժեշտ է տարբեր հնարներով նրանց մեջ դաստիարակել ընթերցասիրություն՝ ելնելով յուրաքանչյուրի նախասիրությունից:

Թույլ է համագործակցությունը ուսուցիչների միջև: Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ:

Շատ դպրոցներում աշխատանքներ են տարվում առարկայական կաբինետների ստեղծման ու կահավորման ուղղությամբ: Մի շարք դպրոցներում դրանք կան, բայց չեն գործում շենքային պայմանների պատճառով, ուստի անհրաժեշտ է ունեցած բոլոր նյութերը անպայման դարձնել շարժական և օգտագործել համատեղ՝ ըստ անհրաժեշտության: Այս առումով արժե նշել Ավետարանոցի, Խրամորթի, Բերդաշենի, Աստղաշենի, Ստեփանակերտի h. 8, Հաթերքի դպրոցները, որտեղ կահավորված են գործող առարկայական կաբինետներ:

Ոչ բոլոր ուսուցիչներն են կիրառում դասավանդման արդյունավետ մեթոդներ, դասերն անցկացնում են ուսուցչակենտրոն մեթոդներով. ուսուցիչն ավելի շատ խոսում է, քան խոսեցնում, մինչդեռ ուսուցիչն այսօր, հրաժարվելով սովորեցնողի, ամեն ինչ պատրաստ մատուցելու իր դերից, պետք է դառնա ուսուցման գործընթացը կազմակերպող ու կողմնորոշող՝ չթողնելով, որ աշակերտը միայն անհաղորդ լսի, այլ դասը բացատրի հենց նրա միջոցով:

Դպրոցների մի մասում ձևական են ստեղծված առարկայական մեթոդմիավորումները, կամ ՄՄ նախագահներ են նշանակվում ուսուցիչներ, ովքեր բավականաչափ փորձ չունեն, և հենց իրենք մեթոդական օգնության կարիք ունեն: Լուրջ աշխատանք պետք է կատարել մեթոդմիավորումները երիտասարդ ուսուցիչների ստաժավորման կենտրոն դարձնելու համար՝ նկատի ունենալով, որ նրանց մեջ կան մեթոդամանկավարժական անհրաժեշտ պատրաստվածություն չունեցող ուսուցիչներ:

Այլ թերությունների շարքում հարկ է նշել, որ դասերն անցկացվում են առանց բնագրերի, ոչինչ չի արվում դասերը դիտողական դարձնելու համար: Միապաղաղ ու անհետաքրքիր անցան մեր լսած դասերը Խերխանի, Վարդաձորի, Քոլատակի, Ն. Խարխափուտի դպրոցների ուսուցիչների մոտ: Ստուգումներից կարելի է մի շարք այլ եզրահանգումներ ևս կատարել: Այսպես՝ նույն ուսուցչուհու դասը ավելի արդյունավետ է անցնում միջին դասարաններում, քան բարձր դասարաններում, որտեղ սովորողները դասին ներկայանում են մեծ մասամբ անպատրաստ, անտարբեր են, անպատասխանատու: Հիմնական դպրոցներում իններորդցիների մոտ մյուս դասարանների համեմատությամբ որոշ պասիվություն է նկատվում, որ նշում են նաև ուսուցիչները՝ բացատրելով տարիքային առանձնահատկություններով: Նման վիճակը ուսուցիչներին պետք է դրդի պրպտելու և գտնելու այս դասարաններում դասը հետաքրքիր դարձնելու, միօրինակությունից խուսափելու միջոցներ և հնարներ՝ ուսուցումը համապատասխանեցնելով այսօրվա բարձրդասարանցու կյանքին, ապրած ժամանակին:

Ցավով պետք է նշել, որ աշակերտների մի ստվար մասը, հատկապես գյուղական սակավակազմ դպրոցներում, միջակ և ավելի ցածր կարողությունների տեր է: Նշված դպրոցներում աշակերտների մեծ մասը կրտսեր և միջին համակարգում չի յուրացնում լեզվական հիմնարար իրողությունները, չի տիրապետում պետական կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների նվազագույնին: Հարցերին պատասխանում են բարբառով, չգիտեն պարզագույն հարցերի պատասխանները, չունեն ստեղծագործելու կարողություններ: Բոլոր դպրոցներում էլ ուսուցիչները լուրջ անելիքներ ունեն բարբառային շեշտադրության, ձայնավորների և բաղաձայնների անհարկի քմայնացման, թվականների սխալ արտասանության, բառերի ու քերականական ձևերի այլ աղավաղումների բացառման, կապակցված խոսք կառուցելու ունակությունների զարգացման գործում:

Ստուգումների ընթացքում ուսուցիչներին ցուցումներ են տրվել թեմատիկ պլանավորումների և դասապլանների կազմման, մատենավարության, գնահատման միավորային համակարգի կիրառման առնչությամբ՝ նկատի ունենալով թերությունները:

Տեսչավորված դպրոցներից առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին հայոց լեզվից մասնակցել են Ստեփանակերտի h. 8, Մարտունու շրջանի Բերդաշենի, Շուշիի Մուրացանի և Խ. Աբովյանի անվան, Մարտակերտի շրջանի Հաթերքի դպրոցների աշակերտները, գրականությունից՝ նշված դպրոցներից բացի՝ նաև Մարտակերտի շրջանի Մաղավուզի դպրոցի աշակերտները: Իսկ Հաթերքի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Արշալույս Գրիգորյանը, մասնակցելով նաև եզրափակիչ փուլին, ստացել է երրորդ կարգի դիպլոմ:

Ընդհանուր առմամբ՝ թույլ է աշակերտների գրավոր խոսքը: Հաշվետվությանը կցվում է 5-12-րդ /հիմնական դպրոցներում՝ 9-րդ/ դասարաններում հայոց լեզվից տրված գրավոր աշխատանքների /թելադրություն/ արդյունքների աղյուսակը, ըստ որի ցածր առաջադիմություն և 0 % որակ են գրանցվել Խերխանի, Մոխրաթաղի, Պողոսագոմերի, Վարդաձորի մասնաճյուղի դպրոցներում, Մարտունու արհեստագործական ուսումնարանում: Համեմատաբար բարձր ընդհանուր և որակական առաջադիմություն է գրանցվել Ստեփանակերտի h. 8, Շուշիի Մուրացանի անվան ավագ, Ստեփանակերտի h. 2 հիմնական, Ավետարանոցի, Վանի, Հաթերքի միջնակարգ դպրոցներում: Առարկայի դասավանդման դրվածքի բարելավման նպատակով ուսուցիչներին հանձնարարվել է՝

- հղկել սեփական խոսքը և նույնը պահանջել սովորողներից. բացառել բարբառը, բարբառային շեշտը. մայրենիի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մտահոգված լինի, թե իր խոսքով որքանով է նպաստում մեր ոսկեղենիկ լեզվի զարգացմանը. դպրոցում ստեղծել լեզվական բարենպաստ մթնոլորտ. սա պետք է մտահոգի բոլոր ուսուցիչներին, քանի որ լեզուն է մյուս բոլոր առարկաների յուրացման բանալին.
- շարունակել զբաղվել ինքնակրթությամբ, ձեռք բերել և ուսումնասիրել նոր ուսումնաօժանդակ գրականություն. միայն անընդհատ սովորող ուսուցիչը սովորեցնելու իրավունք ունի.
- սերտորեն համագործակցել՝ աշխատանքի ընթացքում անընդհատ կատարելագործելով դասավանդման մեթոդները, ձգտելով առարկայի հանդեպ հետաքրքրություն առաջացնել աշակերտների մեջ.
- հանգամանորեն պատրաստվել յուրաքանչյուր դասի՝ հստակ որոշելով յուրաքանչյուր երեխայի անելիքը դասի ընթացքում, փորձելով դասերը դարձնել հնարավորինս հագեցած ու բովանդակալից. հաճախացնել փոխադարձ դասալսումներն ու դրանց քննարկումները.
- մայրենիի յուրաքանչյուր դաս դարձնել խոսքի զարգացման դաս՝ լեզվական կանոնների յուրացումը համատեղելով խոսքի զարգացման առաջադրանքների հետ.
- պատշաճ մակարդակով անցկացնել անցածի կրկնության և ամփոփման դասերը. մեծ տեղ տալ բառակազմական, ձևաբանական, շարահյուսական վերլուծություններին՝ որպես անցածի կրկնության փայլուն միջոցների.
- յուրաքանչյուր գրողի ներկայացնել կենսագրական մանրամասներով, մարդկային բնավորության, նկարագրի, խառնվածքի բացահայտումներով, ըստ հնարավորին օգտագործելով նրանց հուշերը, հոդվածներն ու նամակները՝ ավելի շատ ու կենդանի նյութ հաղորդել գրողների մասին, քանի որ գրողի ստեղծագործությունը շատ կողմերով պայմանավորված է նրանց կյանքով. գրում են այնպես, ինչպես ապրում են.
- գրական յուրաքանչյուր ստեղծագործություն ուսումնասիրել որպես արվեստի ստեղծագործություն՝ կարևորելով նաև հեղինակի լեզվաոճական առանձնահատկությունները.
- հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները՝ սովորողների մոտ դաստիարակել ընթերցասիրություն. նրանց գիտակցել տալ, որ տեղեկատվական ոչ մի աղբյուր չի կարող փոխարինել գրքին. կրտսեր համակարգում լուրջ աշխատանք կատարել՝ մշակելու աշակերտների ընթերցանության տեխնիկան.
- դասերը դարձնել հնարավորինս դիտողական. համատեղ ուժերով պատրաստել և օգտագործել քարտադարաններ, գծապատկերներ, ուսումնասիրվող հեղինակներին նվիրված ալբոմներ, այլ ուսումնադիտողական նյութեր.
- ըստ հնարավորին կազմակերպել համակարգչային դասեր. համացանցի հնարավորությունների ճիշտ օգտագործումը դասերը դարձնում է տպավորիչ ու հագեցած.
- ճիշտ կիրառել միավորային գնահատման համակարգը, պահպանել գրավոր աշխատանքների ստուգման որակական կողմը:

| հհ | Կրթօջախի անվանումը | 5-12/9/-րդ. դդ-աշակ. քանակը | Գրավոր աշխ. մասնակիցների քանակը | Առաջադիմ. % | Որակ % |
|---|---|---|---|---|---|
| | Ստեփանակերտ | | | | |
| 1. | Ստեփ.հ. 2 հիմն. դպր. | 360 | 308 | 63 | 24 |
| 2. | Ստեփ. հ. 8 ավագ դպր. | 468 | 414 | 73 | 25 |
| | Ասկերանի շրջան | | | | |
| 3. | Ավետարանոցի միջն.դ. | 110 | 104 | 64 | 21 |
| 4. | Սղնախի միջն.դ. | 20 | 19 | 47 | 5 |
| 5. | Խրամորթի միջն.դ. | 34 | 32 | 47 | 16 |
| 6. | Հարավի միջն. դպր. | 21 | 19 | 79 | 11 |
| 7. | Աստղաշենի միջն.դ. | 45 | 42 | 52 | 14 |
| | Մարտակերտի շրջան | | | | |
| 8. | Քոլատակի միջն.դ. | 26 | 25 | 52 | 12 |
| 9. | Մաղավուզի միջն.դ. | 52 | 50 | 54 | 24 |
| 10. | Մոխրաթաղի միջն.դ. | 17 | 17 | 35 | 0 |
| 11. | Ճանկաթաղի միջն.դ. | 34 | 32 | 50 | 19 |
| 12. | Վարդաձորի մասնաճյուղ | 6 | 6 | 0 | 0 |
| 13. | Դրմբոնի միջն.դ. | 46 | 34 | 53 | 12 |
| 14. | Պողոսագոմերի միջն. դ. | 15 | 15 | 33 | 7 |
| 15. | Հաթերքի մ.դ. | 184 | 157 | 71 | 47 |
| 16. | Չափարի մ.դ. | 33 | 31 | 68 | 19 |
| | Մարտունու շրջան | | | | |
| 17. | Ծովատեղի հիմն.դ. | 22 | 22 | 59 | 19 |
| 18. | Խերխանի հիմն. դ. | 11 | 10 | 10 | 0 |
| 19. | Մարտունու արհեստագործական ուս. | 206 | 93 | 54 | 5 |
| 20. | Բերդաշենի միջն.դ. | 132 | 127 | 57 | 16 |
| 21. | Աշանի միջն. դ. | 72 | 68 | 56 | 24 |
| 22. | Նորշենի մ.դ. | 37 | 37 | 57 | 11 |
| | Հադրութի շրջան | | | | |
| 23. | Տողի միջն. դ. | 66 | 49 | 55 | 29 |
| | Շուշիի շրջան | | | | |
| 24. | Շուշիի ավագ դպր. | 110 | 106 | 63 | 37 |
| 25. | Շուշիի հումանիտար քոլեջ | | 46 | 50 | 20 |
| 26. | Շուշիի Խ. Աբով. անվ. դ. | 198 | 171 | 48 | 26 |
| | Քաշաթաղի շրջան | | | | |
| 27. | Բերձորի հ. 2 միջն. դ. | 91 | 78 | 58 | 12 |
| 28. | Միջնավանի մ.դ. | 37 | 35 | 60 | 11 |
| 29. | Վանի մ.դ. | 22 | 21 | 81 | 33 |
| | Շահումյանի շրջան | | | | |
| 30. | Քնարավանի միջն. դ. | 12 | 11 | 46 | 9 |
| 31. | Նոր Խարխափուտի միջն.դ. | 10 | 9 | 44 | 11 |

**Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Ե. ՄԻՐԶՈՅԱՆ**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչներ**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

ԼՂՀ հանրակրթական դպրոցներում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումն իրականացվում է պետական չափորոշչին համապատասխան` ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ ԿԱ-ի կողմից հաստատված ծրագրերով ու դասագրքերով:

Տեսչավորումը ցույց տվեց, որ դպրոցներում ապահովվում է ռուսաց լեզվի դասավանդման որակը: Սովորողները հետաքրքրություն ունեն ուսման, առարկայի նկատմամբ, իսկ ուսուցիչներն իրենց աշխատանքով նպաստում են դրան:

Դասերի հիմքում ընկած են ուսուցչի և աշակերտի փոխադարձ վստահությունը և հարգանքը, համագործակցությունը, երեխայի ստեղծագործական կարողությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

2014-2015 ուստարում տեսչավորվել է 30 դպրոց, որի ընթացքում 61 ուսուցիչ ստացել է մեթոդական օգնություն:

Տեսչավորման ընթացքում ուսուցիչների կողմից օգտագործվել են տարբեր բարդության առաջադրանքներ, կիրառվել են ճանաչողական բնույթի խաղեր /տարրական դասարաններում/, մանկավարժական նոր տեխնոլոգիաներ:

Ստուգման արդյունքում կուզեի նշել ռուսաց լեզվի առարկայական մասնախմբերի աշխատանքը`

- Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան ավագ դպրոցում,
- Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հիմնական դպրոցում:

Նշյալ դպրոցների սովորողները հատուկ վերաբերմունք ունեն ռուսաց լեզվի դասերի հանդեպ: Նրանք սիրով են ընթերցում ռուսերենով, վերարտադրում են ընթերցածի բովանդակությունը, մասնակցում են տարբեր մրցույթների, լույս են ընծայում նշանավոր տարեդարձերին նվիրված պատի թերթեր, միջանցքներում փակցված են պաստառներ` ռուսաց լեզվով:

Հնարավոր չէ չնշել Ստեփանակերտի հ. 8 դպրոցի ուսուցիչների բազմամյա փորձը: Նրանք կարողանում են ակտիվացնել դասարանը, սովորեցնում են երեխաներին մտածել:

Նկատի ունենալով գրավոր աշխատանքների լավ արդյունքները, առարկային ու նրա մեթոդներին տիրապետելը` հ. 8 դպրոցի ռուսաց լեզվի մեթոդմիավորման աշխատանքը գնահատվել է «լավ»:

Հարկ է նշել Բերձորի հ. 2 դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Կարինե Մովսիսյանի բարձր վարպետությունը: Երկար տարիներ աշխատելով Քաշաթաղի շրջվարչակազմի կրթության բաժնում որպես ռուսաց լեզվի մասնագետ` նա իսկայական աշխատանք է կատարել շրջանում ռուսաց լեզվի դասավանդման ուղղությամբ, կազմակերպել է միջոցառումներ Ռուսաց լեզվի օրերի, Թարիվերդիևին նվիրված երաժշտության օրերի շրջանակներում: Տեսչավորման արդյունքում Կ. Մովսիսյանի աշխատանքը գնահատվել է «լավ»:

Իրենց արդյունավետ աշխատանքով նկատելի առանձնանում են ռուսաց լեզվի ներքոհիշյալ ուսուցիչները. Ռ. Բալայան /Մարտակերտի շրջ. Մաղավուզի մ.դ./, Ս. Ավետիսյան /Մարտունու արհեստագործական դպրոց/, Ջ. Վարդանյան /Մարտունու շրջ. Աշանի մ.դ./, Ռ. Թադևոսյան /Միջնավանի մ.դ./, Լ. Հարությունյան, Լ. Ծատուրովա /Շուշիի Խ. Աբովյանի անվ. հիմնական դպրոց/, սկսնակ ուսուցիչ Շ. Ադամյան /Մարտակերտի շրջ. Ճանկաթաղի մ.դ./:

Տեսչավորման ընթացքում բացահայտվել են հետևյալ թերությունները.

- աշխատանքային տետրերում բացակայում են նոր դասանյութի վերաբերյալ գրառումներ.
- ուսուցիչները նոր նյութը բացատրում են` առանց օգտագործելու գրատախտակը կամ պրոյեկտորը /չպետք է մոռանալ, որ դասի հիմնական մասը անհրաժեշտ է հատկացնել նոր նյութի ուսուցանմանն ու ամրապնդմանը: Նոր նյութի բացատրությունը պետք է ուղեկցվի գրատախտակին կատարված գրառումներով, որոնք աշակերտները անպայման պետք է մտցնեն տետրերը` թեմայի ամրապնդման համար/.
- դասագործընթացում բացակայում է տրամաբանական անցումը մի փուլից մյուսին, դասի կառուցվածքային տարրերը չեն փոխկապակցվում.
- քիչ տեղ է տրվում բառային աշխատանքին. այն, կարելի է ասել, շարունակում է ձևական բնույթ կրել առանձնապես գյուղական դպրոցներում. մեծ տեղ է տրվում հայերեն թարգմանությանը, իսկ բառակազմությանը, բառակապակցությունների, նախադասությունների կազմմանը, հոմանիշների, հականիշների ընտրությանը, մի խոսքով` բառապաշարի հարստացմանը ժամանակ չի հատկացվում. հարկ է նկատի ունենալ` թարգմանությունը թույլատրելի է այն ժամանակ, երբ ուսուցիչն արդեն գործածել է բացատրության բոլոր ձևերը /նկարներ, այլ դիտողական պարագաներ, բառի բացատրություն նկարագրական եղանակով.
- գյուղական դպրոցներում ռուսաց լեզվի ուսուցչի և աշակերտի հաղորդակցման լեզուն շարունակվում է մնալ հայերենը, որն անթույլատրելի է: Ռուսերենի ուսուցիչը կրթօջախում պետք է ստեղծի լեզվական բարենպաստ միջավայր:

Անհրաժեշտ է նշել նաև, որ շատ ուսուցիչների կողմից դասերն անց են կացվում հիմնականում ավանդական մեթոդներով և, ըստ էության, միանման, չեն օգտագործվում ուսուցման ժամանակակից մեթոդներ` խմբային, զույգերով աշխատանք, շերտավորված առաջադրանքներ` միաժամանակ առաջ տանելու համար և´ թույլերին, և´ ուժեղներին:

Ինչ վերաբերում է ավագ դպրոցին, այստեղ նոր նյութի հաղորդման ժամանակ պետք է հենվել աշակերտների արդեն յուրացրած գիտելիքների վրա, օգտագործել ուսումնասիրված քերականական նյութը թեմայի խորացված ընկալման համար, հաշվի առնել սովորողների փորձը, առավել իմաստավորված մոտեցում ցուցաբերել ուսումնասիրվող նյութի հանդեպ:

Ուստարվա ընթացքում տնօրենությանն անհրաժեշտ է դասալսումներ կատարել և վերահսկել ուսուցիչների աշխատանքը ներքոհիշյալ նպատակներով.

- վերահսկել ուսուցիչների մեթոդական պատրաստվածությունը,
- ուշադրություն դարձնել ընթերցանության տեխնիկային և գրավոր խոսքին,
- վերահսկել դպրոցական փաստաթղթերի վարումը /մատյաններ, աշխատանքային և թեմատիկ աշխատանքների տետրեր/,
- կարևորել թեմատիկ աշխատանքների անցկացումը /թեստեր, թելադրություն` առաջադրանքներով և այլն/,
- վերահսկողության յուրաքանչյուր փուլից հետո անցկացնել ուսուցչի 2-3 տարվա աշխատանքի համեմատական վերլուծություն` հաշվի առնելով մասնակցությունը ռուսաց լեզվի օլիմպիադային, մրցույթներին, միջոցառումներին,
- բաց դասերին նկատի ունենալ տարբեր բարդության առաջադրանքների կատարումը,
- ստուգել սովորողների տետրերի առկայությունը, դրանց վարման և ստուգման որակը, ուսուցչի աշխատանքը սովորողների գրավոր խոսքի զարգացման ուղղությամբ,
- ուշադրություն դարձնել` տնային և դասարանական աշխատանքի ծավալը համապատասխանո՞ւմ է պահանջվող չափանիշներին:

Առարկայի դասավանդման գործում ունեցած նվաճումներից մեկը Ռուսաց լեզվի օրերի կազմակերպումն է` «ԼՂՀ ռուսական համայնք» հասարակական կազմակերպության, ՀՀ-ից և ՌԴ-ից ժամանած հյուրերի մասնակցությամբ: Նշյալ հերթական միջոցառումը տեղի ունեցավ 2014թ. նոյեմբերի 17-21-ը, որի շրջանակներում բարձր մակարդակով անցկացվեցին`

- ասմունքի մրցույթը ԼՂՀ ավագ դպրոցների թիմերի միջև` նվիրված Մ. Յու. Լերմոնտովի 200-ամյակին,
- ռուսաց լեզվի ուսուցիչների մեթոդական խորհրդակցություն,
- զինվորական երգի երեկո,
- ռուսաց լեզվի տոն Մարտունու հ. 1 դպրոցում,
- պոետական ներկայացում «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում,
- նկարների փառատոն Ստեփանակերտի հիմնական դպրոցների սովորողների միջև,
- գրական-երաժշտական հանդես ԱրՊՀ-ում,
- երաժշտական երեկո Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջում:

ԼՂՀ ԿԳ նախարարությունը իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, որոնք իրենց մասնակցությունն են բերել նշյալ միջոցառումների իրականացմանը:

Արժե նշել Ստեփանակերտի հ.հ. 3, 8, 11, Մարտունու հ.հ. 1, 2 դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների աշխատանքը սովորողներին օլիմպիադային նախապատրաստելու ուղղությամբ, նրանք մեծ տեղ են հատկացնում ռուսերենի արտասանության և շեշտի, ռուսաց լեզվի բառապաշարի և քերականության առանձնահատկությունների հետ կապված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Եվ այս ամենի արդյունքն է նրանց աշակերտների մասնակցությունը օլիմպիադայի հանրապետական և եզրափակիչ փուլերին, որտեղ նրանցից շատերն արժանացել են պատվոգրերի և դիպլոմների: Ահա նրանց անունները.

հանրապետական փուլ

1. Սյուզաննա Ներսիսյան` Ստեփ. հ. 3 դպրոց, VIII դաս. / III տեղ, ուսուցչուհի` Գ. Աղամյան/,
2. Մարիաննա Աղաբեկյան`Ստեփ. հ. 3 դպրոց, VIII դաս. /III տեղ, ուսուցչուհի` Գ. Աղամյան/,
3. Դինա Գասպարյան` Ստեփ. հ. 3 դ` Ջ. Մարտիրոսյան/,
4. Արման Գրիգորյան` Ստեփ. հ. 3 դպրոց, XI դաս. /I տեղ, ուսուցչուհի` Ջ. Մարտիրոսյան/,
5. Լուսինե Համզոյան` Ստեփ. հ. 5 դպրոց, XII դաս. /ակտիվ մասնակից, ուսուցչուհի` Կ. Առաքելյան/,
6. Արամ Երեմյան` Ստեփ. հ. 11 դպրոց, XI դաս. / III տեղ, ուսուցչուհի` Մ. Ազարյան/,
7. Մարիա Բարսեղյան` Մարտունու հ.1 դպրոց, Xդաս. / II տեղ, ուսուցիչ` Է. Բաբայան/:

Նշյալ բոլոր 7 աշակերտները մասնակցել են Երևանում կայացած եզրափակիչ փուլին, որի արդյունքներն են`

1. Արամ Երեմյան`I կարգի դիպլոմ,
2. Դինա Գասպարյան` II կարգի դիպլոմ,
3. Մարիաննա Աղաբեկյան`III կարգի դիպլոմ,
4. Արման Գրիգորյան` III կարգի դիպլոմ:

Ա. Երեմյանը և Դ. Գասպարյանը մասնակցել են նաև Մոսկվայում կայացած միջազգային օլիմպիադային և հայտնվել լավագույն տասնյակում:

Ռուսաց լեզվի ուսուցիչը հայկական դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում հանդիպում է մի շարք խնդիրների.

- դպրոցները բավարար չափով ապահովված չեն դիտողական պարագաներով,
- առարկային հատկացված ժամաքանակը բավարար չէ աշակերտի բոլոր հնարավորությունները օգտագործելու համար, լավագույն դեպքում յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրմանը հատկացվում է մեկական ժամ, ժամաքանակը չի հերիքում կատարելու տեքստային աշխատանք, ամրակայող վարժություններ, էլ չենք խոսում ուսուցման նոր մեթոդների օգտագործման մասին,
- ավագ դպրոցի բնագիտական հոսքի դասագրքերում չկան անհրաժեշտ նյութեր կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, մաթեմատիկայի վերաբերյալ, «Ռուս գրականություն» դասագրքի II մասում ընդգրկված նյութը հետաքրքիր է , բայց այստեղ ևս ժամանակի սղությունը թույլ չի տալիս կատարել ծրագրի բոլոր պահանջները,
- դասագրքերում բացակայում են տեսական նյութին առնչվող աղյուսակները, գծապատկերները, մինչդեռ դրանք մեծ դեր ունեն ուսումնական նյութի տեսողական ընկալման համար:

Յուրաքանչյուր տարի` միասնական քննություններից հետո, ծնողներն ու երեխաները խոսում են թեստերի բարդության մասին: Դրանք, իրոք, հեշտ չեն հայկական դպրոցի սովորողի համար: Ունեն ակադեմիական բնույթ, առավել համապատասխանում են ռուսական դպրոցի սովորողներին, բանասիրական ֆակուլտետի ուսանողներին: Թեստերը կազմելիս հաշվի չեն առնվել հեռավոր գյուղական դպրոցների սովորողների հնարավորությունները: Լավ կլիներ` քննական թեստեր կազմողները հիմք ընդունեին գործող դպրոցական դասագրքերը, ընդ որում` հաշվի առնելով հայկական դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները:

Նշենք նաև, որ վերոնշյալ խնդիրները զրոյի են հավասարեցնում ուսուցիչների բարեխիղճ ու քրտնաջան աշխատանքը: Եթե դասագրքերի և շտեմարանների հեղինակները նկատի ունենային ուսուցիչների կարծիքներն ու առաջարկությունները, դա կնպաստեր ավելի բարձրացնելու առարկայի վարկը:

Անշուշտ, ցանկալի է սերտ համագործակցություն ստեղծել հանրապետության ռուսաց լեզվի ուսուցիչների և ՀՀ, ՌԴ գործընկերների միջև:

Անհրաժեշտ է հիշել` հայ երեխաների մեջ հոգատար վերաբերմունք դաստիարակելով այլ մշակույթի հանդեպ`դրանով իսկ սեր ու հարգանք ենք ներարկում նրանց մեջ դեպի սեփական ժողովրդի լեզուն ու մշակույթը և, բնականաբար, հոգեպես կրկնակի ենք հարստանում:

| հ/հ | Կրթօջախի անվանումը | 5-12/9/-րդ դդ.աշակ. քանակը | Գրավոր աշխ. մասնակիցների քանակը | Առաջադիմ. % | Որակ % |
|---|---|---|---|---|---|
| | Ստեփանակերտ | | | | |
| 1. | Ստեփ.հ. 2 հիմն. դպր. | 390 | 512 | 82 | 48 |
| 2. | Ստեփ. հ. 8 ավագ դպր. | 218 | 185 | 82 | 39 |
| | Ասկերանի շրջան | | | | |
| 3. | Ավետարանոցի միջն.դ. | 32 | 32 | 71 | 25 |
| 4. | Սղնախի միջն.դ. | 12 | 12 | 58 | 0 |
| 5. | Խրամորթի միջն.դ. | 27 | 25 | 40 | 4 |
| 6. | Հարավի միջն. դպր. | 32 | 32 | 71 | 25 |
| 7. | Աստղաշենի միջն.դ. | 35 | 34 | 70 | 29 |
| | Մարտակերտի շրջան | | | | |
| 8. | Քոլատակի միջն.դ. | 12 | 12 | 41 | 16 |
| 9. | Մաղավուզի միջն.դ. | 42 | 39 | 61 | 25 |
| 10. | Ճանկաթաղի միջն.դ. | 28 | 28 | 36 | 11 |
| 11. | Դրմբոնի միջն.դ. | 30 | 27 | 55 | 18 |
| 12. | Պողոսագոմերի միջն. դ. | 19 | 19 | 63 | 15 |
| 13. | Հաթերքի մ.դ. | 107 | 91 | 71 | 26 |
| 14. | Չափարի մ.դ. | 13 | 12 | 92 | 41 |
| | Մարտունու շրջան | | | | |
| 15. | Ծովատեղի հիմն.դ. | 24 | 24 | 42 | 12,5 |
| 16. | Մարտունու արհեստագործական ուս. | 75 | 63 | 61 | 9 |
| 17. | Բերդաշենի միջն.դ. | 118 | 115 | 71 | 17 |
| 18. | Աշանի միջն. դ. | 51 | 48 | 62 | 31 |
| 19. | Նորշենի մ.դ. | 20 | 20 | 75 | 20 |
| | Հադրութի շրջան | | | | |
| 20. | Տողի միջն. դ. | 47 | 47 | 53 | 21 |
| | Շուշիի շրջան | | | | |
| 21. | Շուշիի Մուրացանի անվ. ավագ դպր. | 29 | 27 | 81 | 11 |
| 22. | Շուշիի Խ. Աբով. անվ. դ. | 179 | 154 | 66 | 32 |
| | Քաշաթաղի շրջան | | | | |
| 23 | Բերձորի հ. 2 միջն. դ. | 32 | 32 | 93 | 60 |
| 24 | Միջնավանի մ.դ. | 33 | 30 | 60 | 13 |
| 25 | Վանի մ.դ. | 13 | 13 | 53 | 7 |
| | Շահումյանի շրջան | | | | |
| 26 | Նոր Խարխափուտի միջն.դ. | 10 | 9 | 40 | 20 |

**Ռ. ՕՍԻՊՈՎ**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչ**

## ԱՆԳԼԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ

2014 թ. սեպտեմբերից 2015 թ. մայիս ընկած ժամանակահատվածում տեսչության հանձնախմբի կազմում հանրապետության հետևյալ` Քաշաթաղի շրջանի Բերձորի հ.2 միջնակարգ, Մարտակերտի շրջանի Մաղավուզի, Ճանկաթաղի, Պողոսագոմերի, Դրմբոնի, Հաթերքի, Չափարի, Հադրութի շրջանի Տողի, Շուշիի Մուրացանի անվան հ. 1 ավագ դպրոցի, Խ.Աբովյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի, Շուշիի հումանիտար քոլեջի, Ասկերանի շրջանի Ավետարանոցի, Սղնախի, Խրամորթի, Աստղաշենի, Հարավի, Մարտունու արհեստագործական ուսումնարանի, Մարտունու շրջանի Նորշենի, Աշանի, Բերդաշենի, Ստեփանակերտի հ. 8 ավագ և հ. 2 հիմնական դպրոցներում իրականացվել է անգլերենի դասավանդման դրվածքի ստուգում և մեթոդական օգնության ցուցաբերում:

Ամփոփելով կատարածը` նշենք, որ ընդհանուր առմամբ, չնայած վերհանված թերություններին` բավարար է անգլերենի` որպես օտար լեզվի, լավ` ֆրանսերենի` որպես երկրորդ օտար լեզվի, դասավանդման դրվածքը: Դասավանդող ուսուցիչների մեծ մասը բարձրագույն կրթությամբ մասնագետներ են, կան այնպիսիները, ովքեր փոխարինում են ֆիզիոլոգիական արձակուրդում գտնվող հիմնական մասնագետներին: Ստուգված դպրոցներից հարկ է նշել Ստեփանակերտի հ. 8 և հ. 2 դպրոցներում անգլերենի և ֆրանսերենի դասավանդման բավականին ամուր դրվածքի մասին, որտեղ ուսուցիչները /Ի.Միրզոյան, Է.Ապրեսյան, Գ.Լալաբեկյան, Դ.Ասրյան, Դ.Սարգսյան և այլք/ ջանադրությամբ կատարում են մանկավարժի բարդ և միաժամանակ պատասխանատու գործը, տիրապետում են իրենց մասնագիտությանը և դասավանդման մեթոդիկային, ովքեր դասերը վարում են ժամանակակից դասին ներկայացվող պահանջներին համաձայն. կիրառում են համակարգիչը և համացանցի ընձեռած հնարավորությունները, դասերը դարձնում են դիտողունակ և հետաքրքիր, նաև աշակերտների մոտ սեր են առաջացնում առարկայի հանդեպ, կիրառում են ինտերակտիվ մեթոդներ /Ի.Միրզոյան, Է.Խաչատրյան, Գ.Լալաբեկյան, Ս.Հայրապետյան և այլն/: Շրջանների մեծ մասի դպրոցներում դասավանդումը բավարար հիմքերի վրա է, ինչպես, օրինակ` Շուշիի Մուրացանի անվան ավագ /ուսուցչուհի` Ս.Հայրապետյան/, Խ.Աբովյանի անվան հիմնական /ուսուցիչներ` Հ.Ազատյան և Ն.Պետրոսյան/, Բերձորի հ. 2 մ/իջնակարգ /ուսուցիչ` Ա.Մկրտչյան/, Տողի միջնակարգ /ուսուցչուհի` Ջ.Ջավադյան/, Հարավի միջնակարգ /ուսուցիչներ` Վ.Մելքումյան, Գ.Հայրիյան/, Աշանի միջնակարգ /ուսուցիչ` Ա.Խաչատրյան/ դպրոցներում. այստեղ ուսուցիչները ջանադրաբար աշխատում են և կարող են հասնել հաջողությունների:

☞10

## ՏԵՍՉԱԿԱՆ

9☜ Բավականին պատասխանատվությամբ են աշխատում Մարտակերտի շրջանի Մաղավուզի և Հաթերքի միջնակարգ դպրոցների ուսուցիչներ Բ.Աբրահամյանը և Մ.Միրզոյանը, ովքեր նույնպես աշխատելու դեպքում կարող են հասնել հաջողությունների, ունեն մասնագիտական ունակություններ: Որոշ գյուղական դպրոցներում /Հաթերքի մ/դ, ուսուցչուհի՝ Մ.Միրզոյան/, Տողի մ/դ, ուսուցչուհի՝ Զ.Զավադյան/, Բերդաշենի մ/դ, ուսուցչուհի՝ Ս.Զարգարյան/, Խրամորթի մ/դ, ուսուցչուհի՝ Ն.Ներսեսյան/ առկա է ուսման որակ:

Տեսչավորված համարյա բոլոր դպրոցներում աշակերտները կարողանում են բավարար կարդալ, ակտիվ են դասաժամերի ընթացքում, պատասխանում են տրված հարցերին, պատրաստ են ներկայանում դասերին՝ տնային առաջադրանքներով, բառապաշարի յուրացմամբ, քերականական նյութի իմացությամբ: Անգլերենի ուսուցումը ստուգված դպրոցներում ունի հիմքեր, բայց կատարվելիք աշխատանքներ դեռևս շատ կան՝ սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Ուսուցիչները հիմնականում աշխատող են, զբաղվում են ինքնակրթությամբ, աշխատանքներ են տանում անգլերենի առարկայական կաբինետների ստեղծման ուղղությամբ, առկա կաբինետները համալրում են անհրաժեշտ պարագաներով: Արդեն համարյա բոլոր դպրոցները ապահովված են համացանցով, որոշ մասն ունի մեծէկրան հեռուստացույցներ՝ համացանցին միացված, որի օգնությամբ կարող են առցանց դասեր վարել, համակարգչային կաբինետներ, պրոյեկտորներ /Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց, հ. 2 հիմնական դպրոց, Տողի միջնակարգ դպրոց, Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոց, հ. 2 հիմնական դպրոց, Հաթերքի միջնակարգ դպրոց և այլն/, որն էլ հնարավորություն է ընձեռում դասավանդող ուսուցիչներին դասերը դարձնել հետաքրքիր և ավելի արդյունավետ, աշակերտներին ՝ ավելի շահարգրիռ և նպատակային:

Ստուգված դպրոցների երիտասարդ սկսնակ ուսուցիչների մեծ մասն ունի գիտելիքներ, համապատասխան մասնագիտական կրթություն, սակայն դասավանդման արդյունքի մասին դեռ վաղ է խոսել, նրանք հիմնականում նոր և դեռևս փորձ չունեցող մասնագետներ են, համապատասխան ինքնակրթության և աշխատանքին նվիրումով մոտենալու դեպքում անշուշտ կդառնան լավ մասնագետներ, կապահովեն ուսման որակ և առարկայի դասավանդման ամուր դրվածք:

Ցածր է դասավանդման դրվածքը Ասկերանի շրջանի Աստղաշենի, Մարտակերտի շրջանի Չափարի միջնակարգ դպրոցներում, Մարտունու արհեստագործական ուսումնարանում: 2014-2015 ուստարում տեսչավորված գյուղական հետևյալ դպրոցներում /Ավետարանոց, Աստղաշեն, Չափար/ թույլ է և՛ դասավանդող ուսուցիչների, և՛ սովորողների բանավոր խոսքը, ուսուցիչներն ունեն մասնագիտական թերություններ, լեզուն զարգացած չէ, այստեղից էլ պարզ է՝ սովորողը չի լսում և դժվարանում է խոսել, չկա անգլերեն հաղորդակցություն. դրա փոխարեն դասերը վարվում են հայերենով, և այն էլ՝ ոչ գրական: Իսկ փաստ է այն, որ եթե լեզուն չի օգտագործվում, մոռացության է տրվում, և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները պետք է հաղորդակցվեն դասավանդվող տվյալ լեզվով, կիրառության մեջ դրվի լեզուն: Քիչ է կատարվում աշխատանք ինքնակրթության ուղղությամբ, կամ էլ ուսուցիչն ընտրում է սխալ ուղղություն: Զբաղվելով ինքնակրթությամբ՝ ուսուցիչը աստիճանաբար պետք է վերացնի մասնագիտական թերությունները, սովորի չիմացածը: Ուսուցիչները չեն կիրառում դասավանդման արդյունավետ և ժամանակակից մեթոդներ, դասերն անցնում են ուսուցչակենտրոն մեթոդներով. ավելի շատ խոսում են /այն էլ հայերեն/, քան խոսեցնում, մինչդեռ ուսուցիչն այսօր, հրաժարվելով սովորեցնողի ակտիվ, ամեն ինչ պատրաստ մատուցելու իր դերից, պետք է դառնա ուսուցման գործընթացի կազմակերպող ու կողմնորոշող՝ չթողնելով, որ աշակերտը միայն անհաղորդ լսի, դասը բացատրելով հենց նրա միջոցով, այսինքն՝ կիրառի ուսուցման աշակերտակենտրոն մեթոդներ, դասերը վարի ժամանակակից պահանջներին համապատասխան, որպեսզի աշակերտները հետաքրքրություն ունենան առարկայի հանդեպ: Ժամանակակից տեխնոլոգիաների բուռն զարգացման շրջանում աշակերտները ձանձրանում են ավանդական մատուցմամբ դասագործընթացից, պետք է մեթոդներ մշակել՝ գրավելու նրանց հետաքրքրությունը և շահագրգռել սովորելու տվյալ առարկան: Իսկ դրանց ընտրությունը թողնվում է ուսուցիչների հայեցողությանը՝ ծրագրային նյութի շրջանակներում ապահովել դասերի դիտողունակությունը և հասնել արդյունքի: Հնարավորության դեպքում պետք է ստեղծել առարկայական կաբինետներ՝ թեկուզ հարակից այլ օտար լեզուների հետ /ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն/, և դասերը պարապել այնտեղ, քանի որ հենց կաբինետում են պահվում ձեռքի տակ եղած բոլոր նյութերը՝ պատի թերթեր, քարտեզներ, ուսուցչի ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, և հարկ եղած դեպքում հեշտ է դրանք օգտագործել դասերին, կամ՝ կան դպրոցներ, որտեղ գրադարանում կա հարուստ գրականություն /օրինակ, Շուշիի Խ.Աբովյանի անվան հիմնական դպրոց/, կարելի է այդ գրքերը բերել կաբինետ, այնտեղ ավելի տեսանելի դարձնել, որպեսզի աշակերտները գուցե ընթերցեն, իսկ աշակերտների համար գրադարան գնալը, ցավոք, արդեն իսկ խնդիր է:

Ստուգված բոլոր դպրոցներում լսված բոլոր դասերը քննարկվել են, վերլուծվել, տրվել են համապատասխան ցուցումներ, հանձնարարականներ, արվել դիտողություններ, առաջարկություններ, ցուցաբերվել է մեթոդամանկավարժական և մասնագիտական օգնություն, ուսուցիչները տեղեկացվել են կրթական համակարգի բարեփոխումներին՝ չնայած նրանք տեղեկացված են և գիտեն ինչպես աշխատել /հարկ է նշել նաև, որ համարյա բոլոր դասավանդող ուսուցիչները մասնակցել են ամեն տարի կազմակերպվող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին/:

Ստուգված հետևյալ դպրոցներում տրվել են ստուգողական աշխատանքներ անգլերենից՝ ուսման որակը և առաջադիմությունը ստուգելու նպատակով: Տրված աշխատանքների արդյունքները ներկայացնում ենք ներքոբերյալ աղյուսակում:

| հհ | Դպրոցը | Աշակերտների քանակը | Գրավորներին մասնակցած աշակերտների քանակը | Առաջ. /տոկոս/ | Որակ /տոկոս/ |
|---|---|---|---|---|---|
| | Ստեփանակերտ | | | | |
| 1. | Ստեփանակերտի հ. 2 հ/դ | 219 | 183 | 73 | 22 |
| 2. | Ստեփանակերտի հ. 8 ա/դ | 215 | 193 | 73 | 21 |
| | Ասկերանի շրջան | | | | |
| 3. | Աստղաշենի մ/դ | 23 | 22 | 0 | 0 |
| 4. | Խրամորթի մ/դ | 13 | 12 | 67 | 8 |
| 5. | Ավետարանոցի մ/դ | 48 | 44 | 27 | 0 |
| | Մարտակերտի շրջան | | | | |
| 6. | Հաթերքի մ/դ | 51 | 48 | 60 | 25 |
| 7. | Մաղավուզի մ/դ | 20 | 20 | 20 | 0 |
| 8. | Պողոսագոմերի մ/դ | 9 | 9 | 78 | 11 |
| 9. | Չափարի մ/դ | 11 | 10 | 30 | 0 |
| | Մարտունու շրջան | | | | |
| 10. | Նորշենի մ/դ | 20 | 20 | 30 | 0 |
| 11. | Բերդաշենի մ/դ | 53 | 50 | 66 | 6 |
| 12. | Մարտունու արհեստ. /ուս. | 51 | 39 | 46 | 10 |
| | Հադրութի շրջան | | | | |
| 13. | Տողի մ/դ | 41 | 33 | 79 | 33 |
| | Շուշիի շրջան | | | | |
| 14. | Շուշիի հ. 1 ա/դ | 66 | 61 | 77 | 28 |
| 15. | Շուշիի հ. 2 հ/դ | 83 | 73 | 68 | 16 |
| | Քաշաթաղի շրջան | | | | |
| 16. | Բերձորի հ. 2 մ/դ | 39 | 29 | 21 | 14 |

**Կ. ՓԱԹՅԱՆ**
**ԿՊՏ տեսուչ**

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2014-2015 ուսումնական տարում, համաձայն ԼՂՀ ԿԳ նախարարության ընդհանուր և ԿՊՏ 2014-2015թթ. աշխատանքային պլանների, տեսչական հանձնախմբերի կազմում համակողմանի ստուգումներ են իրականացվել ԼՂՀ հանրակրթական 31 ուսումնական հաստատություններում, մասնավորապես՝ Ստեփանակերտի հ. 8 ավագ, հ. 2 հիմնական, Մարտունու շրջանի Խերխանի հիմնական, Բերդաշենի, Աշանի, Ճոխվատեղի միջնակարգ դպրոցներում, Քաշաթաղի շրջանի Բերձորի հ.2 հիմնական, Միջնավանի և Վանի միջնակարգ, Շահումյանի շրջանի Քնարավանի, Խարխափուտի, Ասկերանի շրջանի Սղնախի, Խրամորթի, Հարավի, Աստղաշենի միջնակարգ, Մարտակերտի շրջանի Քոլատակի, Մոխրաթաղի, Ճանկաթաղի, Դրմբոնի, Չափարի միջնակարգ, Հադրութի շրջանի Տողի միջնակարգ, Շուշիի Մուրացանի անվան ավագ, Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցներում, ինչպես և՝ Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջում և Մարտունու արհեստագործական ուսումնարանում, որի ընթացքում ստուգվել են պատմություն, հասարակագիտություն և ՀԵՊ առարկաների դասավանդման դրվածքները և ներկայացվել համապատասխան տեղեկանքներ: Այդ ժամանակաընթացքում վերոնշյալ ուսումնական հաստատություններից 9-ում իրականացվել են նաև հանձնաժողովի ղեկավարի պարտականությունները՝ ստուգելով միաժամանակ նաև դպրոցավարությունը:

Բոլոր կրթօջախները ապահոված են ուսումնական պլաններով, ուսուցչի ձեռնարկներով ու ծրագրերով, ուսուցիչները ծանոթ են առարկաների ծրագրային փոփոխություններին, ունեն ըստ առարկաների կազմած թեմատիկ պլանավորումներ, բացառությամբ՝ 1-2 դպրոցների, որտեղ դասավանդում են սկսնակ կամ ոչ մասնագետ ուսուցիչներ, ովքեր ճիշտ չէին կազմել թեմատիկ պլանավորումները: Ուսուցիչները ներկայանում են դասին պատրաստ, գրում են օրվա դասի պլան-սեղմագրեր, իսկ որոշ ուսուցիչներ՝ նաև հանգամանորեն կազմված պլան-սեղմագրեր: Ուսուցիչների հիմնական մասը տիրապետում է դասավանդվող նյութին, թույլ չի տալիս մասնագիտական սխալներ, դասագործընթացում օգտագործում է լրացուցիչ գրականություն, դպրոցում առկա դիտողական պարագաները, հնարավորության սահմաններում դասերը կազմակերպում է համակարգչային կաբինետներում և օգտագործում ժամանակակից տեխնիկական միջոցներ, ցուցադրում թեմատիկ-ուսուցողական ֆիլմեր: Մի շարք դպրոցներում ստեղծված և կահավորված են պատմության կաբինետներ: Առավել լավ կահավորված կաբինետներ ունեն Ստեփանակերտի հ. 8 ավագ, որտեղ ստեղծված է նաև առանձին ռազմահայրենասիրական կաբինետ, հ. 2 հիմնական, Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական, Աստղաշենի, Խրամորթի միջնակարգ դպրոցները: Սակայն, ընդհանուր առմամբ, դասերը չեն կազմակերպվում կաբինետային համակարգով: Աշակերտները հիմնականում ապահոված են դասագրքերով, պահում են պատմության տետրեր, որտեղ գրի են առնում տնային առաջադրանքները, նոր հասկացություններն ու տարեթվերը, բացի դրանից, ունեն առանձնացված տետրեր գործնական ու թեմատիկ աշխատանքների համար, իսկ որոշ դպրոցներում՝ նաև աշխատանքային տետրեր: Գրեթե բոլոր դպրոցներում ուսուցիչները պահում են թղթապանակներ, որտեղ զետեղված են ըստ դասարանների թեմատիկ և գործնական աշխատանքները:

Վերոնշյալ դպրոցների աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին, բացառությամբ մի քանի դպրոցների, ընդհանուր առմամբ թույլ է: Այդ բնագավառում հաջողություններ են գրանցել Ստեփանակերտի հ. 8 ավագ, Բերդաշենի, Տողի միջնակարգ, Շուշիի Խ. Աբովյանի անվան և Բերձորի հ.2 հիմնական դպրոցների սովորողները, որոնք մասնակցել են հանրապետական փուլին, իսկ հ. 8 ավագ դպրոցի աշակերտ Արմեն Ասրյանը մասնակցել է ՀՀ եզրափակիչ փուլին և պարգևատրվել գովասանագրով:

Կատարված դասալսումների և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ տեսչավորված դպրոցներից մի քանիսում կան փորձառու, առարկային ու նրա դասավանդման մեթոդիկային տիրապետող ուսուցիչներ, որտեղ էլ առարկայի դասավանդման դրվածքը համեմատաբար ավելի բարվոք է: Ընդօրինակելի են Ա. Օհանջանյանի /Բերդաշեն/, Լ. Մարտիրոսյանի /Ստեփանակերտի հ. 8 ա/դ/, Լ. Ասրյանի /Մարտիրոսյան/, Ծ. Առստամյանի /Ստեփանակերտի հ. 2 հ/դ/ վարած դասերը: Նրանց, ինչպես նաև Կ. Դադայանի և Լ. Ավանեսյանի աշխատանքը գնահատվել է «լավ»: Համեմատական կարգով «լավ» գնահատվել են Լ. Վարդանյանի, Ս. Գաբրիելյանի, Ռ. Մովսիսյանի, Գ. Պողոսյանի /Ստեփանակերտի հ. 8 ա/դ/, Վ. Հարությունյանի, Ա. Ներսիսյանի /Շուշիի Մուրացանի անվան ա/դ/ կատարած աշխատանքները: Տեսչավորման արդյունքում պարզվել է նաև, որ կան երիտասարդ, բայց խոստումնալից ուսուցիչներ, ովքեր մշտական ինքնակրթության և հետևողական աշխատանքի դեպքում կարող են ունենալ շոշափելի հաջողություններ. Վ. Հարությունյան, Ա. Գալստյան /Ստեփանակերտի հ. 8 ա/դ/, Ն. Նազարյան /Բերձորի հ. 2 հ/դ/, Հ. Ղաբուլյան /Շուշիի Խ. Աբովյանի անվան հ/դ/, Մ. Ստեփանյան /Տողի մ/դ/, Ս. Իսրայելյան /Բերդաշենի մ/դ/, Է. Հարությունյան /Մոխրաթաղի մ/դ/:

Տեսչավորված դպրոցների ուսուցիչների հիմնական մասը, սկսած 2012 թվականից, մասնակցել է ԼՂՀ ԿԳ նախարարության և ՀՀ ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից կազմակերպված դասընթացներին, ստացել համապատասխան վկայագրեր և ատեստավորվել՝ Աննա Ներսիսյան, Ասլան Օհանջանյան, Լիլիյա Վարդանյան, Լարիսա Մարտիրոսյան, Լալվար Սահակյան, Անահիտ Դանիելյան, Ալենուշ Օհանջանյան, Կարինե Դադայան, Ծովինար Առստամյան /2012թ./ Վլադիմիր Հարությունյան, Գրիգորի Ղահրամանյան, Սոֆյա Գաբրիելյան, Ռոմելա Մովսիսյան, Արմինե Սահակյան, Մերի Մկրտչյան, Սիրուն Իսրայելյան, Լուսինե Ավանեսյան, Աղասի Թադևոսյան /2013թ./, Հասմիկ Շահինյան, Վրեժ Հարությունյան, Հերիքնազ Ղաբուլյան, Քրիստինե Պետրոսյան /2014թ./, Լաուրա Մարտիրոսյան, Հրաչ Նասիբյան /2015թ./:

Կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ բացի արձանագրված դրական երևույթներից, կան նաև մի շարք բացթողումներ՝ կապված օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետ: Այսպես՝ որոշ դպրոցներում պակասում է անհրաժեշտ մեթոդական գրականությունը, անբավարար է տարբեր առարկաներից դասագրքերով ապահովվածությունը, որոշ դպրոցներում դասավանդում են ոչ մասնագետ ուսուցիչներ, որոշ սկսնակ կամ ոչ մասնագետ ուսուցիչներ օգտագործում էին նախորդ տարիների թեմատիկ պլանավորումները, ճիշտ չէին գրում օրվա դասի պլան-սեղմագրերը կամ 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի կրկնությունը կատարում էին ոչ համապատասխան դասագրքերով, դասերը չեն կազմակերպվում կաբինետային համակարգով և այլն: Նշված և այլ բացթողումների շտկման ու վերացման համար տրվել են համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ: Ընդհանուր առմամբ, թույլ է դպրոցների նյութատեխնիկական բազան, չեն հերիքում համապատասխան թեմատիկ քարտեզներն ու դիտողական պարագաները, չնայած վերջին տարիներին ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից դպրոցներին տրամադրվել էին որոշ քանակությամբ թեմատիկ քարտեզներ ու պաստառներ:

Ընդհանուր առմամբ, առարկաների դասավանդման դրվածքը համակողմանի տեսչավորման ենթարկված դպրոցներում գնահատվել է «բավարար»:

**Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ**
**ԿՊՏ ավագ պետական տեսուչ**

### ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

2014-2015 ուստարում համակողմանի ստուգումներ են կատարվել հանրապետության 31 դպրոցներում: Տեսչավորվել են Ստեփանակերտ քաղաքում՝ 2, Ասկերանի շրջանում՝ 5, Մարտակերտի շրջանում՝ 9, Մարտունու շրջանում՝ 6, Հադրութի շրջանում՝ 1, Շուշիի շրջանում՝ 3, Քաշաթաղի շրջանում՝ 3 և Շահումյանի շրջանում՝ 2 դպրոցներ:

Նշյալ դպրոցներում առարկան դասավանդում են 83 մանկավարժներ, որոնցից 78-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: Ուսուցիչներն ապահովված են գործող ծրագրերին համապատասխան ուսուցչի ձեռնարկներով, ունեն օրինակելի թեմատիկ պլանավորումներ, ապահովում են ծրագրային նյութի կատարումը: Բոլոր ուսուցիչների մոտ կատարվել են 4-5 ժամ դասալսումներ, տեսչավորված դպրոցների 252 դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ: Ստորև բերվում է տեսչավորված դպրոցներում տրված գրավոր աշխատանքների ամփոփ արդյունքների աղյուսակը:

| հհ | Դպրոցը | Աշակերտների քանակը | Գրավորներին մասնակցած աշակերտների քանակը | Առաջ. /տոկոս/ | Որակ /տոկոս/ |
|---|---|---|---|---|---|
| | Ստեփանակերտ | | | | |
| 1. | Ստեփանակերտի հ.2 հիմն. | 348 | 301 | 40 | 11 |
| 2. | Ստեփանակերտի հ. 8 ավագ | 468 | 413 | 32 | 4 |
| | Ասկերանի շրջան | | | | |
| 3. | Սղնախի միջն. | 20 | 19 | 47 | 0 |
| 4. | Հարավի միջն. | 21 | 19 | 42 | 5 |
| 5. | Աստղաշենի միջն. | 45 | 42 | 36 | 5 |
| 6. | Խրամորթի միջն. | 34 | 22 | 31 | 6 |
| 7. | Ավետարանոցի միջն. | 109 | 104 | 37 | 14 |

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մարտակերտի շրջան | | | | |
| 8. | Մոխրաթաղի միջն. | 17 | 17 | 59 | 18 |
| 9. | Ճանկաթաղի միջն. | 34 | 32 | 34 | 6 |
| 10. | Վարդաձորի մասնաճյուղ | 5 | 5 | 20 | 0 |
| 11. | Պողոսագոմերի միջն. | 15 | 15 | 47 | 7 |
| 12. | Դրմբոնի միջն. | 42 | 34 | 29 | 6 |
| 13. | Սարսանգի միջն. | 52 | 51 | 37 | 12 |
| 14. | Քոլատակի միջն. | 26 | 26 | 38 | 12 |
| 15. | Չափարի միջն. | 33 | 30 | 43 | 13 |
| 16. | Հաթերքի միջն. | 126 | 118 | 34 | 3 |
| | Մարտունու շրջան | | | | |
| 17. | Խերխանի միջն. | 11 | 10 | 20 | 0 |
| 18. | Բերդաշենի միջն. | 132 | 130 | 35 | 8 |
| 19. | Նորշենի միջն. | 37 | 37 | 35 | 0 |
| 20. | Մարտունու արհեստագործ. ուսումնարան | 100 | 75 | 13 | 0 |
| 21. | Աշանի միջն. | 71 | 70 | 40 | 16 |
| 22. | Ծովատեղի հիմն. | 22 | 22 | 50 | 14 |
| | Հադրութի շրջան | | | | |
| 23. | Տողի միջն. | 64 | 55 | 40 | 11 |
| | Շուշիի շրջան | | | | |
| 24. | Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմն. | 183 | 178 | 30 | 6 |
| 25. | Շուշիի Մուրացանի անվան ավագ | 110 | 107 | 41 | 6 |
| 26. | Շուշիի հումանիտար քոլեջ | 30 | 25 | 28 | 0 |
| | Քաշաթաղի շրջան | | | | |
| 27. | Միջնավանի միջն. | 37 | 35 | 29 | 0 |
| 28. | Վանի միջն. | 20 | 19 | 42 | 5 |
| 29. | Բերձորի հիմն. | 91 | 73 | 30 | 7 |
| | Շահումյանի շրջան | | | | |
| 30. | Քնարավանի միջն. | 12 | 11 | 27 | 0 |
| 31. | Նոր Խարխափուտի միջն. | 10 | 9 | 67 | 11 |
| | Ընդամենը՝ | 2325 | 2104 | 35 | 7 |

Գրավոր աշխատանքների արդյունքները ցույց են տվել, որ աշակերտների 65 տոկոսը մաթեմատիկա առարկայից ունի անբավարար գիտելիքներ, ցածր է ուսման որակը (7 տոկոս), ուսուցիչների կողմից նշանակված ընթացիկ, կիսամյակային և տարեկան գնահատականների մեծ մասը չի համապատասխանում աշակերտների փաստացի գիտելիքներին:

Նշված դպրոցների 5-12 (9)-րդ դասարանների 2325 աշակերտներից գրավորներին մասնակցել են 2104-ը կամ 90%-ը: 4-6 միավորներ են ստացել 596 աշակերտ կամ 28%-ը,7-10 միավորներ՝ 143 կամ 7 %-ը:

Գրավորներից բացակայած 221 աշակերտներից ամենաշատը բաժին է ընկնում Ասկերանի շրջանի Խրամորթի (35%), Մարտակերտի շրջանի Դրմբոնի (29%), Մարտունու արհեստագործականի (25%), Քաշաթաղի շրջանի Բերձորի հ. 2 (20%) դպրոցներին:

Համեմատաբար բարձր առաջադիմություն և ուսման որակ են գրանցվել Մարտակերտի շրջանի Մոխրաթաղի (59% և 18%), Չափարի (43% և 13%), Մարտունու շրջանի Աշանի (40% և 16%), Ծովատեղի (50% և 14%) դպրոցներում:

Ոչ մի աշակերտ 7-10 միավոր չի ստացել, կամ 0% ուսման որակ է գրանցվել Ասկերանի շրջանի Սղնախի, Մարտակերտի շրջանի Վարդաձորի մասնաճյուղի, Մարտունու շրջանի Խերխանի, Նորշենի, Քաշաթաղի շրջանի Միջնավանի, Շահումյանի շրջանի Քնարավանի դպրոցներում, ինչպես նաև Մարտունու արհեստագործական ուսումնարանում և Շուշիի հումանիտար քոլեջում:

Կատարած դասալսումները ցույց տվեցին, որ բարեխղճորեն են աշխատում և բավարար մակարդակի դասեր են վարում Է. Բալայանը (Մարտունու շրջան, Աշան), Լ. Պողոսյանը, Ն. Բեգլարյանը (Ստեփանակերտի հ.2), Ա. Միրզոյանը, Ա. Հայրապետյանը, Ռ. Հարությունյանը (Ստեփանակերտի հ.8), Հ. Արզումանյանը (Ասկերանի շրջան, Ավետարանոց), Պ. Ավանեսյանը (Մարտունու շրջան, Ծովատեղ):

Նրանք դասերը կազմակերպում են գիտական բարձր մակարդակով, զարգացնում են աշակերտների տրամաբանական մտածողությունը, ձգտում, որ աշակերտները իրենց տեսական գիտելիքները կիրառեն խնդիրների և վարժությունների լուծման ժամանակ, մշտապես զբաղվում են իրենց մանկավարժական և մեթոդական պատրաստականության բարձրացմամբ:

Կատարված դասալսումներից միաժամանակ պարզվել է, որ որոշ դպրոցներում ցածր հիմքի վրա է առարկայի դասավանդման դրվածքը: Այդ դպրոցներում դասավանդող ուսուցիչները ամենայն լրջությամբ չեն նախապատրաստվում օրվա դասերին, չեն ապահովում աշակերտների ակտիվությունը, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքը, դասավանդում են միայն ավանդական մեթոդներով, նպատակային չեն օգտագործում դասագործընթացը:

Տեսչավորված բոլոր դպրոցներում ուսուցիչներին ցուցաբերվել է մեթոդական օգնություն, տրվել են անհրաժեշտ ցուցումներ:

**Օ. ԱՍՐՅԱՆ**
**ԿԳ Նախարարի խորհրդական**
**Վ. ՍԱՀԱԿՅԱՆ**
**ԿՊՏ բաժնի ավագ պետական տեսուչ**
**Յու. ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**ԿՊՏ բաժնի պետական տեսուչ**

### ՖԻԶԻԿԱ

2014-2015 ուստարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում շուրջ 19 դպրոցներում իրականացվել է ֆիզիկայի դասավանդման դրվածքի ստուգումը: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում կան իրենց գործին տիրապետող մանկավարժներ, ովքեր ծառայեցնում են ֆիզիկայի դասերը ոչ միայն ֆիզիկական օրենքներ սովորեցնելուն, այլև զարգացնում են սովորողների տրամաբանական մտածողությունը, ինքնուրույնությունը՝ դասագործընթացում ստեղծելով խնդրահարույց իրավիճակներ: Նրանց թվում են Լեոնրա Մարգարյանը, Ինգա Նասիբյանը / Ստեփանակերտի հ 8 ավագ դպրոց /:

Բոլոր մասնագետները առաջնորդվում են գործող ծրագրերով ու ծրագրային նյութին համապատասխան դասագրքերով, խնդրագրքերով: Բայց շատ դպրոցներում ճիշտ չեն կազմել թեմատիկ պլանավորումները հատկապես 9-րդ և 12-րդ դասարանների երկրորդ կիսամյակի համար: Չի պահպանվել ծրագրով նախատեսված թեմատիկ գրավոր ու գործնական աշխատանքների քանակը: Գործնական աշխատանքների համար հատկացված դասաժամերին կամ կրկնում են անցած թեմաները, կամ լուծում խնդիրներ:

Հարկ է նշել, որ գործնական /լաբորատոր/ աշխատանքների կատարման հաճախությունը որոշվում է ծրագրով,ու լաբորատորիա չունենալու դեպքում նախատեսված դասաժամերին անհրաժեշտ է օգտագործել վիրտուալ լաբորատորիան կամ աշակերտներին հանձնարարել պատրաստել ռեֆերատներ կամ էլ դրանց հետ միասին՝ ինքնաշեն սարքեր, որոնց միջոցով կհարստացվի դպրոցի լաբորատորիան:

Գործնական աշխատանքները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի մասնակցության աստիճանը աշխատանքին, փորձարարական հմտությունները, արդյունքները ներկայացնելու ու մեկնաբանելու կարողությունները:

Հարկ է նշել, որ ուսուցիչների արդյունավոր աշխատանքը խոչընդոտում են մի շարք դպրոցներում շենքային անբավարար պայմաններից բացի՝ նաև լաբորատոր սարքավորումների ու գործիքների բացակայությունը կամ սակավ քանակը/ճանկաթաղի, Վարդաձորի, Պողոսագոմերի, Դրմբոնի, Հարավի, Մոխրաթաղի, Չափարի, Ծովատեղի միջնակարգ դպրոցներ / ինչը հնարավորություն չի տալիս կատարելու ֆիզիկայի ծրագրով նախատեսված լաբորատոր և գործնական աշխատանքների զգալի մասը, ցուցադրական փորձերը. կաբինետում առկա են քիչ քանակությամբ սարքավորումներ, որոնց մեծ մասը գործածությունից դուրս է եկել, մյուս մասն էլ դասագործընթացում համարյա չի օգտագործվում:Դպրոցների ուսումնատեխնիկական բազայի այսպիսի վիճակը պետք է մտահոգի տնօրենությանը. պարզ է, որ նման պայմաններում ֆիզիկայի լիարժեք դասավանդումը բացառվում է:

Թույլ է համագործակցությունը ուսուցիչների միջև: Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ: Շատ քիչ դպրոցներում են աշխատանքներ կատարվում առարկայական կաբինետների ստեղծման ու կահավորման ուղղությամբ: Գործող կաբինետներ կան Ստեփանակերտի հհ. 1, 8, Շուշիի Խ.Աբովյանի անվան հիմնական, Բերդաշենի, Աստղաշենի, Ավետարանոցի, Հաթերքի, Սղնախի միջնակարգ դպրոցներում: Մի շարք դպրոցներում դրանք կան, բայց շենքային պայմաններից ելնելով՝ չեն գործում և համալրման կարիք ունեն:

Կատարած ստուգումներից պարզ դարձավ, որ ուսուցիչների մի մասը չի կարողանում յուրաքանչյուր դասի մեջ առանձնացնել գլխավորը երկրորդականից, չծանրաբեռնել երեխաներին ավելորդ, ոչ էական տվյալներով ու թվերով: Պահանջվող ուշադրություն չի դարձվում թեմատիկ ու կիսամյակային ամփոփիչ աշխատանքների տեքստերի ընտրմանը, ստուգմանն ու գնահատմանը, տնային աշխատանքների տրմանն ու ստուգմանը, չեն պաշտպանվում գնահատման չափանիշները: Նոր նյութի հաղորդման ժամանակ չի ապահովվում նախորդ ու նոր, ինչպես նաև միջառարկայական կապը, քիչ տեղ է տրվում խնդիրների լուծմանը, խնդրահարույց իրավիճակների ստեղծմանը:

Ցավով պետք է նշել, որ ուսուցիչների մի մասը դասերը վարում է բարբառախառն լեզվով:

Կատարած ստուգումներից պարզվեց, որ ոչ մասնագետներ են աշխատում Ծովատեղի /Ս.Բաղդասարյան/, Ավետարանոցի /Ա.Հայրապետյան/ դպրոցներում:Նշված ուսուցիչները,չունենալով մասնագիտական կրթություն, դասավանդման գործընթացում հասնում են որոշակի հաջողությունների, քանի որ մշտապես զբաղվում են իրենց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությամբ:

Ստուգումներից պարզ դարձավ նաև, որ առարկայի դասավանդման դրվածքը մի շարք դպրոցներում շատ ցածր մակարդակի վրա է: Աշակերտների զգալի մասը չունի խոր ու կայուն գիտելիքներ առարկայից, ցածր է նրանց տրամաբանական մտածողությունը, ավելի շատ անգիր են անում դասը /այն էլ՝ ոչ լրիվությամբ/, չեն կարողանում բացատրել հենց իրենց կողմից տրված սահմանումների, օրենքների բուն էությունը, տալ մեծությունների չափման միավորները ՄՀ-ում ու բացատրել նրանց ֆիզիկական իմաստը: Բավարար մակարդակի վրա չեն սովորողների բանավոր խոսքը, պատմելու ոճը, հաճախ խոսում են սխալներով, աղավաղում են որոշ ֆիզիկական եզրույթներ, ճիշտ չեն կատարում օրենքների ձևակերպումը: Չեն կարողանում ինքնուրույն լուծել պարզ խնդիրներ, կառուցել գրաֆիկներ:

Աշակերտների փաստացի գիտելիքները չեն համապատասխանում նրանց ընթացիկ ու կիսամյակային գնահատականներին. ուսուցիչների մեծ մասը թույլ է տալիս գնահատականների արհեստական բարձրացումներ: Որոշ ուսուցիչներ կիսամյակները ամփոփել են՝ առանց գործնական աշխատանքների կատարման, կամ դրանք կատարել են մասնակիորեն: Որոշ դպրոցներում դասամատյանների համապատասխան էջի գնահատականները չեն համապատասխանում վերջում նշանակված բաղադրիչ գնահատականներին:

Աշակերտները հիմնականում ապահովված են դասագրքերով:

Առարկայի դրվածքի բարելավման նպատակով ուսուցիչներին անհրաժեշտ է՝ մշտապես զբաղվել ինքնակրթությամբ, աշխատանքի ընթացքում անընդհատ կատարելագործել դասավանդման մեթոդները, ձգտել առարկայի հանդեպ հետաքրքրություն առաջացնել աշակերտների մեջ. դասագործընթացում գործուն պահել յուրաքանչյուր աշակերտի,հետևողական ու պահանջկոտ լինել տրված յուրաքանչյուր հանձնարարության կատարման հանդեպ, պահպանել գրավոր աշխատանքների ստուգման որակական կողմը, գնահատել ըստ չափանիշների:

Մի շարք դպրոցներում օգտագործելով ընձեռված հնարավորությունները՝ տվել ենք նաև ցուցադրական դասեր: Լսված բոլոր դասերը քննարկվել են ուսուցիչների ու մեթոդմիավորման նախագահների կամ տնօրենության անդամների հետ: Տրվել են բազմաթիվ առաջարկություններ ու հանձնարարականներ՝ ուղղված առարկայի դասավանդման դրվածքի բարելավմանը, ինչը, ցավոք, ընդհանուր առմամբ գտնվում է ցածր մակարդակի վրա:

**Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ տեսուչ**

### ՔԻՄԻԱ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ աշխատանքային պլանի համաձայն՝ կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում 30 ուսումնական հաստատություններում իրականացվել է քիմիայի և կենսաբանության դասավանդման դրվածքի ստուգում: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում կան իրենց գործին գիտակ, բարեխիղճ, հմուտ մանկավարժներ, ովքեր վարում են լավ և հետաքրքիր դասեր, ապահովում են սովորողների տրամաբանական մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը, ցուցադրական նյութերի օգտագործումը դասագործընթացում, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների ժամանակ, աշակերտների նախապատրաստումը և նրանց մասնակցությունն առարկայական օլիմպիադաներին, համակարգիչների և այլ տեխնոլոգիաների օգտագործումը, սովորողների մոտ հետաքրքրությունների և նախասիրությունների բացահայտումն ու զարգացումը, դիտողականությունն ու փորձարարական գործունեությունը, կիրառում փոխներգործուն մեթոդներ՝ նպատակ ունենալով ստեղծելու ճանաչողական գործունեության զարգացման և արժեքային համակարգի ձևավորման պայմաններ: Հաջողված և արդյունավետ դասեր լսեցինք Ստեփանակերտի h.8 ավագ / Զարինե Մեսրոպյան /կենսաբանություն/, Մանուշ Շահբարյան /քիմիա, կենսաբանություն/, Աիդա Սարգսյան /քիմիա/, Ստեփանակերտի h.2 հիմնական՝ Վալտենա Տոնյան /քիմիա/, Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ /Անուշ Իսրայելյան /քիմիա, կենսաբանություն/, Հադրութի շրջանի Տողի միջնակարգ /Ռուզաննա Ղալեչյան /քիմիա, կենսաբանություն/ դպրոցներում:

Հարկ է նշել, որ կան ոչ մասնագետ ուսուցիչներ, ովքեր տարիների փորձով ձեռք են բերել գիտելիքներ և հմտություններ:

Կան նաև ուսուցիչներ, ովքեր մշտապես պետք է զբաղվեն ինքնակրթությամբ, զարգացնեն իրենց մեթոդամանկավարժական պատրաստվածությունը, տիրապետեն դասավանդման ժամանակակից մեթոդներին և դրանք հաջողությամբ կիրառեն դասագործընթացում, որով կիրականացնեն ժամանակակից դասին ներկայացվող պահանջներն ու լավ արդյունքների կհասնեն:

Մի շարք դպրոցներում ուսուցիչները հաջողությամբ անց են կացնում համակարգչային դասեր: Առաջնորդվում են գործող ծրագրով, ունեն համապատասխան թեմատիկ պլանավորումներ, գրում են ամենօրյա պլան-սեղմագրեր, օգտվում են ուսումնաօժանդակ ձեռնարկներից, կատարում են թեստային առաջադրանքներ, լուծում բարդ խնդիրներ, ինչպես նաև հնարավոր լաբորատոր, գործնական առաջադրանքներ, կատարում բազմաբնույթ փորձեր:

Միաժամանակ հարկ է նշել, որ ուսուցիչների արդյունավետ աշխատանքը խոչընդոտում են մի շարք դպրոցների ոչ բարենպաստ շենքային պայմանները, կաբինետների բացակայությունը, համակազմ դասարանների առկայությունը /Ծովատեղ, Խերխան, Նոր Խարխափուտ, Քոլատակ, Ճանկաթաղ, Պողոսագոմեր, Դրմբոն, Հարավ, Նորշեն, Սղնախ, Վան, Չափար, Միջնավան/: Իսկ դասարաններում աշակերտների մեծ խտությունը խանգարում է աշակերտների առանձնահատկությունների հաշվառմամբ նրանց հետ անհատական աշխատանքի անցկացմանը:

Ուսուցիչների նպատակային աշխատանքին խանգարում են նաև դասագրքերի բարդ և խիտ կառուցվածքը, քիմիայի և կենսաբանության դասաժամերի կրճատումը: Գյուղական դպրոցի ուսուցիչները ցանկություն ունեն ուսումնասիրելու նաև ավագ դպրոցի հումանիտար և բնագիտական հոսքի համապատասխան դասագրքերը և անհրաժեշտության դեպքում դրանք կիրառելու աշակերտների հետ լրացուցիչ պարապմունքների ժամանակ:

Ուսուցիչները դժգոհում են 9-րդ, 10-րդ, 11-րդ դասարանների քիմիայի և կենսաբանության դասագրքերի և ծրագրերի անհամապատասխանությունից:

Ավագ և հոսքային դպրոցներում հմուտ, փորձառու ուսուցիչների աշխատանքը դասարանների մի մասում համապատասխան արդյունք չի տալիս: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ այդ դասարաններում ընդգրկվել են աշակերտներ, ովքեր չեն ցանկանում առարկան խորացված ուսումնասիրել:

Շատ դպրոցների գրադարաններում չկա մասնագիտական գրականություն: Այն ուսուցիչները, ովքեր սեփական միջոցներով բավականին մասնագիտական և մեթոդական գրականություն են ձեռք բերել և առաջնորդվում են դրանցով, ուսումնական գործընթացում ունեն բավականին հաջողություններ:

☞12

# ՏԵՍՉԱԿԱՆ

11 Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ:

Քիչ դպրոցներում են աշխատանքներ տարվում առարկայական կաբինետների ստեղծման և կահավորման ուղղությամբ: Մի շարք դպրոցներում դրանք կան, բայց չեն ծառայում նպատակին: Հատկանշական են Ստեփանակերտի հ. 8, Ստեփանակերտի հ. 2, Բերդաշենի, Տողի, Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցների կաբինետների կահավորվածությունը և նպատակային գործունեությունը:

Ոչ բոլոր ուսուցիչներն են կիրառում դասավանդման արդյունավետ մեթոդներ, դասերն անց են կացնում ուսուցչակենտրոն ուսուցման դրույթներին համապատասխան, աշակերտները դասագործընթացում ոչ ակտիվ գործունեություն են ծավալում: Դպրոցների մի մասում ձևական հիմունքներով են ստեղծված առարկայական մասնախմբերը: Առարկայական մասնախմբի նախագահներ են նշանակված անփորձ ուսուցիչներ, որոնք մեթոդական և մասնագիտական օգնության կարիք ունեն: Առարկայական մասնախմբի նախագահները լուրջ աշխատանքներ պետք է տանեն մանավանդ երիտասարդ ուսուցիչների ստաժավորման համար` նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանց մեջ կան մեթոդամանկավարժական պատրաստվածություն չունեցող ուսուցիչներ:

Թերությունների շարքում հարկ է նշել, որ դասերն անց են կացվում առանց դիտողական պարագաների, միապաղաղ ու անհետաքրքիր: Ստուգումներից կարելի է եզրակացնել, որ միջին դասարաններում քիմիայից և կենսաբանությունից բարձր առաջադիմությունն ավելի ակնհայտ է, քան բարձր դասարաններում: Բարձր դասարաններում նկատվում է աշակերտների անտարբեր վերաբերմունք ուսման հանդեպ. նրանցից շատերը անպատրաստ են ներկայանում դասերին: Ուսուցիչը պետք է գիտակցի, որ համապատասխան ուսումնական դրդապատճառներ պետք է ձևավորի աշակերտների մոտ: Նա պետք է հետաքրքիր, նպատակային և արդյունավետ դարձնի դասագործընթացը:

Աշակերտների մեծ մասի մոտ, հատկապես գյուղական դպրոցներում, գիտելիքների իմացության մակարդակը միջինից ցածր է:

Ստուգումների ընթացքում ուսուցիչներին տրվել են համապատասխան մեթոդական և մասնագիտական ցուցումներ թեմատիկ պլանավորումների, օրվա դասի պլան-սեղմագրերի կազմման, մատենավարության, գնահատման նոր հայեցակարգի դրույթների կիրառման առնչությամբ:

Տեսչավորված դպրոցներից առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցել է Ստեփանակերտի հ.8 ավագ դպրոցի մեկ աշակերտ:

Քիմիա և կենսաբանություն առարկաների դասավանդման դրվածքի բարելավման նպատակով հանձնարարվում է`

տնօրեններին` ուսումնական պլանում եղած դպրոցական պարտադիր ժամաքանակից 7-րդ դասարանում ըստ հնարավորին մեկ ժամ հատկացնել քիմիա առարկային:

ուսուցիչներին`

- պարբերաբար զբաղվել ինքնակրթությամբ,
- լավ նախապատրաստվել յուրաքանչյուր դասի և բոլոր դասերը դարձնել հետաքրքիր, բովանդակալից , հաճախակի կազմակերպել համակարգչային դասեր,
- դասագործընթացում կարևորություն տալ ժամանակակից մեթոդների կիրառմանը, զննական դարձնել ուսումնական գործընթացը,
- աշխատանքներ տանել քիմիայի և կենսաբանության կաբինետի ստեղծման և կահավորման ուղղությամբ,
- ուշադրության կենտրոնում պահել փոխադարձ և ընդօրինակման դասերի, ինչպես նաև միջոցառումների կազմակերպման գործընթացը,
- ձեռք բերել նյութեր և սարքավորումներ, հաճախակի կատարել լաբորատոր և գործնական աշխատանքներ,
- կազմակերպել մասնագիտական երեկոներ, վիկտորինաներ, մրցույթներ, արշավներ, էքսկուրսիաներ:

**Վ. ՀԱՅՐՅԱՆ**

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2014-2015 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում ստուգվել է աշխարհագրություն առարկայի դասավանդման դրվածքը ԼՂՀ 14 կրթօջախներում` Ստեփանակերտի հ. 8/ավագ/ և հ. 2, Շուշիի Մուրացանի անվան ավագ և Խ. Աբովյանի անվան հիմնական, Ասկերանի շրջանի Խրամորթի, Հարավի, Աստղաշենի, Մարտունու շրջանի Բերդաշենի, Աշանի, Նորշենի, Մարտունու արհեստագործական ուսումնարանի, Հադրութի շրջանի Տողի, Քաշաթաղի շրջանի Միջնավանի, Վանի դպրոցներում: Նշյալ դպրոցների աշխարհագրության ուսուցիչները առաջնորդվում են կազմված թեմատիկ պլաններով,գործող դասագրքերով և ուսումնաօժանդակ ձեռնարկներով, դասերին ներկայանում են օրվա դասի պլան-սեղմագրերով: Դպրոցական բաղադրիչ ժամաքանակից աշխարհագրությանը հատկացվել էր Մարտունու արհեստագործական ուսումնարանում և Հադրութի շրջանի Տողի դպրոցում: Աշխարհագրության խմբակ գործում է 6 դպրոցներում / Ստեփանակերտի հ. 8, հ. 2, Մարտունու շրջանի Բերդաշենի, Աշանի, Նորշենի, Ասկերանի շրջանի Խրամորթի/: Ստուգումները ցույց են տվել,որ 2012-2015թթ. ՀՀ ԿԱԻ Ստեփանակերտի մասնաճյուղի կազմակերպված վերապատրաստման դասընթացներին մասնակցել են 13 ուսուցիչներ: Տեսչավորված 14 դպրոցների 18 աշխարհագրության ուսուցիչներից սկսնակ են /1-3 տարի / 2-ը, 3-15 տարվա փորձ ունեն 6-ը, 15 և ավելի` 10-ը: Կաբինետային համակարգ գործում է 8 դպրոցներում /Ստեփանակերտի հ. 8, հ. 2, Շուշիի Մուրացանի անվան, Մարտունու շրջանի Բերդաշենի, Աշանի, Ասկերանի շրջանի Հարավի, Աստղաշենի, Հադրութի շրջանի Տողի/: Համեմատաբար լավ են կահավորված և բարվոք վիճակում են գտնվում Ստեփանակերտի հ.2, Մարտունու շրջանի Բերդաշենի, Ասկերանի շրջանի Աստղաշենի դպրոցների կաբինետները: Նշյալ 18 ուսուցիչներից 15-ը ունեն բարձրագույն մասնագիտական, 3-ը` բարձրագույն ոչ մասնագիտական կրթություն: Ոչ մասնագետներ են աշխատում Ասկերանի շրջանի Հարավի,Մարտունու շրջանի Բերդաշենի և Քաշաթաղի շրջանի Վանի դպրոցներում: Կան ուսուցիչներ, որոնք ունենալով ոչ մասնագիտական կրթություն և երկար տարիներ դասավանդելով աշխարհագրություն առարկան` մշտապես զբաղվում են իրենց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությամբ և դասավանդման գործընթացում հասնում են հաջողությունների: Նրանց թվում են Զաիրա Հարությունյանը / Մարտունու շրջանի Բերդաշենի դպրոց /, Զարինե Մինասյանը / Ասկերանի շրջանի Հարավի դպրոց /: Կատարված դասալսումներից պարզ դարձավ, որ աշխարհագրության մի շարք ուսուցիչներ տիրապետում են առարկային և նրա դասավանդման մեթոդներին, դասերին կիրառում են հարցման ու գնահատման տարբեր մեթոդներ, ապահովում են միջառարկայական կապը, նոր դասը հաղորդում են մատչելի, մեծ ուշադրություն են դարձնում քարտեզների օգտագործմանն ու յուրացմանը: Հետաքրքիր դասեր են անցկացնում հետևյալ մասնագետները. Լուսինե Արզանգուլյանը /Ստեփանակերտի հ. 2 դպրոց /, Զաիրա Հարությունյանը / Մարտունու շրջանի Բերդաշենի դպրոց /, Արծվիկ Հովհաննիսյանը, Շողիկ Ավանեսյանը, Լիանա Ապրեսյանը /Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոց /, Զարինե Մինասյանը /Ասկերանի շրջանի Հարավի դպրոց/, Իդա Արզումանյանը / Հադրութի շրջանի Տողի դպրոց /, Դիանա Ղայամյանը /Մարտունու շրջանի Աշանի դպրոց /: Ուրախալի է այն փաստը, որ կան երիտասարդ մասնագետներ,որոնք չունեն դասավանդման անհրաժեշտ փորձ, բայց ունեն ձգտում և մշտապես կատարելագործվելով` կարող են դառնալ լավ մասնագետներ: Նրանց թվում են Զորիկ Ղազարյանը /Ասկերանի շրջանի Աստղաշենի դպրոց/, Սոնա Մանուկյանը /Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոց/: Տեսչավորված 18 ուսուցիչներից «լավ» է գնահատվել 5 ուսուցիչների կատարած աշխատանքը. Լուսինե Արզանգուլյան /Ստեփանակերտի հ.2 դպրոց/, Արծվիկ Հովհաննիսյան, Շողիկ Ավանեսյան, Լիանա Ապրեսյան /Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոց /, Զաիրա Հարությունյան /Մարտունու շրջանի Բերդաշենի դպրոց/, 12 ուսուցիչների կատարած աշխատանքները գնահատվել է բավարար, իսկ Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Սոնա Մանուկյանի աշխատանքը չի գնահատվել, քանի որ ս.թ. մարտի 1-ից ժամանակավորապես փոխարինում է ֆիզարձակուրդում գտնվող հիմնական ուսուցչին:

Բոլոր դպրոցներում տեսչավորման ընթացքում ցույց է տրվել մեթոդական օգնություն, տրվել ցուցումներ:

**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**ԿՊՏ փեսուչ**

## ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

Համաձայն ԼՂՀ ԿԳ նախարարության ԿՊՏ ընդհանուր աշխատանքային պլանի` 2014-2015 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնախմբերի կազմում հանրապետության տարածքում գործող 30 ուսումնական հաստատություններում` Ստեփանակերտի հ. 2 հիմնական և հ. 8 ավագ, Ասկերանի շրջանի Աստղաշենի միջնակարգ, Ավետարանոցի միջնակարգ, Հարավի միջնակարգ, Սղնախի միջնակարգ, Խրամորթի միջնակարգ, Մարտունու շրջանի Աշանի միջնակարգ, Նորշենի միջնակարգ, Բերդաշենի միջնակարգ, Ծովատեղի հիմնական, Խերխանի հիմնական, Քաշաթաղի շրջանի Բերձորի հ. 2 միջնակարգ, Միջնավանի միջնակարգ, Վանի միջնակարգ, Մարտակերտի շրջանի Չափարի միջնակարգ, Դրմբոնի միջնակարգ, Հաթերքի միջնակարգ, Ճանկաթաղի միջնակարգ /Վարդաձորի մասնաճյուղի հետ/, Մաղավուզի միջնակարգ, Պողոսագոմերի միջնակարգ, Քոլատակի միջնակարգ, Շահումյանի շրջանի Նոր Խարխափուտի միջնակարգ, Քնարավանի հիմնական,Հադրութի շրջանի Տողի միջնակարգ, Շուշիի Մուրացանի անվան ավագ ու Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցներում, Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջում և Մարտունու արհեստագործական ուսումնարանում իրականացվել է ինֆորմատիկա առարկայի դասավանդման դրվածքի ստուգում: Կատարվել է մոտ 130 ժամ դասալսում 36 ուսուցչի մոտ:

Ամփոփելով արդյունքները` նշենք, որ դասավանդման դրվածքը դպրոցների մեծամասնությունում` 24-ում, առկա թերություններով ու բացթողումներով հանդերձ, գնահատվել է բավարար կամ վերապահումով բավարար: Ստուգված 6 դպրոցներում /Ասկերանի շրջանի Ավետարանոցի միջնակարգ, Մարտունու շրջանի Ծովատեղի հիմնական, Խերխանի հիմնական, Մարտակերտի շրջանի Ճանկաթաղի միջնակարգ դպրոցի Վարդաձորի մասնաճյուղ, Քոլատակի միջնակարգ, Շահումյանի շրջանի Քնարավանի հիմնական/ առարկայի դասավանդման դրվածքը դեռևս իր բարձրության վրա չէ: Այդ դպրոցների աշակերտները չեն ցուցաբերում ուսումնասիրվող ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, և այդ նյութի վերաբերյալ գործնականում պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

36 ուսուցչից 2 ուսուցչի աշխատանքը գնահատվել է «լավ», 25 ուսուցչինը` «բավարար». 9 ուսուցչի աշխատանք չի գնահատվել` հաշվի առնելով, որ ուսուցիչը ոչ մասնագետ է և չունի աշխատանքային փորձ կամ աշխատում է ժամանակավոր կարգավիճակով:

«Լավ» է գնահատվել Գոհար Հարությունյանի /Հաթերքի միջնակարգ դպրոց/ և Աստղիկ Գրիգորյանի /Պողոսագոմերի միջնակարգ դպրոց/ կատարած աշխատանքը: Նրանք լավ են տիրապետում առարկային, դասավանդման ավանդական մեթոդների հետ միասին կիրառում են նաև դասավանդման ժամանակակից մեթոդներ և հնարներ, կարողանում են լիարժեք հասնել դասի նպատակներին, կազմակերպում են հետաքրքիր և ստեղծագործական դասեր: Հարկ է նշել, որ Ա. Գրիգորյանը արդյունավետ և ուսանելի է կազմակերպում դասագործընթացը համակազմ դասարաններում:

Նախորդ ստուգման համեմատ` զգալի առաջընթաց է նկատվել Հարավի միջնակարգ դպրոցում թե՛ ուսուցչի /Զարինե Մինասյան/ մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության, թե՛ աշակերտների գիտելիքների առումով:

Կան նաև երիտասարդ, սակայն բանիմաց,առարկային և ուսումնասիրվող համակարգչային ծրագրերին բավարար տիրապետող, խոստումնալից ու աշխատասեր ուսուցիչներ. Ֆելիքս Բալայան /Մարտունու շրջանի Աշանի միջնակարգ դպրոց/, Արուս Աթայան /Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոց/, Լիրա Բալասանյան /Շուշիի հումանիտար քոլեջ/, որոնք, շարունակելով մշտապես զբաղվել ինքնակրթությամբ` մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության խորացման նպատակով, կհասնեն լավ արդյունքի:

Սակայն դեռևս գյուղական դպրոցներում այս արագ զարգացող առարկան մեծ մասամբ դասավանդում են ոչ մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչներ, որոնք հիմնականում ավարտել են կարճաժամկետ համակարգչային դասընթացներ, լիարժեք չեն տիրապետում ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր համակարգչային ծրագրերին և առարկայի դասավանդման մեթոդներին, չեն հետևում նորարարությանը, դժվարանում են ինքնուրույն ուսումնասիրել դրանք, կարիք ունեն վերապատրաստման. դժվարանում են արդյունավետ կազմակերպել դասագործընթացը համակազմ դասարաններում:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր ուսուցիչներն են բարեխղճորեն զբաղվում ինքնակրթությամբ և ուսումնասիրում ուստարվա մեթոդական ցուցումները, ինչի պատճառով կան ծրագրերի խախտումներ և թերակատարումներ, չեն պահպանվել թեմատիկ, գործնական աշխատանքների նվազագույն քանակները, ճիշտ չեն կազմակերպում գնահատման գործնական աշխատանքները, ընտրում թեմատիկ ու կիսամյակային ամփոփիչ աշխատանքների առաջադրանքները: Թույլ է ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների համագործակցությունը հատկապես շրջաններում, գրեթե չեն կազմակերպվում փոխադարձ և ընդօրինակման դասեր, արտադասարանական միջոցառումներ, չեն հրատարակվում առարկայական բյուլետեններ:

Ուսումնական գործընթացում կրթության որակի և մատչելիության բարեփոխումների նպատակով շարունակվում է աշխատանք կատարվել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների /ՏՀՏ/ ներդրման ուղղությամբ:

Ստուգված 30 դպրոցներից 13-ը ունեն ժամանակակից համակարգչային կաբինետներ` անհրաժեշտ տեխնիկական ապահովվածությամբ /բավարար տեխնիկական բնութագրերով համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպող սարքեր, մուլտիմեդիա պրոյեկտոր, հեռուստացույց և այլն/, 11-ը ծրագրի իրականացման համար չունեն բավարար տեխնիկական ապահովում, հիմնականում ապահովված են հին նմուշի համակարգիչներով, 3-ը չունեն առանձին համակարգչային կաբինետ: 21 դպրոց միացված է համացանցին:

Հարկ է նշել նաև, որ ոչ բոլոր դպրոցներում են լիարժեք օգտագործում ընձեռած հնարավորությունները: Ժամանակակից դպրոցներում համակարգիչները պետք է օգտագործվեն որպես դասագործընթացի բաղկացուցիչ մաս ոչ միայն ինֆորմատիկա առարկայի դասավանդման ժամանակ, այլև մյուս առարկաները ուսուցանելիս` ուսումնական նյութը գրավիչ և մատչելի դարձնելու համար: Ճիշտ է, նման դասեր ստուգված դպրոցների մեծամասնությունում կազմակերպվում են, սակայն դեռևս հիմնականում անարդյունավետ են և ձևական, հատկապես` գյուղական դպրոցներում: Ինֆորմատիկայի ուսուցիչներից բացի ոչ բոլոր ուսուցիչներն են բավարար տիրապետում համակարգչին, ինչի պատճառով դժվարանում են օգտագործել համացանցը կամ օժանդակ գրականություն ուսումնական նյութը պատրաստելիս:

Պետք է նշել, որ աշակերտները հետաքրքրությամբ են հաճախում ինֆորմատիկայի դասերին, ունեն սեր համակարգչի հանդեպ: Սակայն հիմնականում ունեն բավարար գիտելիքներ կիրառական ծրագրերից և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներից: Գրեթե բոլոր դպրոցներում աշակերտները թույլ գիտելիքներ ունեն ծրագրավորման հիմունքներից, ինչի մասին են վկայում նաև ինֆորմատիկայից կազմակերպվող օլիմպիադաները:

Ստուգումների ընթացքում ուսուցիչներին ցուցաբերվել է մեթոդական և մասնագիտական օգնություն, առարկայի դասավանդման դրվածքը բարելավելու համար կատարվել են համապատասխան առաջարկություններ:

Կարծում եմ` ինֆորմատիկայի ուսուցիչը միայն այն դեպքում կհասնի շոշափելի արդյունքի, երբ նա մշտապես սովորի, բարձրացնի իր մասնագիտական կարողությունները և հմտությունները, զբաղվի ինքնակրթությամբ, քանի որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների աշխարհը կենդանի, անընդհատ փոփոխվող և թարմացվող մարմին է:

**Ք. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչ**

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

2014-2015 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում քսանվեց հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել է «Երաժշտություն» առարկայի դասավանդման դրվածքի ստուգում: Դիտարկումները ցույց են տալիս, որ տեսչական ստուգումների ընթացքում բացահայտված թերությունների ու արված համապատասխան մեթոդական օգնության արդյունքները դրականորեն են ազդել առարկայի դասավանդման դրվածքի բարելավմանը:

Ամփոփելով ընթացիկ ուսումնական տարվա արդյունքները` կարելի է ասել, որ առարկան դասավանդող ուսուցիչները նշանակալի աշխատանք են տարել ուսումնական գործընթացը

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ծրագրային դրույթներին և չափորոշչային պահանջներին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ: Երաժշտությունը, որպես գեղագիտական գիտելիքների ու արժեքների ձևավորման յուրատեսակ համակարգ, գործում է սոսկ առարկայի դասավանդումը լիարժեք կազմակերպելու շնորհիվ:

Ողջունելի է այն փաստը, որ արդեն «լավ» գնահատականի են արժանացել առարկան դասավանդող ուսուցիչներ, որոնք իրենց ներդրումն ունեն աշակերտների գեղագիտական ճաշակի ու արժեքային համակարգի ձևավորման, բարոյական ու հայրենասիրական դաստիարակության իրականացման գործում: Տեսչավորման ընթացքում լավ են գնահատվել Էմմա Ամյանը, դասվարներ Անահիտ Մելքումյանը, Անժելա Մելքումյանը, Վիոլետա Բաբայանը, Զոյա Խաչատրյանը, Նաիլա Գաբրիելյանը /Ստեփանակերտի h.2 հիմնական դպրոց/, Լիանա Մարտիրոսյանը /Մարտակերտի շրջանի Չափարի միջնակարգ դպրոց/, Ռոզիտա Սողոմոնյանը /Ստեփանակերտի h.8 ավագ դպրոց/, Անուշ Զաքարյանը /Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոց/ և Սիրամարգ Շահբաթյանը /Քաշաթաղի շրջանի Միջնավանի միջնակարգ դպրոց/:

Ցավալի է նշել, որ Քաշաթաղի շրջանի Բերձորի h.2 միջնակարգ դպրոցում «Երաժշտություն» առարկայի դասավանդման դրվածքը չի ստուգվել տեսչավորման ընթացքում ուսուցչի բացակայության պատճառով: Սակայն մատենավարական աշխատանքի համապատասխան բաժնի ստուգումը ցույց է տվել, որ դասավանդող ուսուցչուհի Տիրուհի Թումասյանը չի տիրապետում ծրագրին ու չափորոշչային պահանջներին: Մարտակերտի շրջանի Ճանկաթաղի միջնակարգ դպրոցի Վարդաձորի մասնաճյուղի 6-7-րդ դասարաններում դասավանդող ուսուցչուհի Նաիրա Օհանջանյանը բացարձակապես գաղափար չունի առարկայից: Դժվար է պատկերացնել՝ ուսուցչուհին ինչպես է կազմակերպում երաժշտության դասը…

Հանրապետության շատ դպրոցներում առարկան շարունակում են դարձնել հաստիք լրացնելու միջոց, հաշվի չեն առնվում ուսուցիչների կարողություններն ու մասնագիտական պատրաստվածությունը: Ուսուցիչների հաճախակի փոփոխությունները հնարավորություն չեն ընձեռում նրանց փոքրիշատե հմտանալու առարկայի դասավանդման գործում, ինչը բացասաբար է անդրադառնում ոչ միայն առարկայի վարկանիշին, այլև աշակերտների երաժշտական դաստիարակությանը: Թերևս սա է պատճառը, որ տեսչավորված դպրոցներում քանոււթ ուսուցիչ ընդհանրապես չի գնահատվել:

Երաժշտական դաստիարակությունը շարունակվում է համարվել համալիր դաստիարակության կարևոր բաղկացուցիչը, քանի որ այն, որպես գեղագիտական դաստիարակության դրսևորման ձև, հղկում է մատաղ սերնդի զգայական ու հուզական աշխարհը, նպաստում գեղագիտական ճաշակի և համոզմունքների ձևավորմանն ու զարգացմանը: Երաժշտության դասագործընթացին սովորողները պետք է լսեն երաժշտություն, երգեն, կատարեն երաժշտառիթմական շարժումներ, պարեն, նվագեն, ստեղծագործեն: Ցավոք, երաժշտության դասը ոչ բոլոր դասավանդողներին է հաջողվում դարձնել կենսունակ ու կենդանի, մինչդեռ երաժշտական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է երաժշտության ուսուցչի մասնագիտական պատրաստվածությամբ ու մանկավարժական վարպետությամբ: Երաժշտության ուսուցմամբ է, որ կարող ենք դաստիարակել մարդասիրություն, հայրենասիրություն և առհասարակ մարդկային բարձրագույն որակներ:

Առարկայի դասավանդման դրվածքի բարելավման նպատակով մեր կողմից ցուցաբերվել է համապատասխան մեթոդական ու գործնական օգնություն և տրվել ցուցադրական դասեր:

Առաջարկություններ.

- ստեղծել երաժշտության կաբինետ.
- հաշվի առնելով առարկայի բարդությունն ու առանձնահատկությունները՝ առաջարկում ենք «Երաժշտություն» առարկայի դասավանդումը հատկացնել մասնագետի և առարկան չդարձնել հաստիք լրացնելու միջոց.
- երաժշտության դասին պետք է հաճախակի հնչի երաժշտություն /դասը տեսական դասի չվերածել/.
- զարգացնել սովորողների ստեղծագործական ինքնուրույնությունը՝ երաժշտության ունկնդրման ժամանակ ինքնուրույն վերլուծելու, մեկնաբանելու և իմպրովիզացիայի միջոցով.
-դասը լիարժեք կազմակերպելու համար պարբերաբար օգտագործել դիդակտիկ պարագաներ և նյութեր, հնչող երաժշտություն:

**Ռ. ՎԵՐԴՅԱՆ**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչ**

### ՇԱԽՄԱՏ

2014-2015 ուստարում ԼՂՀ կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում 25 դպրոցներում իրականացվել է շախմատ առարկայի դասավանդման դրվածքի ստուգում: Դասալսումներ են կատարվել 23 ուսուցիչների մոտ, որոնք հիմնականում տիրապետում են առարկային և դասավանդման մեթոդներին:

Ամփոփելով ստուգումները՝ կարելի է ասել, որ տեսչավորված դպրոցներում կան իրենց մասնագիտությանը լավ տիրապետող հմուտ մանկավարժներ, ովքեր կարողանում են նպատակին ծառայեցնել առարկան՝ աշակերտների մոտ ձևավորելով և զարգացնելով՝

- մտավոր կարողություններ,
- ինքնակազմակերպման և ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ,
- ուշադրություն, հիշողություն, երևակայություն, կամքի ուժ, աշխատասիրություն, նպատակասլացություն, համբերություն,
- արվեստի առումով՝ ճաշակ, գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություններ:

Նրանց թվում են՝ Նինել Շահնազարյան /Ստեփանակերտի h.2 h/դ/, Օլեգ Սարգսյան/Մարտունու շրջանի Բերդաշենի մ/դ/, Լյոնիկ Պետրոսյան/Ասկերանի շրջանի Ավետարանոցի մ/դ/, Կարո Գրիգորյան/ Ասկերանի շրջանի Խրամորթի մ/դ/, Արուս Վլադիկի /Շուշիի Խ. Աբովյանի անվան h/դ/ և այլք:

Հատկանշական է Ստեփանակերտի h.2 հիմնական դպրոցի շախմատի ուսուցչուհու՝ Նինել Շահնազարյանի աշխատանքը: Նա մշտապես զարգացնում է սովորողների նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործելու կարողությունը՝ հմտորեն օգտագործելով տարբեր մեթոդական հնարներ: Նրա յուրաքանչյուր դաս անցնում է կազմակերպական-մեթոդական բարձր մակարդակով, առանձնանում փուլերի հստակությամբ, մատչելիությամբ: Ուսուցչուհին կարողանում է ակտիվացնել դասարանը, սովորեցնել երեխաներին մտածել և վերլուծել:

Նշյալ ուսուցիչների մանկավարժական գործունեությունը արժանի է խրախուսանքի, իսկ փորձը՝ ընդհանրացման:

Սկսնակ, բայց պրպտուն ու աշխատասեր ուսուցիչներից է Մարտակերտի շրջանի Դրմբոնի Վ. Ձալալյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչ Հրաչյա Նազարյանը: Նա կարողանում է գտնել և կիրառել ուսուցման և դաստիարակության առավել արդյունավետ ձևեր և հնարներ: Նրա աշխատանքում նույնպես սպասվում են հաջողություններ:

Հարկ է նշել, որ առարկան նոր է մտցված դպրոցական ծրագիր /3 տարի/, և որ դեռևս չունենք բավարար քանակությամբ մասնագետ մանկավարժներ: Այդ իսկ պատճառով թույլ է նաև համագործակցությունը ուսուցիչների միջև:

Ամենամյա անցկացվող վերապատրաստման դասընթացները բավարար չեն անհրաժեշտ որակ ապահովելու մասնագետ ուսուցիչների մոտ. հարկ է, որ յուրաքանչյուր մասնագետ ուսուցիչ ինքնակրթությամբ ավելի շատ զբաղվի՝ խորացնելու մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները:

Այլ թերությունների շարքում հարկ է նշել, որ ոչ բոլոր դպրոցներն ունեն շենքային հարմար պայմաններ՝ շախմատի կաբինետ ստեղծելու համար, ինչպես նաև շատ քչերում են աշխատանքներ տարվում կաբինետների ստեղծման ու կահավորման ուղղությամբ: Այս առումով ընդօրինակման արժանի աշխատանք են կատարել Ստեփանակերտի h.2 հիմնական և Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցների ուսուցիչներն ու խմբակավարները:

Միաժամանակ հարկ է նշել, որ ուսուցիչների արդյունավետ աշխատանքը խոչընդոտում են մի շարք դպրոցներում /Մարտակերտի շրջանի Մոխրաթաղի, Ճանկաթաղի, Պողոսագոմերի, Ծաղկաշենի, Ասկերանի շրջ. Սղնախի, Խրամորթի, Հարավի, Աստղաշենի, Մարտունու շրջանի Նորշենի և այլն/ համակազմ դասարանները:

Շատ քիչ դպրոցներում են հատկացված խմբակային ժամեր, ինչն առավել անհրաժեշտ է համակազմ դասարաններ ունեցող դպրոցներին:

Ոչ բոլոր ուսուցիչներն են կիրառում դասավանդման արդյունավետ մեթոդներ. մի մասը ավելի շատ խոսում է, քան խոսեցնում, մյուս մասը առավել ուշադրություն է դարձնում տեսական գիտելիքներին, այլ մասը կարևորում է գործնական հմտությունները/խաղը/, մինչդեռ դրանք պետք է համատեղել:

Մյուս կողմից՝ ծնողները չունեն առարկայի վերաբերյալ բավարար գիտելիքներ, որպեսզի կարողանան երեխաներին տնային առաջադրանքների կատարման ժամանակ որոշ օգնություն ցուցաբերել:

Նման վիճակը ուսուցիչներին պետք է դրդի պրպտելու և գտնելու դասարանում դասը հետաքրքիր դարձնելու, տնային աշխատանքներով չծանրաբեռնելու, այդ վարժությունները դասարանում լուծելու միջոցներ և հնարներ:

Լսված դասերի համատեղ քննարկումից հետո աշխատանք է տարվել բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ: Ուսուցիչներին ցույց է տրվել մեթոդական օգնություն առարկայի դասավանդմանն առնչվող հարցերի կապակցությամբ:

Հարկ է նշել, որ հանրակրթական դպրոցների սովորողները յուրաքանչյուր տարի մասնակցում են ԼՂՀ, իսկ հաղթողները՝ նաև ՀՀ դպրոցականների շախմատի օլիմպիադաներին /ներդպրոցական, շրջանային-քաղաքային, հանրապետական փուլեր/, տարիքային անհատական առաջնություններին:

ԼՂՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի ընթացքում /հանրապետական փուլի մրցումներում / հաղթող են ճանաչվել Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի /I տեղ/, Ստեփանակերտի h. 8 ավագ դպրոցի /II տեղ/, Քաշաթաղի շրջանի Գանձայի միջնակարգ դպրոցի /III տեղ/, Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցի /I տեղ/, Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի /II տեղ/, Ստեփանակերտի h. 7 հիմնական դպրոցի /III տեղ/ թիմերը:

Առաջին տեղեր գրաված թիմերը պարգևատրվել են գավաթներով և դիպլոմներով, հաղթող ճանաչված թիմերի մարզիկներն ու մարզիչները՝ պատվոգրերով և դրամական պարգևներով: Անհատական լավագույն արդյունք ցուցաբերած տղան՝ Մանուկյան Սևակ / Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտ/, և աղջիկը՝ Ադամյան Մանե / Ստեփանակերտի h. 8 ավագ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի/, պարգևատրվել են նաև արժեքավոր նվերներով:

Ի դեպ, նշեմ, որ նշված երկու հոգին մասնակցել են նաև ՀՀ շախմատի տարիքային անհատական առաջնության եզրափակիչ փուլին և դարձել համապատասխանաբար, I և III կարգի մրցանակակիրներ: Նրանք ձեռք են բերել նաև ուղեգրեր՝ մասնակցելու միջազգային կարգի մրցումներին /աշխարհի և Եվրոպայի առաջնություններ/:

Օլիմպիադայի հանրապետական փուլի հաղթող ճանաչված թիմերը՝ Մարտունու շրջանի Բերդաշենի մ/դ և Մարտակերտի շրջանի Հաթերքի մ/դ, մասնակցել են ՀՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլի մրցումներին, ցավոք, մրցանակային տեղեր չեն զբաղեցրել:

Առարկայի դրվածքի բարելավման նպատակով ուսուցիչներին հանձնարարվել է՝

- մշտապես զբաղվել ինքնակրթությամբ, սերտորեն համագործակցել՝ աշխատանքի ընթացքում անընդհատ կատարելագործելով դասավանդման մեթոդները, ձգտելով առարկայի հանդեպ հետաքրքրություն առաջացնել աշակերտների մեջ, դասագործընթացում գործուն պահել յուրաքանչյուր աշակերտի՝ համատեղելով հարցումն ու ինքնուրույն աշխատանքը,
- կազմակերպել շերտավորված ուսուցում՝ նկատի ունենալով յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները,
- պարբերաբար ստուգել տնային աշխատանքների տետրերը, հետևել, որ տրամագրերի լուծումները կատարվեն քայլերի գրանցումներով,
- հետևողական ու պահանջկոտ լինել տրված յուրաքանչյուր հանձնարարության կատարման հանդեպ,
- ձեռնամուխ լինել կաբինետների ստեղծմանն ու կահավորմանը:

**Բելլա ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**
**Պետական փեսուչ**

*Խոսք երախտագիտության*

# ԱԶԳԻ ԶԱՎԱԿ ԼԻՆԵԼ ԲԱՎԱԿԱՆ ՉԷ, ՊԵՏՔ Է ՆԱԵՎ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Սզնեք գյուղի լավագույն զավակներից է Վալերի Անդրանիկի Ավետիսյանը, ով ապրում է Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում: Այս տարի հերթական այցի եկավ գյուղ՝ իր նորակառույց տունը տեսնելու և հարազատներին ու բարեկամներին տեսակցելու: Եվ ինչպես միշտ, նա այս անգամ ևս հաճախեց դպրոց և աշակերտներին ու դպրոցին նվիրեց դաշնամուր և լուսակիր:

Դպրոցի գերազանց սովորող և առարկայական օլիմպիադաներում առաջնություն գրաված ութերորդ դասարանի աշակերտ Կարեն Մարտիրոսյանին Վալերին խրախուսեց 20.000 դրամական պարգևով: Աշխարհագրություն առարկայից նույն դասարանի աշակերտ Հարութ Մուսայելյանին հանրապետական փուլին մասնակցելու և առաջնային տեղ գրավելու համար պարգևատրեց 10.000 դրամ գումարով: Գերազանց սովորող երկու աշակերտի՝ Անի Սահակյանին և Շահանե Մարգարյանին բարերարը նույնպես քաջալերեց՝ յուրաքանչյուրին տալով 10.000 դրամ:

Վալերի Ավետիսյանը տեղեկացրեց, որ հաջորդ այցին դպրոցի բոլոր աշակերտների համար կբերի սպորտային հագուստ և սպորտային պարագաներ՝ խոստանալով, որ այդ ամենը կլինի շարունակական: Միայն թե դպրոցի աշակերտները լավ սովորեն ու հայրենիքին պիտանի մարդ դառնան:

Հաջորդ անգամ բարերարը իր թոռան հետ գյուղ եկավ մայիսի 23-ին՝ մասնակցելու շրջանավարտների Վերջին զանգին ու կատարելու տված խոստումը: Նա բոլոր աշակերտների համար բերեց թանկարժեք սպորտային հագուստ և դպրոցին նվիրեց զանազան սպորտային գնդակներ՝ մեծ ուրախություն պատճառելով աշակերտներին ու նրանց ծնողներին, առանձնակի շուք հաղորդելով միջոցառմանը:

Վերջին զանգին մասնակցեց նաև արմատներով վերինսզնեքցի, Ուկրաինայի քաղաքացի Գևորգ Յարամիշյանը, ով Վերին Սզնեքի տարածքում, գետի գեղատեսիլ ափին, հանգստյան գոտի է կառուցում, որը կունենա մեծ ջրավազան և որից անվճար կօգտվեն դպրոցականները և գյուղի մնացած բոլոր երեխաները:

Վերջում աշակերտներին Գևորգը նվիրեց երկու թանկարժեք շախմատ և շախմատային ժամացույց:

Աշակերտների շնորհակալական ծափերի ներքո Գևորգը հեռացավ դպրոցից՝ նորից վերադառնալու խոստումով:

Վալերիի նպատակն է ծաղկուն տեսնել իր հայրենի գյուղը: Նա, գործարար լինելով հանդերձ, շատ է սիրում իր փոքրիկ Սզնեքի հողն ու ջուրը, նրա մարդկանց: Դրա համար էլ գյուղում տուն կառուցեց, չնայած նա կարող էր այդ տունը կառուցել թե՛ Ստեփանակերտում և թե՛ Երևանում, բայց նա նախընտրեց հայրենի գյուղը՝ վերակառուցելով իր պապենական օջախը: Վալերին նպատակ ունի նաև օգնել բոլոր նրանց, ովքեր կցանկանան վերադառնալ գյուղ և իրենց օջախները շենացնել: Իր տունը վերանորոգող երիտասարդ վարպետին, ով գյուղում տուն կառուցելու ցանկություն է հայտնել, խոստացել է ամեն ինչով օգնել և օժանդակել: Ես կանեմ ամեն ինչ՝ միայն դպրոցի զանգի ղողանջները հավերժ լինեն: Վալերի Ավետիսյանը բարեգործություն անելը ժառանգել է իր Ավետիս պապից, ով բնիկ շուշեցի էր և ապրում էր Ղազանչեցոց եկեղեցու հարևանությամբ: Նրա պապը մեծ բարերար Տեր Թադեոսի ազգակիցն ու բարեկամն էր: 1920թ. Շուշիի ջարդերի ժամանակ թուրքերը վառեցին նրանց տունը, և նրա ընտանիքը բռնեց գաղթի ճանապարհը: Ճանապարհին Վալերիի պապիկը հանդիպում է իր կյանքի կեսին (բալուջեցի Մարալին), և նրանք հանգրվանում են Սզնեք գյուղում, ընտանիք կազմում, ունենում չորս զավակ:

Ուրիշի հոգսերով ու ցավերով ապրելը, նրանց նկատմամբ գթասիրտ, հոգատար ու կարեկից լինելը ժառանգել է իր խոսքաշեն հորից՝ Անդրանիկ Ավետիսյանից և գթասիրտ մորից՝ Մանյա Առստամյանից:

Այս տողերով ես ուսուցչական կոլեկտիվի, դպրոցի աշակերտների ու նրանց ծնողների անունից ուզում եմ մեր խորին հարգանքն ու շնորհակալությունը հայտնել Վալերի Ավետիսյանին և Գևորգ Յարամիշյանին, նրանց մաղթել առողջություն ու արցախյան երկարակեցություն:

**Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ**
**գ.Սզնեք**

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# ՏԻԵԶԵՐՔՆ ԱՆԸՆԴՀԱՏ ՓՈՓՈԽՎՈՒՄ Է, ՈՒՍՏԻ ԱՅՆ ԴԺՎԱՐ Է ԼԻԱՐԺԵՔ ՃԱՆԱՉԵԼ



*Անցյալ տարի հոկտեմբերին Արցախում համերգով հանդես եկավ աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալիեն, որի կազմակերպիչներից մեկն էլ «Ստարմուս» կազմակերպությունն էր՝ ի դեմս նրա հիմնադիր և ղեկավար Գարիկ Իսրայելյանի: Նրան Արցախում հիշում են 2011թ. առաջին լուսնագնաց Նիլ Արմսթրոնգին նվիրված՝ ամերիկացի տիեզերագնացներ Չարլզ Դյուկի և Կլոդ Նիկոլի մասնակցությամբ Ստեփանակերտում տեղի ունեցած գիտաժողովից:*

*Ներկայացնում ենք մեր հարցազրույցը Կանարյան կղզիների աստղադիտարանի լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր* ***Գարիկ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ*** *հետ:*

***-Պարոն Իսրայելյան, ի՞նչ է «Սթարմուսը»:***

-Գիտության, արվեստի և երաժշտության լավագույն համադրումով փառատոն է, որին մասնակցում են տիեզերագնացներ, աշխարհահռչակ գիտնականներ, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, արվեստագետներ: Դա ավելի շատ գիտական փառատոն է, որտեղ համերգներ էլ են լինում, գիտնականները ելույթ են ունենում, որոնք ոչ թե պրոֆեսիոնալ գիտական, այլ հանրաճանաչ զեկուցումներ են: Կազմակերպվում է երեք տարին մեկ: Անցած ամռանը տեղի ունեցավ «Ստարմուսի» երկրորդ փառատոնն Իսպանիայում:

***- Փաստորեն, Դուք զբաղվում եք ոչ միայն երկնքի, այլև երկրի՞ աստղերով:***

-Ես փոքրուց երաժշտության մեջ եմ մեծացել, խմբերում եմ նվագել, երաժշտության հետ միշտ կապ եմ ունեցել, դրա համար էլ իմ ծանոթների մեծ մասը երաժիշտներ են: Գիտնականների հետ մի քիչ բարդ է ընկերություն անելը, ավելի սահմանափակ մտածողություն ունեն (*ծիծաղում է*):

***- Ինչի՞ վրա եք հիմա աշխատում:***

-Իմ գիտական նախագծերն եմ առաջ տանում: Մենք հիմա շատ զբաղված ենք մի հետաքրքիր թեմայով. փորձում ենք հասկանալ, թե աստղերի մոտ ինչ ֆիզիկական պրոցեսներ են, որ կրիտիկական ազդեցություն ունեն իրենց շուրջ մոլորակների առաջացման վրա: Օրինակ՝ գիտենք, որ մոլորակների շատ մեծ սպեկտր կա, տարբեր տիպի մոլորակային համակարգություններ՝ զանգվածով Յուպիտերից շատ մեծ, Երկրից ավելի փոքր մոլորակներ, նույնիսկ արդեն գտնում ենք Արեգակնային համակարգության նման մոլորակներ: Ու փորձում ենք հասկանալ, թե ինչի հետ է կապված, ո՛ր աստղի ո՛ր պարամետրերն են որոշում, թե իր շուրջը ինչ տիպի մոլորակներ պետք է լինեն: Արդյոք աստղի մագնիսակա՞ն դաշտն է, զանգվա՞ծն է, պտտման արագությու՞նն է, քիմիական բաղադրությո՞ւնը: Դրանք ինչ-որ ձևով ազդո՞ւմ են իրենց շուրջ հավաքվող մոլորակների վրա, և եթե ազդում են՝ ինչպե՞ս: Այդ կապի վրա ենք հիմա աշխատում:

***- Համագործակցու՞մ եք Հայաստանի գիտնականների հետ:***

-Երկու ասպիրանտ ունեմ Հայաստանից, մեկը հիմա Պորտուգալիայում է, մյուսը՝ Գերմանիայում: Ընդգրկված են իմ նախագծերում: Աշխատում են արտերկրի իմ գործընկերների հետ, որովհետև մեզ մոտ միայն միջազգային համագործակցություն է: Ես ավելի շատ աշխատում եմ Պորտուգալիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի կենտրոնների հետ: Բյուրականում իմ նախագծերով չեն զբաղվում, այսինքն՝ այն խնդիրներով, որոնք ես եմ դնում, իրենք չեն զբաղվում:

***- Ինչպե՞ս եք գնահատում այսօր Հայաստանում գիտության վիճակը: Հնարավո՞ր է զարգացում ապահովել սեփական ուժերով, թե՞ պետք է համագործակցել:***

-Անպայման պետք է դրսի հետ համագործակցել, որովհետև գիտությունը, մանավանդ աստղագիտությունը, հիմա ավելի թանկ հաճույք է, քան սրանից երկու տարի առաջ էր: Թանկ հաճույք է Հայաստանի նման փոքր երկրի համար: Գիտությունը մինչև կիրառում չունենա տնտեսության մեջ, ներդրված գումարները ոնց որ օդ նետես: Նման պարագայում աստղագիտության վրա գումար ծախսելը դառնում է շքեղություն: Եվ ոչ միայն՝ աստղագիտության: Նույն ձևով՝ տեսական ֆիզիկան, մաթեմատիկան. դրանք այնպիսի գիտություններ են, որոնք անմիջական կիրառություն չունեն տնտեսության մեջ, դրա համար էլ աչքաթող են արվում: Բայց առաջին հայացքից է այդպես երևում: Դրանց օգուտը շատ ավելի խորն է, բայց քանի որ երկրներն ունեն կարճաժամկետ՝ 3-4 տարվա ծրագրեր, իրենց համար անչափ դժվար է այդ գիտություններում լուրջ ներդրումներ անել: Նույնիսկ ԱՄՆ-ի նման երկրի մասին չի կարելի ասել, որ ունի ազգային աստղագիտություն: Մեծ համալսարաններն ընդհանրապես պետությունից գումար չեն վերցնում: Ամերիկայում ազգային գիտության հիմնադրամը /NSF/ քիչ-քիչ դրամաշնորհներ է բաժանում գիտական կենտրոններին, վերջիններս հիմնականում իրենց գումարներով են անում թանկ գիտափորձերը, որոնք 7-8 հարյուր միլիոն դոլար արժեն: Մասնավոր միջոցներով, հովանավորներով են անում այդ ամենը:

***- Իսկ ի՞նչ շահ ունեն մասնավորները, որ այդքան խոշոր ներդրումներ են կատարում գիտության մեջ:***

-Երկու հետաքրքրություն. նախ, եթե ինչ որ ծրագրի հովանավոր են, պետությանը հարկ չեն վճարում: Երկրորդ, մասնավոր հովանավորների մեծ մասը բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործարարներ են, և բոլորն էլ սիրում են աստղաֆիզիկան, ուստի իսկական ներդրումներ են կատարում այդ բնագավառի գիտափորձերի վրա: Այդ գումարները ոչ թե մտնում են աստղագետների գրպանը, այլ ծախսվում են ինժեներներ պատրաստելու, նոր տեխնոլոգիաներ ստեղծելու վրա: Կանարյան կղզու մեր աստադադիտակի վրա ծախսված 150 մլն եվրոն ամբողջությամբ ներդրվել է տնտեսության մեջ՝ ինժեներների, տեխնոլոգիաների, օպտիկայի վրա:

***- Իսպանիայում գիտությունը զարգացա՞ծ է:***

- Անհամեմատ զարգացած է: Իսպանիան այնքան էլ հարուստ չէ, բայց աստղադիտարանը աշխարհում հայտնի է: Երկնքի շնորհիվ մեր աստղադիտարանի հիմնադիրը՝ առաջին տնօրենը, շատ ջանք թափեց՝ համոզելու համար Իսպանիայի քաղաքական գործիչներին, որ այդտեղ պետք է ստեղծվի աստղադիտարան: Երկինքը շատ մաքուր է կղզիներում է և շատ հարմար աստղագիտական հետազոտություններ կատարելու համար:

***- Դուք ասում եք, որ առաջին աստղագետները, դեռ Պլուտոնի ժամանակներից, սխալ չէին, երբ ասում էին, որ Երկիրը կլոր է: Այսօրվա գիտնականների պատկերացումները մոլորակների մասին շատ չեն փոխվել, պարզապես տեխնոլոգիաներն են զարգացել, որոնք հնարավորություն են տալիս միլիմետրի միլիարդերորդ ճշտությամբ տատանումներ գրանցել, դրանց հիման վրա գիտական հայտնագործություններ կատարել: Ի՞նչ կարող եք ասել՝ ուրիշ մոլորակներում կա՞ կյանք:***

- Զարգացած կյանքի մասին չենք կարող ասել, բայց կարող ենք ասել, որ որոշ մոլորակների վրա կան կենսաբանական ակտիվություններ:

***- Պայքարը նաև տիեզերքո՞ւմ է գնում:***

- Երբ ստեղծվում են մոլորակային համակարգությունները, մոլորակները մինչև ձևավորվում են, կլոր իրենց տեսքը ստանում (ի դեպ, իսկա մոլորակները արագ են առաջանում՝ մոտ 800 մլն տարում), այդ արագ պրոցեսի ժամանակ փոշի են առաջացնում: Բայց մի քանի մոլորակներ իրար հետ յոլա չեն գնում, հարվածում են իրար, մեկին շպրտում են դուրս, որոշ ժամանակ անցնում է, մինչև հաստատվում է հանգստություն, խաղաղություն համակարգի մեջ: Մնում են մեկ կամ երկու մոլորակ՝ իրարից հեռու:

***- Կարելի է կարծել, որ պատերազմ է գնում նաև տիեզերքում, քանի որ ավելի խոշոր մոլորակները դուրս են մղում փոքրերին: Ամեն տեղ է այդպես, ուժեղը հաղթում է թույլին: Միշտ այդպե՞ս պետք լինի:***

-Չէ, դա չակերտավոր պատերազմ է: Մեծ զանգված ունեցող մարմինների ձգողական դաշտը հզոր է, ու խաղի կանոնները իրենք են թելադրում, միշտ հաղթողի դերում են:

***- Ի՞նչ է ստացվում, ամենուր ուժեղի՞ իրավունքն է, անգամ տիեզերքում …***

- Փոքր մոլորակները միշտ տուժում են: Փոքր երկրներն էլ են տուժում, բայց այդ չի նշանակում, թե մեծ երկրների մարդիկ ավելի լավ են ապրում, քան փոքր երկրներում:

***- Դուք հետազոտում եք տիեզերական երաժշտությունը: Այժմ՝ այդ մասին:***

- Ձայներ կան շատ օբյեկտների մեջ, մեծ մասամբ աստղերի մթնոլորտում կան ձայնային ալիքներ: Շատ դեպքերում այդ ալիքները կարող են շատ արագ գրգռվել ու մարել, որովհետև էներգիան կորցնում են: Բայց որոշ աստղերի մոտ կան պայմաններ, որ այդ ալիքները մշտապես գործում են մթնոլորտում, միշտ առաջանում են ձայնային ալիքներ, և մենք հնարավորություն ունենք այդ ալիքները ակտիվ սեյսմոլոգիա անելու, կարողանում ենք դիտել աստղի մակերևույթին այդ ալիքների ազդեցությունը: Տեխնոլոգիաները թույլ են տալիս դա անելու:

Դրանք ձայներ են նաև, ու քանի որ այդ ձայները փոխվում են ժամանակի ընթացքում, մենք կարող ենք դրանք նմանեցնել երաժշտության: Ձայներ կան, որ մոտ են որոշ երաժշտական գործիքների, ինչպես, օրինակ՝ դուդուկին: Աստղերի մթնոլորտներում ջերմաստիճանը բարձր է, մի քանի հազար աստիճան, ու այդ ձայնային ալիքները ցածր հաճախականություն ունեն, մենք չենք կարող լսել, դրանք ինֆրաձայներ են: Եթե այդ ալիքները գրանցենք ու նրանց հաճախականությունը բարձրացնենք, կարող ենք լսել: Մենք մի նախագծի վրա էինք աշխատում, որը կոչվում էր «Ձայների պրոյեկտ»: Բայց առայժմ չենք հասել այն մակարդակին, որ դրանով երաժշտություն ստեղծենք: Ես փորձում էի տարբեր երաժիշտների ներգրավել: Նույնիսկ Մոնսերատ Կաբալիեին էր հետաքրքրում այդ ծրագիրը: Սա ավելի շատ սիրողական պրոյեկտ է, որը բերում է աստղագիտության, մարդիկ սկսում են հետաքրքրվել, ուզում են կարդալ ինչ-որ գրականություն:

***- Դուք ասացիք, որ այդ ձայները ականջի համար լսելի չեն, բայց Թումանյանը, օրինակ՝ գրում էր, որ հոգին սավառնում է տիեզերքում, իրեն հասանելի են տիեզերական ձայները և նման այլ տողեր: Այսինքն՝ կան անհատներ, որոնց հասու են երկնային ձայները:***

- Ինձ թվում է՝ դա արվեստագետների մուսան է, մարդ որ տարվում է մի բանով, մուսան գալիս է, այդ ձայները լսում է:

***- Մարդը, ով մշտապես կապ ունի տիեզերքի հետ, ինչպե՞ս է իրեն զգում երկրի վրա:***

- Երբ ձեր աշխատանքը կապված է աստղերի հետ, ձեզ կտրում է աշխարհի խնդիրներից, դուք սկսում եք աշխարհի խնդիրներին ուրիշ աչքով նայել:

***- Բայց բոլոր դեպքերում պետք է նպաստեք, չէ,՞ Երկրի խնդիրների լուծմանը:***

- Անպայման, ընդհանրապես ամեն ինչ ավելի լավ ես հասկանում, երբ դրսից ես նայում, ուրիշ աչքերով: Այդ նույն բանը տիեզերագնացներն են ասում, եթե երկրագնդին հեռվից նայես, միանգամից քո աշխարհը կփոխվի: Կհասկանաս, որ ամբողջ աշխարհում շատ ավելի կարևոր բաներ կան, ինչո՞ւ են մարդիկ անընդհատ պատերազմներ մղում, իրար կոտորում, փոխանակ իրար հետ համագործակցեն, իրար օգնեն: Ընդամենը մի երկրագունդ է, ու իրար հետ յոլա չեն գնում:

***- Ձեր հետազոտությունները Ձեզ ինչի՞ են հանգեցրել. աստղերը, տիեզերքը ճանաչելի են մինչև վե՞րջ:***

- Ո՛չ, քանի որ ինքը փոփոխվում է, եթե փոփոխվող չլիներ, կճանաչեինք: Շերտեր ենք բացում, նորից բացում, էլի բացում ու անընդհատ նոր բաներ իմանում: Դա կախված է նաև գիտության զարգացումից: Ընդամենը հարյուր տարի է, որ սկսել է գիտությունը զարգանալ: Հարյուր տարին թե՛ մարդկության զարգացման մեջ, թե՛ տիեզերքի մասշտաբով մեծ ժամանակահատված չէ: Ծիծաղելի է մտածել, որ ընդամենը հարյուր տարի է, որ սկսել ենք զբաղվել, բայց ուզում ենք ամեն ինչ բացատրել: Այդպես չի լինում:

***- Իսկ այդքան որ խոսում են աշխարհի վերջի մասին, դա հնարավո՞ր է:***

- Ամենամեծ հնարավորությունը աստերոիդների հարվածից կարող է լինել: Դրա հավանականությունը կա: Գիտենք, որ Մարսի և Յուպիտերի մեջտեղում մեծ տիրույթ կա, որտեղ շատ աստերոիդներ են գտնվում: 10-20 կմ-ոց քարերը աղետ կարող են առաջացնել:

***- Ուրեմն, մեր մոլորակը վտանգի տա՞կ է:***

- Անպայման: Ամենաիրական վտանգը դա է: Մյուս վտանգները՝ գերնոր աստղերի պայթյունը և այլն, այդքան վտանգավոր չեն:

***- Դրանից փրկության չկա՞, սպասենք մեր վերջի՞ն:***

- Եթե այդ քարերը չվերացվեն, այո:

***- Իսկ այդ ուղղությամբ գիտնականները չե՞ն աշխատում:***

- Աշխատում են: Հիմա փորձում են դիտակներ սարքել, ռոբոտային դիտակների համակարգ Երկրի վրա, որ այդ քարերի մինչև մեզ մոտենալը կարողանան իմանալ և պայթեցնել:

***- Գիտություն-կրոն…***

- Ես հավատացյալ չեմ:

***- Այսինքն՝ աստղագիտությունը հնարավորություն է տալիս չհավատա՞լ Աստծուն:***

- Չէ՛, գիտնականներ կան, որ հավատում են:

***- Գերբնական ուժերից կախվածությունը թույլ է տալիս հավատալ …***

- Հասարակ մարդու համար ամեն ինչ էլ գերբնական է: Եթե նա գյուղատնտեսություն չի հասկանում, դա էլ է գերբնական նրա համար: Այնքա՜ն ուժեր կան բնության մեջ, ամեն ինչի մասին կարող են ռեալ խոսել, եթե ունեն գիտելիքների մեծ պաշար: Հակառակ դեպքում շատ դժվար է այդ ամեն ինչի մասին շատ խոր դատողություններ անել:

***Հարցազրույցը՝***
***Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԻ***

***Հ.Գ.*** *Օրերս ճանաչված գիտնականը կրկին Արցախում էր: Այցի նպատակը երկու տարի առաջ մտահղացված գաղափարի իրագործումն էր. Արցախում կառուցել աստղադիտարան…*

ՀԱՅԵՐ

# »ՀԱՅՈՒ ՎԵՐՋԻՆ ՏՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ«



Եգիպտահայ անվանի գրող, թատերագիր, հրապարակախոս, երգիծանկարիչ, ազգային-հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանը Հայոց ցեղասպանությունը վերապրածների սերնդից է: Դուստրը հայտնի բանահավաք, բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազլյանն է, ով իր կյանքի 60 տարիները նվիրել է մարդկության դեմ իրագործված այդ հրեշավոր ոճրագործության ականատես-վերապրողների վկայությունները անհետ կորստից փրկելուն՝ տարբեր լեզուներով աշխարհին ներկայացնելով հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը՝ ի նպաստ Հայոց ցեղասպանության ճանաչման: Գիտական այդ սխրանքի ակունքում մտավորական հոր կերպարն էր, որին արժանի մի գործ կատարելու երազանքը կյանքի կոչվեց «Հայոց ցեղասպանություն. ականատես-վերապրողների վկայություններ» հուշամատյան-կոթողի տեսքով՝ հրատարակված վեց լեզվով: «Ինձի համար հայրենասիրությունը արժանապատվության խնդիր է»՝ Միհրան Սվազլըի (Սվազլյան) այս խոսքերը դարձել են Սվազլյան գերդաստանի հավատամքը: Ստորև կանդրադառնանք լայն հանրությանն անճանաչ կամ սակավ ծանոթ, հայրենանվեր մտավորական Գառնիկ Սվազլյանի կյանքին ու գործունեությանը: Ազգանունը հուշում է, որ Սեբաստիա-Սվազից է սերում տոհմը: Կոտորածից փրկվելու հույսով եկել-հաստատվել են Զմյուռնիա-Իզմիրում, որը հունական տիրապետության տակ էր:

1922 թվականի Իզմիրի աղետը Հայոց ցեղասպանության վերջին արարն էր. թուրքերը հրո ճարակ դարձրին «Հայնոցը»՝ քաղաքի հայկական թաղամասը, որպեսզի հայերը, զրկվելով տունուտեղից ու ինչքից, թողնեն-հեռանան երկրից, քանի որ Աթաթուրքը հայտարարել էր՝ Թուրքիան՝ թուրքերին: Երբ թաղամասի տները լափլիզելով կրակի լեզվակները ոչնչացնում էին ամեն ինչ իրենց չորսբոլորը, հայերը հուսահատ նետվեցին փողոցները՝ վազելով դեպի ծովը: Թուրքերը հասան իրենց նպատակին. հրդեհը պատնեշել էր հայերի թիկունքը, իսկ առջևում սպառնում էր ջրի տարերքը. հետևը՝ հուր, առաջը՝ ջուր: Ծովափին թուրք մակույկավարները խորամանկությամբ հայերից կորզում էին վերջին ոսկիներն ու զարդեղենը՝ խոստանալով նրանց հասցնել քիչ հեռվում խարիսխ ձգած շոգենավերը, որոնցով կարող էին փրկվել այդ գեհենից: Բայց հենց լեփ-լեցուն մակույկները հեռանում էին ափից, նավավարներն աննկատ բացում էին մակույկը լվանալու համար նախատեսված անցքը, մի քանի րոպեում ջուրը լցվում էր դրանց մեջ, և հավասարակշռությունը կորցրած մակույկները շուռ գալով՝ ծովն էին թափում տառապյալ հայերին: Ցամաքում մնացածների առջև սահմռկեցուցիչ տեսարան էր բացվում՝ ծերերի ու մանուկների, կանանց ու տղամարդկանց ջրամույն դիակները ճոճվում էին ծովի մակերևույթին…

Ծովեզերքին կանգնած 18-ամյա Գառնիկ Սվազլյանը, ով մահվան ու հրդեհի խուճապի մեջ կորցրել էր հարազատներին, նետվում է ծովի ալիքների մեջ՝ ապավինելով բազուկների ուժին ու հմուտ լողորդի իր փորձառությանը: Նրան հաջողվում է լողալով մի կերպ հասնել իտալական մի ռազմանավի: Խարսխի շղթայով մագլցելով՝ բարձրանում է մինչև ծխնելույզը և այնտեղ թաքնվում: Երկու օրից նավը նրան հասցնում է հունական Պիրեյա նավահանգիստ, որտեղ պատանին, նախ պատահական աշխատանքներով, ապա կլուրիա (փոքրիկ հաց՝ վրան՝ քունջութ) ծախելով կարողանում է հոգալ իր ապրուստը: Երկու տարի այդտեղ մնալուց հետո որոշակի գումար է հետ գցում և անցնում Եգիպտոս, բնակություն հաստատում Ալեքսանդրիա քաղաքում: Այստեղ նա ոսկերչական խանութ է բացում և շատ շուտով վարպետ ոսկերչի համբավ ձեռք բերում: Հատկանշական է, որ Զմյուռնիայի հայ ոսկերիչները շատ հայտնի էին և՛ վարպետությամբ, և՛ հարստությամբ: Պատմում են, որ մինչև Իզմիրի աղետը, երբ մի անգամ Խրիմյան Հայրիկը գնացել էր այնտեղ, այսպես է դիմել իր հոտին. «Ես ձեզ խորհուրդ եմ տալիս որպես հայր, մարոլի նման մի՛ բացվիք, կաղամբի նման գոցվեցե՛ք, մի՛ ցուցադրեք ձեր ամեն ունեցածը, հիշեցե՛ք որտեղ եք ապրում»: Այդպես էլ եղավ. հայերի ունևորությունը գրգռեց թուրքերի նախանձը:

Ալեքսանդրիայում Գ. Սվազլյանն զբաղվում էր ոչ միայն ոսկերչությամբ, այլև հանդես էր գալիս որպես հասարակական գործիչ, գրող և հրապարակախոս: «Պետք է գործի լծվինք բոլորս ալ մեկ գաղափարի շուրջ, որ է Հայրենիքի օժանդակության գործը, մեկ մտասևեռում ունենալով՝ Հայրենիքի վերականգնումը, և մեկ կարգախոս մեր բոլորին շրթունքներուն ծայրը՝ դեպի Հայրենիք»,- գրել է հայրենասեր հայը 1932 թվականին, իր «Ո՞ր օրվան կը սպասենք» հոդվածում: Շուտով իր վարպետության շնորհիվ այնպիսի համբավ ձեռք բերեց, որ երբ Եգիպտոսի թագավորի քույրը ամուսնացավ պարսից շահի տղայի հետ, հարսնացուի ամբողջ զարդեղենը նրան էին պատվիրել: Եվ այնքան գոհ էին մնացել, որ շահնշահը, շնորհակալագիր ուղարկելով ոսկերիչին, հրավիրել է նրան ընտանիքով տեղափոխվել Պարսկաստան, այնտեղ խանութ բացել, զբաղվել իր արհեստով, նույնիսկ պարսկական անձնագրեր է ուղարկել, որոնք մինչև այսօր պահպանվում են դստեր՝ Վերժինե Սվազլյանի մոտ: Բայց նա չգնաց, որովհետև բարեկեցություն ու հարստություն չէր նրա փնտրածը, այլ հայրենիքն էր նրա մտասևեռումը: Նա ջանում էր իր հայրենակիցներին համոզել, որ սփյուռքը մեր վերջնական հանգրվանը չէ, որ հայի միակ ապահով հանգրվանը փոքրիկ Հայաստանն է, որ մնացել է պատմական հայրենիքից: «Մենք սփյուռք մը ունենալու համար չէ, որ աշխարհի ամեն կողմը ցրված ենք, այլ բռնությունից ու հալածանքից ստիպված…: Հայու վերջին տունը, հայու վերջին տեղը Հայրենիքն է ու Հայաստանը»: Բայց ընդդիմախոսները նրա հոդվածներին ու ելույթներին հակառակվում էին՝ ասելով. «Ո՞ւր է Հայաստան: Հայաստանը կարմիր է հիմա, բոլշևիկ է, Ռուսաստանի գաղութն է ընդամենը: Մենք հայրենիք չունենք»: Նրան մեղադրելով բոլշևիզմի մեջ՝ բանտ են նետել: Տիկին Վերժինեի խոսքով՝ չորս անգամ բանտարկել են հորը, իսկ իրեն չարախոսողների դեմ նա մի պատասխան ուներ. «Այո՛, այսօր կարմիր է մեր հայրենիքը, բայց չգիտենք՝ վաղը ինչ կարող է լինել»: Հիրավի, մարգարեական պայծառատեսություն. «…Այժմ ունենք մեր անկախ Հայրենիքը: Հայրս հավատում էր այն օրվան, որ հայությունը պիտի գա, հավաքվի Հայաստանում, որովհետև Հայաստանը մագնիսի նման պիտի ձգի բոլորին: Նա հատուկ մեկնեց Լիբանան, որպեսզի տեսնի հայրենադարձների քարավանի երթը դեպի հայրենիք: Այնքան ոգևորված էր, որ այդ ոգևորությունը բերեց նաև Եգիպտոս ու գրեց «Եգիպտահայությունը և ներգաղթը», թե որքան կարևոր է սփյուռքահայության համար ներգաղթը, որովհետև օտարության, ձուլումի, այլասերումի պայմաններում, հայերն իրենց ուժերն ու եռանդը իզուր մսխում են օտար ափերում՝ «օտար երկրներն ենք մենք ծաղկեցնում մեր բազկի ուժով ու մտքի զորությամբ»: Նա կոչ էր անում. «Երիտասարդնե՛ր, ձեր բազուկները, բանվորնե՛ր, ձեր մուրճը, հարուստնե՛ր, ձեր քսակը, բոլորս միասին հավաքվենք և Պեշիկթաշլյանի «Եղբայր ենք մեք»խոսքերը մեր շուրթերին՝ մտնենք Հայաստան»: Նա օժտված էր ճարտասանական ձիրքով և իր ոգեշունչ խոսքով կարողացավ համոզել շատ շատերին՝ բռնել հայրենիքի ճամփան: Վերհիշում է տիկին Վերժինեն. «Նրա խոսքը՝ թե՛ տպագիր, թե՛ բանավոր շատ հուզիչ և ազդեցիկ էր: Մեծ հայրենասեր էր և լավ հռետոր: Հիշում եմ՝ փոքր ժամանակ մի անգամ ականատես եղա մի դեպքի, երբ ամբողջ դահլիճը հեկեկում էր նրա խոսքերից»: Գ. Սվազլյանի հորեղբայր Միհրան Սվազլըն ևս եղել է բոցաշունչ ճարտասան, քաղաքական-հասարակական գործիչ, դիվանագետ, գրող: 1900-ականներին նա եղել է Մեծ Բրիտանիայում Հայանգլիական ընկերության նախագահը, որը լոբբիստական գործունեություն էր ծավալում, իսկ 1917-ին՝ Բոստոնում հիմնված Ամերիկայի Հայ ազգային միության հիմնադիր-նախագահը: Միությունը Ամերիկայում 187 մասնաճյուղ ուներ և կազմակերպում էր դրամահավաքներ, քարոզչական աշխատանք էր ծավալում ամերիկացիների շրջանում՝ ներկայացնելով հայ ժողովրդի պատմական անցյալը և ներդրումը համաշխարհային քաղաքակրթության ծիրում: Վուդրո Վիլսոնի հետ նրա մտերմությունը նպաստել է 1920 թվականին, հայկական տարածքների նկատմամբ Ամերիկայի մանդատային վերահսկողությունը հաստատելու ժամանակ, Հայաստանի պահանջատիրական քարտեզը գծելիս հնարավորինս հավատարիմ մնալ պատմական իրողությանը: Ի վերջո, Լոզանի կոնֆերանսից հետո ականավոր քաղաքական գործիչը, հիասթափված Արևմուտքի երկդիմի քաղաքականությունից, հայացքը դարձնում է Ռուսաստանին: Սվազլյան գերդաստանի համար հայասիրությունը և հայրենասիրությունը տոհմիկ գծեր են. նրան են պատկանում այս խոսքերը. «Հայրենասիրությունը ինձի համար արժանապատվության խնդիր է»: Հատկանշական է, որ Վ. Սվազլյանի մորական պապը՝ Քերովբե Աղաչրաքյանը ևս Հայոց ցեղասպանությունից հետո պաշտպան է կանգնել անապաստան մնացած հայ որբերին և Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից արժանացել է հատուկ շքանշանի՝ որբախնամ գործունեության համար:

Գ. Սվազլյանը գեներով է ժառանգել հայրենասիրությունը. Ալեքսանդրիայում ՀՕԿ-ի մասնաճյուղի հիմնադիրներից էր ու փոխնախագահը: Ինչպես գիտենք, ՀՕԿ-ը հիմնադրվել է Հայաստանում, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի նախագահությամբ, և ինքն էր սփյուռքի բոլոր գաղթօջախներին նպատակաուղղում՝ ինչպես օգտակար լինել «որբի, որբի հայրենիքին»: 20-ական թվականների վերջին և 30-ականներին Ալեքսանդրիայում ՀՕԿ-ի մասնաճյուղը մեծ գործունեություն էր ծավալել: Սվազլյանի նախաձեռնությամբ տարաբնույթ միջոցառումներ էին կազմակերպվում (ճաշկերույթ, թեյասեղան, պաղպաղակասեղան, սուրճի սեղան, Նոր տարվա դիմակահանդես և այլն), և դրանց ընթացքում կատարված հանգանակությունների ողջ գումարը ռուսական դեսպանատան միջոցով ուղարկում էր հայրենիք՝ բնակարանների շինարարության և ներգաղթի ֆոնդերին՝ չնայած դեռ ներգաղթ չկար: Այդ գումարներով են ձեռք բերվել Լենինականի (ներկայիս Գյումրիի) տրիկոտաժի ֆաբրիկայի առաջին հաստոցները, նաև կառուցվել են մի շարք կոթողային շենքեր Երևանում՝ «Երևան» հյուրանոցը (այժմ՝«Գոլդեն թուլիփը») Սպորտկոմիտեի շենքը՝ Աբովյան և Թումանյան փողոցների անկյունում, Բժշկական ինստիտուտի ամբողջ համալիրը, Զորագէսի ջրամբարը, Մշակութային միության շենքը, Ալավերդյան փողոցի վրա բնակելի շենքեր՝ նախատեսված հայրենադարձների համար: Ոչ միայն միջոցառումներով էր նպաստում հայրենիք-սփյուռք կապերի ստեղծմանը, այլև գրեց «Ներգաղթը» պիեսը, որը բազմիցս բեմադրվել է Սփյուռքի տարբեր գաղթօջախներում: 1936թ. երբ նա հրատարակել է պիեսը, գրքի առաջին էջում գրել է. «Ես նյութապես ի վիճակի չեմ ներգաղթին սատարելու, այս գործս կը տրամադրեմ անոր ի նպաստ»: Եղեռնից հետո օտարության մեջ հայտնված մեկ ընտանիքի պատմությամբ նա ներկայացնում է հայի ձուլման անխուսափելի վտանգը, ինչպես նաև նոր սերնդի ակամայից ուծացումը: Թատերգությունը հայրենիք վերադառնալու հզոր խթան դարձավ հայրենաբաղձ հոգիների համար: Գրքի վաճառքից ստացված ողջ հասույթը և բեմադրության տոմսերի գումարներն ամբողջությամբ հատկացվել են ներգաղթի ֆոնդին: 1937թ. վերջին, երբ ՀՕԿ-ը լուծարվեց, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Գ.Սվազլյանը Ալեքսանդրիայում հիմնադրեց «Սևան» մշակութային-հասարակական միությունը, որի ընթերցասրահում դասախոսություններ էր կազմակերպում հայ ժողովրդի պատմության, հայոց լեզվի, հայկական մշակույթի, ազգի երևելիների և նրանց ստեղծագործությունների մասին: Միությունն ուներ 100 հոգանոց երգչախումբ, որում ընդգրկված էր նաև դուստրը՝ Վերժինեն: Դստեր հավաստմամբ՝ երգացանկում հիմնականում Կոմիտաս էր, իսկ համերգներից ստացված ողջ հասույթը դարձյալ Կահիրեի ռուսական դեսպանատան միջոցով ուղարկվում էր Հայաստան: Պատերազմի տարիներին Կարմիր բանակի համար «Սևան» ընթերցասրահում կանանց խումբ էր ստեղծվել, որը տաք գուլպաներ ու ջեմպրեր էր գործում խորհրդային բանակի զինվորների համար: Հանգանակություններով նպաստել են նաև «Սասունցի Դավիթ» շարասյան ստեղծմանը: Երգիծանկարիչ Սվազլյանը նույնիսկ ծաղրանկարներով քննադատել է նրանց, ովքեր չէին մասնակցում կամ փորձում էին խանգարել «Սևան» միության հայրենանվեր գործունեությանը:

Երախտագետ դուստրը՝ տիկին Վերժինեն, դեռևս ասպիրանտ էր, երբ հրատարակեց իր առաջին գիրքը. «Դա իմ հայրիկի «Հայրենիքիս համար» ժողովածուն էր, որն ընդգրկում էր ոչ միայն իր հրապարակախոսական, հայրենասիրական բնույթի հոդվածները, ինչպես, օրինակ՝ «Ո՞ր օրվան կը սպասենք», «Ձեզի՛, աղեքսանդրիացիներ», «Ոտքի՛, առնական կեցվածքով», «Պետք է զարնել նշտրակը» (նշտրակ-նշտար-վիրահատական դանակ), ասել կուզի՝ հասունացած է Հայաստան մեկնելու հարցը, գաղութահայությունը պիտի հաստատվի հայրենիքում, այնտեղ է իր տեղը, քանի որ առանց հայրենիքի ազգը չի կարող հարատևել»: Նա չհարեց ոչ մի կուսակցության, հայրենիքը եղավ նրա միակ պաշտամունքը, ազգահավաքն ու հայրենաշինությունը՝ գերագույն նպատակը: Նախքան իր դիսերտացիայի տպագրությունը, 1965թ. տպագրած հոր գրքում տեղ էր գտել ոչ միայն հոդվածների ընտրանին, այլև «Ներգաղթը» պիեսը, ծաղրանկարների մի մասը (ի դեպ, հեղինակ է 90-ից ավելի նկարների): Ուշագրավ մի հանգամանք ևս. երբ գիրքը լույս տեսավ, գրքի ազդօրինակը դուստրը անթեղեց հոր շիրիմի մեջ՝ ի կատարումն որդիական պարտականության:

1904թ. Կեսարիայում ծնված Գառնիկ Սվազլյանն իր երազանքի հայրենիքում հանգրվանեց միայն 1948թ., որտեղ ապրեց ընդամենը չորս ամիս: Բայց որքան բեղուն ու արգասավոր եղան այդ ամիսները՝ ելույթներ ռադիոյով, գրական-հրապարակախոսական հոդվածներ «Խորհրդային Հայաստան» թերթում, նաև Հայաստանի գրողների միության անդամ դարձավ Ավետիք Իսահակյանի երաշխավորությամբ ու նրա հիացմունքին արժանանալով: Ճակատագրական այն օրը, երբ 18-ամյա պատանին հրդեհված Իզմիրից փրկվելու համար ծովը նետվեց, անհետևանք չանցավ. ծովի սառը ջրերում «վաստակած» ռևմատիզմը ախտահարեց նաև սիրտը: Իր կարճատև կյանքի վերջին չորս ամսվա մեջ երեք անգամ հիվանդանոցում պառկեց, որտեղ էլ շարունակում էր սուր հոդվածներ գրել՝ այս անգամ արդեն կապիտալիստական երկրների վճարովի բժշկական ծառայություններին հակադրելով խորհրդային երկրի ձրի բուժսպասարկումը: Հայ ժողովրդի արժանավոր զավակն իր մահկանացուն կնքեց 1948թ. Երևանում, ինչպես դուստրն է վկայում՝ «Հայրենիքս, զավակներս ասելով հանգավ…»:

**Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ**

**ԱՅԼԱԶԱՆ**

*Մանկավարժական*

# ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐ-

Առօրյա կյանքում հաճախ ենք ականատես լինում, թե ինչպես են երեխաները ոտքերը գետնին դոփելով և լաց ու կոծով պահանջներ ներկայացնում ծնողին: Իսկ ծնողն էլ շատ հաճախ բավարարում է երեխայի քմահաճույքը՝ կարծելով, որ ոչ տեղն է, ոչ էլ ժամանակը, կամ արդեն ուշ է դաստիարակելու համար: Եվ եթե երեխան զգում է, որ իր կամակորությամբ, խստապահանջությամբ, ցասումով հաղթում է ծնողին, ապա համարեք, որ ձևավորվել է մի կամակոր բռնակալ:

Կամակորությունն ու համառությունը բնավորության գծեր են, որոնց նախադրյալները ի հայտ են գալիս բոլոր անհատների մոտ: Սակայն երևույթի հանդեպ ճիշտ մոտեցումից են կախված դրա հետագա դրսևորումները: Կամակոր երեխան ձգտում է բավարարել իր քմահաճ ու անարդարացի ցանկությունը: Նա սովորաբար պահանջկոտ է ուրիշների նկատմամբ, իսկ իր նկատմամբ՝ ոչ: Բնավորության այս գիծը երեխայի մեջ ձևավորվում է հատկապես երեքից հինգ տարեկանում: Այդ տարիքում է երեխայի մեջ աստիճանաբար ձևավորվում և հաստատվում ինքնուրույն «ես»-ի պատկերացումը, որը անտեսել հնարավոր չէ: Ի դեպ, այս տարիքը բնորոշվում է որպես ճգնաժամային, բեկումնային, որին հատուկ նորագոյացությունն էլ հենց կամակորության առաջացումն է: Այն, ինչպես բնավորության ցանկացած գիծ, առաջանում է երեխայի կյանքի ընթացքում և այն դեպքում միայն, երբ կան համապատասխան պայմաններ և իրավիճակներ: Չնայած բնավորությունը բնածին չէ, մարդու կառուցվածքի բնական և նյարդային համակարգի առանձնահատկությունները արտահայտված են ինչպես նրա դրսևորումներում, այնպես էլ բնավորության գծերի ձևավորման գործընթացում:

Կամակորության առաջացման պատճառները տարբեր են: Այն կարող է առաջանալ երեխայի հիվանդության ժամանակ, երբ նա չի գիտակցում իր վատ զգալու պատճառը և դառնում է քմահաճ, կոպիտ, կամակոր, համառ: Կամակորության առաջացմանը նպաստում են նաև ծնողների կողմից երեխաներին ճնշելը, անտեղի պատժելը, մերժելը, ծեծելը, վիրավորանքը, նրանց ցանկությունների անտեղի արհամարհումը:

Հաճախ մեծերի կողմից անուշադրության մատնված երեխան կամակորություն է դրսևորում, որ իրեն նկատեն: Կամակորության առաջացման պատճառներից են նաև ծնողների կողմից երեխաներին անսահմանափակ ազատություն տալը, ոչ միասնական պահանջներ ներկայացնելը և չափազանց խիստ ռեժիմի պայմանները, որոնք երեխային դարձնում են նյարդային, կամակոր:

Ըստ այդմ էլ՝ բնավորության այդ բացասական դրսևորումները ուղղելու համար նախ պետք է իմանալ, թե սխալ դաստիարակության որ փուլում և ինչից է սկսվել ու ձևավորվել կամակորությունը, որից հետո ուղիներ փնտրել՝ այն վերացնելու համար:

Քանի որ, ինչպես գիտենք, յուրաքանչյուր երեխա ծնվում է որոշակի նյարդային համակարգի տիպով, որը բնավորության զարգացման նախադրյալներից է, ուրեմն՝ երեխային դաստիարակողները պետք է հաշվի առնեն նրա նյարդային համակարգի տիպը և գործեն այդ խառնվածքին համապատասխան վերաբերմունքով: Սակայն դա չի նշանակում, որ պետք է երեխայի խառնվածքը փոխելու խնդիր դնել. դա հակաբնական է: Երեխային դաստիարակելիս պետք է հաշվի առնել նրա խառնվածքը, ունակությունները, ընդունակությունները, աշխուժությունը, աշխատասիրությունը և հնարավորություն ստեղծել, որպեսզի երեխան ծախսի իր ներքին էներգիան, լիցքաթափվի և զգա ներքին հանգստություն:

Օրինակ՝ 5 տարեկան երեխան, որը չի ուզում կցվել խմբային պարապմունքներին կամ քնի ժամերին իր ակտիվությամբ գրավում է բոլորի ուշադրությունը, այսինքն՝ կամակորություն է դրսևորում, կարող է կազմակերպչական մեծ ջիղ և խմբի երեխաներին իրեն ենթարկեցնելու կարողություններ ունենալ: Ուրեմն՝ նրա լիդերային ունակությունները հաշվի առնելով՝ նրան կարելի է խմբի ավագ նշանակել և գործելու ու իր ունակությունները ցուցադրելու, իր ներքին էներգիան ծախսելու, իրեն դրսևորելու հնարավորություն տալ:

Ըստ այդմ էլ՝ կամակորությունից խուսափելու համար անհրաժեշտ է ստեղծել նորմալ հոգեկան վիճակներ՝ օրվա ռեժիմի պահպանում, բարի և լավ հարաբերություններ, համագործակցություն փոքրիկի և մեծերի միջև:

Շատ կարևոր է ծնողների, հարազատների և դաստիարակների համագործակցությունը: Այսինքն՝ այս կամ այն երևույթի հանդեպ միասնական մոտեցումը՝ հիմնված համոզմունքի, բացատրական մեթոդի, բարի զրույցի, համբերատարության, փաղաքշանքի և սիրո խոր զգացումի վրա: Նման ճիշտ մոտեցումների արդյունքում կամակորությանը տեղի է տալիս համառությունը, որը բնավորության ուժեղ կամքի հիմքն է:

**Դիանա ԱՂԱԼՅԱՆ**
**ՀՀ ԿԱԻ Ացախի մասնաճյուղի հոգեբանության մասնագետ, հ. 9 հիմն. դպրոցի դասվարակ**

# ԾՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՈՒՆԴԴ, ԳՈՐ-

Մարիետա Ջիվանշիրի Սարգսյանը ծնվել է 1955 թվականի հունիսի 25-ին Մարտակերտի շրջանի Մինգրելսկ գյուղում: 1972թ. ավարտել է Մաղավուզի միջնակարգ դպրոցը:

Սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի «Հայոց լեզու և գրականություն» բաժնում: Մանկավարժական գործունեությունը սկսել է 1989 թվականից Մարտակերտի շրջանի Ջագլիկի դպրոցից, որտեղ աշխատում է առայսօր՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի և փոխտնօրեն:

Այսօր նա 60 տարեկան է և շարունակում է ոչ պակաս եռանդով ու պատասխանատվությամբ աշխատել:

Հարգելի՛ գործընկեր, շնորհավորում ենք 60 - ամյա հոբելյանդ, մաղթում ենք առողջություն և նորանոր հաջողություններ:

*Ջագլիկի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*

*Տեսուչի գրառումներից*

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

* * *

Ա՛յ տղա, հանց պահումըս քեզ, հանցա յես յեկալըմ ծեռքերս ծալալ նստալ, մաթեմատիկա չըմ սվրցրալ, խե՞ խոսումչըս,-նեղացած ասաց ուսուցիչը:

- Ընգեր, պա տու ասալչըս, վեր ստուգողնեն կյան կուպրած կկենաք:

* * *

Ուսուցչուհին երեխային հարցրեց այբուբենը: Մի քանի անգամ փործեց արտասանել, ավա՜ղ, չստացվեց.

-Ա՜խր էս անդարը կիրալա հի՞նչ անե,- ջղայնացած ասաց փոքրիկը:

* * *

Բարև ձեզ, սիրելի՛ երեխաներ, ինչպե՞ս եք,-սիրալիր, գրականով հարցրեց ուսուցչուհին:

-Էդ ստուգողնեն կարողա՞ կյամըն,-հարցրեց երեխան:

-Ինչի՞ց իմացար, որ ստուգողներն ենք,- հարցրեց տեսուչը:

-Պա՞ տըննասչըս, ռուսերենա խուսեւ:

* * *

Տեսուչը մտավ դասարան և տեսավ իրար տփող երեխաներին, բացակայում էր ուսուցիչը:

-Գիդասըս, պարապեսընք,-ասաց համարձակ Դավոն:

* * *

Ուսուցչուհին հուզված, ջղայնացած և միաժամանակ երեխաներին խնդրելով ասում էր, որ լավ պատրաստվեն դասին:

-Գիդասըք, չէ՞, վեր ծզանսյա կախված իմ գնահատականը, վե՜ր տեսուչը գոհ չինի, ծեզ կախըմ տլան:

-Ա՛յ տղա, մին ինձ յեշի, տու հինչա՞վ կարողա ինձ օգնիս,- ասաց վերջում նստած ներառական երեխային:

-3 օր տասի չըմ կիլյան:

* * *

Երեխան ստիպել է տան անդամներին.

-Քեցեք տեսուչներին պերեք մեր տոն:

-Ախչի, տեղ չոնինք, շտե՞ղ պահինք:

-Կուխնումը,-տեղը գտավ երեխան:

* * *

Ո՞վ է նկարում-հարցրեց ուսուցչուհին

-Թումանյաննա Հովհաննեսը,-պատասխանեց աշակերտը:

-Իսկ ի՞նչ են հուշում նկարի տակ թվերը,- հարցրեց ուսուցչուհին:

-Սոտվուն համարներնա:

* * *

Թվարկի՛ր երկրաչափական պատկերներ,-հարցրեց ուսուցչուհին:

-Ուղղանկյուն, եռանկյուն, քառանկյուն, չուռանկյուն,-պատասխանեց երեխան:

-Ապրես՛, տղաս, -ասաց ուսուցչուհին:

* * *

Պապա քու անումդ էլ ա Միեր, Դավիթի՞նն էլ,-հարցրեց փոքրիկը:

Պապա հինչա Դավիթի անունը:

* * *

Ուսուցչուհին արտասանում է.

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Սա ի՞նչ է երեխաներ:

-Հրաշք,-պատասխանեց երեխան:

* * *

-Ո՞վ կարող է «զկեռ» բառով նախադասություն կազմել:

-Պապիս սաղ օրը զկռտումա,- ասաց առաջին դասարանցին:

* * *

Ա՛յ տղա, դմբո՞յս:

-Չէ, ընգեր, Հթերքեցեյմ:

* * *

Ա՛յ տղա, ինչո՞ւ ընկերոջդ խփեցիր,-նախատեց տեսուչը:

-Պա հինչ անիմ, ուրան հերթը չի իլալ, յես բիդի ըսեյի, դասատուն տիչի սվրցրալ:

* * *

-Անըմդ հինչա՞,- տեսուչին հարցրեց երեխան:

-Սուսան:

-Վի՜յ, ինձ նման Ռուզա՞ն,- ուրախ ասաց երեխան:

* * *

-Խոզը մեզ հի՞նչ օգուտա տամ,- հարցրեց ուսուցիչը:

-Անպետք կենդանիյա, խտուրու տեղը ճղճղամա, պապուն քունիարամ անում,- ասաց չարաճճի Վաչոն:

* * *

Ուսուցիչը հարցրեց երեխաներին.

-Ի՞նչ պանիր եք ուտում:

-Հռոմեական, մացառելո, հորած, հոլանդական, իտալական...

-Մարատ ջան, դու ի՞նչ պանիր ես ուտում:

-Շենու պաներ, պատասխանեց խելոք, համեստ, սրամիտ Մարատը:

* * *

Երեխաները դժվարացան տալ ուղղանկյան ու քառանկյան նմանությունն ու տարբերությունը:

-Երեխանե՛ր, ես հիմա կապացուցեմ...

-Հարկավեր չի, հարկավեր չի, խե մունք քեզ հվտասչը՞նք,-ասաց վերջում նստած երկտարեցին:

* * *

Ա՛ խոխա, տու քու կյանքումդ ինձետե մին լավ պեն ըրած կա՞ս,-երկտարեցի երեխային է դիմում ուսուցչուհին:

-Հա, պաhինչ, միետե քու տասին ծեռքըմ պցրցրալ:

* * *

Դասի թեման էր «Անտառի բնակիչները»: Ուսուցչուհին լարված բացատրում էր դասը, նկարագրում կենդանիներին, բացատրում տված նրանց օգտակարության մասին: Հանկարծ՝ արձագանք:

-Հա՛ պա հինչ, վեր քու վխճրնետ կերած ընին, տի պատմելչըս:

* * *

Գրավորի ժամին երեխան ընդհատեց ուսուցչին.

-Ընգե՛ր, Ծովիկին մին օրիշ վախտ էլ Կոմիտասընք չէ՞ ասում:

-Չէ՜, անպետք, -սաստեց ուսուցչուհին, Ծովինար ենք ասում:

* * *

Դպրոցում հինչը՞ք սվերում, ա խոխա,- հարցրեց հայրը:

-Հալամ վեշմին պեն:

**Ներկայացրեց**
**Սուսաննա ՀՈՎՍԵՓՅԱՆԸ**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ ՏԵՍՈՒՉ**

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 04.07.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: